

ሀላግ ግብርና
አሰሪ

مارزق

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

337 SUገኮ, 2014, ቡኮኮ 2 (380) - VOL. XXXIII N° 2

السنة الثالثة والثلاثون - العدد رقم 2



Brasil
2014

ՄՈՆՏԻՎԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

■ 1978-ի Արժանթինի մոնտիվալեն ետք, առաջին անգամ ըլլալով մոնտիվալը տեղի կ'ունենայ Հարաւային Ամերիկայի մէջ:

■ Մոնտիվալներու պատմութեան բոլոր ախոյեանները՝ Ուրուկուէյ, Իտալիա, Գերմանիա, Պրագիլ, Անգլիա, Արժանթին, Ֆրանսա եւ Սպանիա ներկայ են այս մոնտիվալին:

■ Պրագիլ միակ կազմն է, որ մասնակցած է բոլոր մոնտիվալներուն:

■ Գերմանիա մոնտիվալներու ընթացքին կատարած է ամենէն շատ թիւով մրցումներ (99 մրցում):

■ Նախկին երեք ախոյեաններ՝ Անգլիա, Իտալիա եւ Ուրուկուէյ կը գտնուին միեւնոյն խմբակին մէջ:

■ Այս մոնտիվալին միակ նորեկ կազմը Պոսնիան է: Ան առաջին անգամ ըլլալով ներկայ է մոնտիվալին:

■ Խրուաթիա, Պելճիբա, Ռուսիա, Քոլումպիա, Էքուատոր, Իրան եւ Քոսթա Ռիբա բացակայ էին 2010-ի մոնտիվալէն եւ ներկայ են Պրագիլի մոնտիվալին:

■ Մոնտիվալներու նախորդ տիտղոսներուն բաժանումը եղած է ի նպաստ եւրոպացիներուն: Անոնք 10 անգամ տիրացած են տիտղոսին, մինչ հարաւային ամերիկացիք՝ 9 անգամ:

■ Մեքսիքայէն, Իտալիայէն, Ֆրանսայէն եւ Գերմանիայէն ետք Պրագիլ հինգերորդ երկիրն է, որ երկրորդ անգամ ըլլալով կը կազմակերպէ մոնտիվալ:

■ Մոնտիվալին ախոյեան հանդիսացող կազմը պիտի ստանայ 35 միլիոն ամերիկեան տոլար, իսկ երկրորդ հանդիսացող խումբը՝ 25 միլիոն տոլար:



ԱՅՍ ԹԻԻԸ

33-րդ ՏԱՐԻ, 2014, ԹԻԻ 2 (380)



ՄՈՆՏԻՎ 2014

■ Խմբագրական 2

Ա. ԽՄԲԱԿ

■ Պրագիլ	3
■ Խրուաթիա	4
■ Մեքսիքա	5
■ Քամերուն	6

Բ. ԽՄԲԱԿ

■ Սպանիա	8
■ Հոլանտա	9
■ Չիլի	10
■ Աւստրալիա	11

Գ. ԽՄԲԱԿ

■ Քոլումպիա	13
■ Յունաստան	14
■ Փղոսկրեայ Ափունք	15
■ Ճափոն	16

Դ. ԽՄԲԱԿ

■ Ուրուկուէյ	18
■ Քոսթա Ռիբա	19
■ Անգլիա	20
■ Իտալիա	21

Ե. ԽՄԲԱԿ

■ Չուիցերիա	23
■ Էքուատոր	24
■ Ֆրանսա	25
■ Հոնտուրաս	26

Զ. ԽՄԲԱԿ

■ Արժանթին	28
■ Պոսնիա	29
■ Իրան	30
■ Նիժերիա	31

Է. ԽՄԲԱԿ

■ Գերմանիա	33
■ Փորթուգալ	34
■ Ղանա	35
■ Ս. Նահանգներ	36

Ը. ԽՄԲԱԿ

■ Պելճիբա	38
■ Ալճերիա	39
■ Ռուսիա	40
■ Հարաւային Քորէա	



Մարգական ամսաթերթ
Հրատարակութիւն՝
Հ.Մ.Ը.Մ.Ի
Կեդրոնական Վարչութեան

ԽՄԲԱԳԻՐ
Վիզէն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Սեւան Նազարեան (Ֆրանսա),
Սեդա Պէշլեան-Սաղապազարեան,
Մարո Քէշիշեան (Արեւմտեան
Մ. Նահանգներ), Յակոբ
Խաչատուրեան (Արեւելեան
Մ. Նահանգներ), Տիրան
Շահինեան (Գանատա), Ռազմիկ
Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Գրիգորիս Պողարեան
Պատրիկ Կիւլպէնկեան
Արօ Մոսիկեան

ԹԵՔՆԻԿ ԱՆՉՆԱԿԱԶՄ

Էջադրում - Արշո Պալեան
Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
Colour Separation - Photogravure
Paklayan

Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ՀԱՍՏԷ

Պուրճ Համուտ, Նոր Մարաշ
«Սեւան» Շէնք, Գ. Յարկ
Հեռ: 00961 1 248043, 260117
E-mail: marzig@homenetmen.org
P.O. Box: 80486 B. Hammoud,
Lebanon

ՏՐԻՌԻՄ-ՎԱՃԱՌ-Բ

Լիբանանի մէջ թերթին
ցրումը կը կատարուի
յատուկ ցրուիչով (71 239209):
Վաճառքի սակն է 4000 Լ.ո.
Տարեկան բաժանորդագրութեան
սակ ձշողած է Լիբանան \$32
Միջին Արեւելեան եւ
Եւրոպական երկիրներ \$70,
Մ. Նահանգներ եւ Աւստրալիա \$75

ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթը ուղղակի Լիբանանէն
կը ստացուի անձնական
բաժանորդագրութեամբ:
Լիբանանէն դուրս թերթին
բաժանորդագրութիւնը
կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.Ի Մեկուսի
եւ Շրջանային Վարչութիւնները:

www.homenetmen.org



Խ
Մ
Բ
Ա
Գ
Ր
Ա
Կ
Ա
Ն

ՏՕՆԱՀԱՆԴԷՍԸ

Մոնտիալ է դարձեալ ֆութպոլի սպասուած տօնը, տօնահանդէսը: Աշխարհի չորս ծագերուն տօնական ցնծութիւն է 32 օր:

Մարդկութիւնը կ'ապրի մոնտիալի կշռոյթով, մրցակցութեան, բախտի եւ յաղթանակի անսահման վայելքով: Երազն ու իրականութիւնը խառնուած են իրարու: Մարզասէրներ ֆութպոլի անցեալը, ներկան ու ապագան կը փորձեն տեսնել մոնտիալի ընդմէջէն:

Բոլոր ճամբաները կը տանին... Պրագիլ, ուր մոնտիալի կազմակերպիչները կը խոստանան ներկայացնել անմոռանալի ու գեղեցիկ ասարտականներ: Գեղեցիկ ասարտականներ՝ գեղեցիկ ֆութպոլի հայրենիքին մէջ, ուր Փելէն եւ Կարինչան, Չիքոն եւ Սոկրատեսը, Ռոմարիոն եւ Ռոնալտոն ֆութպոլի պատմութեան փառքը հիւսած են յաղթանակի իրենց սամպաներով:

Գրաւիչ է մոնտիալը, կախարդական նկատուելու աստիճան: Մոնտիալի «փոքրիկ կախարդ»ին՝ կլոր գնդակին շուրջ կը միանան աշխարհի բոլոր ժողովուրդները: Կը խօսին անոր լեզուով: Կ'ենթարկուին նոյն օրէնքներուն եւ պատիժներուն: Բարաքականութեան բաժնածը կը միացնէ մոնտիալը: Կրօնական, ցեղային թէ գաղափարական բոլոր տարբերութիւնները կը ջնջէ ան:

Իր գրաւչութեամբ, մոնտիալը կը մօտեցընէ ժողովուրդներու աշխարհագրական հեռաւորութիւնները, կը հեռացնէ հարուստ-աղքատի անոնց ընկերային պատնէշները: Կանաչ դաշտերու շուրջ բոլորը երկրպագուները կը դառնան միեւնոյն «կրօնք»ին՝ ֆութպոլին: Մոնտիալը աշխարհի նորագոյն այս «կրօնք»ին կարեւորագոյն «ծիսակատարութիւններէն» մէկն է:

Մոնտիալը նորութիւններու մրցաշարքն է նաեւ: Բոլորը անհամբեր կը սպասեն չորս տարին անգամ մը ծնող ֆութպոլի նոր աստղերուն («կրօնք»ի չաստուածներուն), մարզիչներու նորարար խաղաոճերուն, համակիրներու գիտարար խենթութիւններուն: Ուշագրաւ նորութիւնները կը հետաքրքրեն բոլորը: Արիւնը կ'ենայ մարզասէրներու երակներուն մէջ, հոգիները կը լեցուին խանդավառութեամբ, սիրտերը՝ անձկութեամբ.

- Օ՛ն, յառա՛ջ, դէպի փոքր քառակուսի, հարուածէ՛, կոռո՛ւ...

Կովէն ետք կարգը կու գայ հռչակին ու համբաւին: Մոնտիալը ամէնէն աւելի փայլելու եւ անուն շահելու տեղն է: Մոնտիալին փայլող ֆութպոլի աստղեր կրնան գնուիլ ու ծախուիլ աստղաբաշխական գումարներով:

Անշուշտ, կայ նաեւ ազգային արժանապատուութեան հարցը: Մոնտիալի մասնակից խումբերը կը ցանկան ու կ'երազեն իրենց հայրենիքները վերադարձին դիմաւորուիլ օղակայաններու մայր դռներէն, յաղթական հերոսներու վայել ընդունելութեամբ: Ո՞վ պիտի փափաքէր դուրս գալ օղակայաններու ետեւի դռներէն, լուրիկի եւ հաւկիթի տարափներու տակ...:

Կամենալը սակայն այս պարագային կարենալ չէ: Մրցակից 32 խումբերուն համար ալ օրացոյցի բախտի վերջին թերթիկը կախուած է պատէն: Խումբերէն 31-ը պիտի պատռեն ու նետեն գայն մոռացութեան գիրկը, իսկ միայն մէկը, փրցուածին փոխարէն, 13 Յուլիս 2014-ին տեղ պիտի զետեղէ մոնտիալի ախոյեան հռչակման ի՛ր թերթիկը:

Բախտն ու բաժակը խումբերէն մէկուն կրնան ժպտիլ: Մենք կը սպասենք այդ ժպտին, Պրագիլի մոնտիալի գեղեցկագոյնին:

ՊՐԱԳԻԼ



Մոնտիալի մասնակցություն.- Քսան անգամ (1930, 1934, 1938, 1950, 1954, 1958, 1962, 1966, 1970, 1974, 1978, 1982, 1986, 1990, 1994, 1998, 2002, 2006, 2010)

Արդիւնքներ.- Ախոյեան (1958, 1962, 1970, 1994, 2002), երկրորդ (1950, 1998), երրորդ (1938, 1978), չորրորդ (1974)

Մրցում.- 97 մրցում՝ 67 յաղթանակ, 15 հաւասարություն, 15 պարտություն
Կոլ.- Նշանակած 210 կոլ, ստացած 88 կոլ
Մարզիչ.- Լուիս Ֆելիպե Սքոլարի
Խմբապետ.- Թիակո Սիլվա
Պաշտօնական տարագ.- Դեդին



Կ՝ականկալեն որ ան վեցերորդ անգամ ըլլալով արժանանայ տիտղոսին:

Սակայն պէտք նայիլ նաեւ մետալին միւս երեսը: Պրագիլի կազմը այն չէ, ինչ որ էր 1960-ական, 1980-ական կամ 1990-ական թուականներուն: Անուանի աստղեր գրեթէ չկան ներկայ կազմին մէջ ու պրագիլցի աստղերը՝ միջազգային իմաստով կը նկատուին լաւ ֆուլթպոլիստներ:

Պրագիլ, իբրեւ կազմակերպիչ, առանց գտումի մրցումներու կը մասնակցի մոնտիալին: Բարեբախտաբար, առաջին հանգրուանին ան չունի դժուար մրցակիցներ: Անոր մրցակից կազմերը ֆուլթպոլի աշխարհին մէջ ճանչցուած են իբրեւ միջակ կամ տկար կազմեր:

Մոնտիալի բացման մրցումը պրագիլցիք պիտի կատարեն քիչ մը անակնկալներ ստեղծող Խրուաթիոյ կազմին դէմ: 2006-ին երկու կազմերը հանդիպեցան իրարու հետ եւ խրուաթները թէեւ պարտուեցան, բայց աւելի տպաւորիչ մրցում կատարեցին՝ քան պրագիլցիք: Քամերունցիք տոկուն կազմ են եւ կրնան քիչ մը յոգնեցնել պրագիլցիները, թէեւ մոնտիալներու պատմութիւնը ցոյց կու տայ, որ Պրագիլ դժուարութիւն չէ ունեցած փորձիկեան խումբերու դէմ: Մինչ Մեքսիքա հաւանական է որ Խրուաթիոյ կողքին մրցի երկրորդ դիրքին համար եւ դժուար թէ գիջի Պրագիլի դէմ:

2002-ի մոնտիալին Պրագիլի հինգերորդ տիտղոսը ապահոված մարզիչ Աքոլալի վերադարձած է եւ պրագիլցիք մեծ յոյսեր կապած են անոր վերադարձին: Անոնք իրենց առաքելութիւնը չեն տեսներ միայն Բ. հանգրուան անցնիլը: Տիտղոսին տի-

Անկասկած, մոնտիալի մասին խօսելու կամ գրելու ժամանակ կարելի չէ մտահան ընել տիտղոսներու մրցանակակիր եւ բոլոր մրցաշարքերու միշտ ներկայ Պրագիլի անունը:

Ամէնէն հարուստ անցելով եւ աշխարհի տարածքին միլիոնաւոր համակիրներու փաղանգ ունեցող Պրագիլ այս մոնտիալին կը մասնակցի իբրեւ կազմակերպիչ երկիր եւ բոլորը, անկասկած,

Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Խուլիո Սեզար (34)	78 մասնակցութիւն (0 կոլ)	Թորոնթօ
Ճեֆերսոն (31)	9 մասնակցութիւն (0 կոլ)	Պոթաֆոկօ
Տէնի Ալվէս (30)	73 մասնակցութիւն (5 կոլ)	Պարսելոնա
Թիակօ Սիլվա (29)	45 մասնակցութիւն (2 կոլ)	Փարիզ Ս. ժ.
Տէյվիտ Լուիզ (26)	34 մասնակցութիւն (0 կոլ)	Չելսի
Մարսելլօ (25)	29 մասնակցութիւն (4 կոլ)	Ռ. Մատրիտ
Տանթէ (30)	11 մասնակցութիւն (2 կոլ)	Պ. Միլնիթս
Ռաֆինա (28)	2 մասնակցութիւն (0 կոլ)	Պ. Միլնիթս
Ռամիրէզ (27)	41 մասնակցութիւն (4 կոլ)	Չելսի
Օսքար (22)	29 մասնակցութիւն (9 կոլ)	Չելսի
Փաոլինիօ (25)	25 մասնակցութիւն (5 կոլ)	Թոթենհամ
Լուիզ Կոլսթալօ (26)	17 մասնակցութիւն (1 կոլ)	Վոլսպոլրկ
Պեռնար (21)	10 մասնակցութիւն (1 կոլ)	Շախիոր Տոնեցք
Ֆեռնանտինիօ (28)	6 մասնակցութիւն (1 կոլ)	Մ. Սիթի
Ուիլիան (25)	5 մասնակցութիւն (1 կոլ)	Չելսի
Նեյմար (22)	47 մասնակցութիւն (30 կոլ)	Պարսելոնա
Հալք (27)	33 մասնակցութիւն (8 կոլ)	Չենիթ
Ֆրէտ (30)	31 մասնակցութիւն (11 կոլ)	Յիւլմինենսէ
Ճօ (27)	15 մասնակցութիւն (5 կոլ)	Աթլետիքօ Միլէյրօ
Մաքսուէլ (32)	7 մասնակցութիւն (0 կոլ)	Փարիզ Ս. ժ.
Լուքաս Լէյվա (27)	24 մասնակցութիւն (0 կոլ)	Լիվրփուլ
Հեռնանէս (28)	23 մասնակցութիւն (2 կոլ)	Ինթէր Միլան
Լուքաս Մուրա (21)	31 մասնակցութիւն (4 կոլ)	Փարիզ Ս. ժ.
Ռոպինիօ (30)	92 մասնակցութիւն (27 կոլ)	Ա. Սէ. Միլան

րանալու համար անոնք պիտի պայքարին մինչեւ վերջ եւ պիտի չուզեն որ պատմութիւնը ինքզինք կրկնէ, երբ

1950-ի աւարտականին պրապարտուեցան Ուրուկուէյի կազմէն:

ԽՐՈՒՄԹԻՒՄ



Մոնտիալի մասնակցութիւն.- Երեք անգամ (1998, 2002, 2006)
Արդիւնքներ.- Երկրորդ (1998)
Մրցում.- 13 մրցում՝ 6 յաղթանակ, 2 հաւասարութիւն, 5 պարտութիւն
Կոլ.- Նշանակած 15 կոլ, ստացած 11 կոլ

Մարզիչ.- Նիքո Բովաչ
Խմբապետ.- Տարիօ Սրնա
Պաշտօնական տարագ.- Կարմիր ծերմակ

1998-ին, երբ խրուաթները առաջին անգամ ըլլալով կը մասնակցէին մոնտիալին, ոչ ոք կ'ակնկալէր որ անոնք պիտի կրնան հասնիլ կիսա-

լարտական եւ գրաւել պատ-
լարեր 3-րդ դիրքը: Այդ սե-
րունդի ներկայացուցիչները՝ Սիւքէր, Եարնի, Պոպան, Վլայովիչ անջնջելի յիշատակներ ձգեցին թէ՛ խրուաթ եւ թէ՛ առհասարակ ֆուտպո-



լի սիրահարներուն յիշողութեան մէջ:

Յաջորդ երկու մոնտիալներուն անոնք դարձեալ ներկայ էին, բայց արդէն «ոսկէ սերունդ»ը հեռացած էր: Ճիշդ է, որ անոնք գեղեցիկ ֆուտպոլ կարողացան ներկայացնել, սակայն առաջին

հանգրուանէն դուրս մնացին:

Զտումի մրցումներուն խրուաթները շատ դժուարութիւններ չունեցան: Անոնք «յոզնեցան» պելճիքացիներուն եւ սկովտիացիներուն դէմ, բայց եւ այնպէս գրաւեցին իրենց խմբակին 2-րդ դիրքը եւ ապահովեցին մոնտիալի իրենց տոմարը:

Մարզիչ Քովաչ (որ մօտիկ անցեալին խումբին փլէյմէյքըրն ու խմբապետն էր) իր տրամադրութեան տակ ունի բարձր մակարդակի ֆուտպոլիստներ: Վեթերաններ՝ Սրնա, Օլիչ եւ էտուարտօ, Ռէայի միջնապահ Մոտրիչի հետ կը հանդիսանան խումբին ողնայարը եւ շարժիչ ուժը: Ինչպէս միշտ, այս կազմին խաղացողներուն մեծամասնութիւնն ալ մաս կը կազմէ եւրոպական ակումբներու, ինչ որ յաւելեալ ուժականութիւն կու տայ ազգային խումբին:

Խրուաթները կը գտնուին Ա. Խմբակին մէջ, խմբակից ունենալով կազմակերպիչ Պրազիլը, Կեդրոնական Ամերիկայի մնայուն ներկայացուցիչ Մեքսիքան եւ Ափրիկէի «Անպարտելի առիւծները»՝ Քամբերուը:

Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Սթիփ ֓լեթիքոսա (35)	109 մասնակցութիւն (0 կոլ)	Ռոսսթով
Տանիէլ Սուպասիչ (29)	6 մասնակցութիւն (0 կոլ)	Մոնաքօ
Տարիօ Սրնա (31)	111 մասնակցութիւն (21 կոլ)	Շ. Տոնեցք
Վետրան Գորլուքա (28)	71 մասնակցութիւն (4 կոլ)	Լոքոմոթիւ
Իվան Սթրինիչ (26)	32 մասնակցութիւն (0 կոլ)	Տնեպր
Տեօան Լովրէն (24)	23 մասնակցութիւն (2 կոլ)	Սաութհէմթըն
Տոմակոյ Վիտա (24)	22 մասնակցութիւն (1 կոլ)	Տինամօ Քիել
Կորտըն Աքընլտենֆելտ (29)	20 մասնակցութիւն (0 կոլ)	Փանաթինայքոս
Սիմէ Վրսայքօ (22)	5 մասնակցութիւն (0 կոլ)	Ճենովա
Հրվոյ Միլիչ (24)	4 մասնակցութիւն (0 կոլ)	Ռոսսթով
Լուքա Մոտրիչ (28)	73 մասնակցութիւն (8 կոլ)	Ռ. Մատրիտ
Իվան Ռաքիթիչ (26)	60 մասնակցութիւն (9 կոլ)	Սելիլլա
Օնէէն Վուքոյեւիչ (30)	54 մասնակցութիւն (4 կոլ)	Տինամօ Քիել
Տանիէլ Փրանիչ (32)	48 մասնակցութիւն (0 կոլ)	Փանաթինայքոս
Իվան Փերիսիչ (25)	27 մասնակցութիւն (1 կոլ)	Վոլսպուրկ
Մաթէօ Քովաչիչ (19)	8 մասնակցութիւն (0 կոլ)	Ի. Միլան
Մէյթ Մալէս (25)	1 մասնակցութիւն (0 կոլ)	Ռիէքա
Իվիքա Օլիչ (34)	90 մասնակցութիւն (18 կոլ)	Վոլսպուրկ
Ժոզիպի Սիմիւնիչ (36)	105 մասնակցութիւն (3 կոլ)	Օլիմպիաքոս
էտուարտօ (31)	62 մասնակցութիւն (29 կոլ)	Շ. Տոնեցք
Մարիօ Մանժուքիչ (27)	48 մասնակցութիւն (13 կոլ)	Պ. Միլնիլի
Անթէ Ռեպիչ (20)	3 մասնակցութիւն (1 կոլ)	Յիորենթինա
Նիքօ Քրանսետար (29)	81 մասնակցութիւն (16 կոլ)	Ք. Փ. Ռէյնճըրզ
Նիքոլա Քալինիչ (25)	20 մասնակցութիւն (6 կոլ)	Տնեպր



Յունիս 12-ին պիտի կատարուի մոնտիալի բացման մրցումը: Այդ օր խրոնակները իրենց առաջին մրցումը պիտի կատարեն կազմակերպիչ Պրագիլի դէմ: Մարզիչ Քոփաչի տղոց ուսերուն ծանր պարտականութիւն դրուած է: Անոնք պիտի պայքարին Պրագիլի ախորժակներուն եւ բացման մրցումին լարու-

ծութեան դէմ: Ութը տարիներ առաջ, առաջին հանգրուանի խաղերուն, երկու կազմերը մրցեցան իրարու դէմ: Ճիշդ է, որ խրոնակները աւելի տպաւորեցին այդ մրցումին, բայց յաղթողը եղաւ Պրագիլը: Մեքսիքայի դէմ մրցումը եւս պիտի ըլլայ բաւական դժուար: Վերջին տասնամեակին մեքսիքացիք

լաւ կազմերով կը մասնակցին մոնտիալներուն եւ կրնան անհաճոյ կացութեան մատնել խրոնակները: Քամերունցիք եւս ունին լաւ կազմ եւ կ'ուզեն իրենց մասնակցութիւնը չսահմանափակել միայն 3 մրցումով:

Ճատրակի տախտակը յիշեցնող իրենց կարմիր-ճերմակ խրոնակներով տարագով, խրո-

նակները այս մոնտիալին պիտի փորձին կրկնել 16 տարի առաջուան իրենց նուաճումը: Անոնք յամառ պայքարողներ են եւ գեղեցիկ ու պարզ ֆուտպոլ ներկայացնողներ:

1998-ին, մարզիչ Պլասելի յայտարարութիւնը թերեւս միշտ պէտք է յիշել. «Խրոնակները կը սիրեն անակնկալներ ստեղծել»:

ՄԵՔՍԻՔԱ



FIFA WORLD CUP
Brasil

Մոնտիալի Մասնակցութիւն.- 14 անգամ (1930, 1950, 1954, 1958, 1962, 1966, 1970, 1978, 1986, 1994, 1998, 2002, 2006, 2010)

Արդիւնքներ.- Քառորդ աւարտական (1970, 1986)

Մրցում.- 49 մրցում՝ 12 յաղթանակ, 13 հաւասարութիւն, 24 պարտութիւն
Կոլ.- նշանակած 52 կոլ, ստացած 89

կոլ
Մարզիչ., Միկել Չերերա
Խմբապետ.- Ռաֆայել
Մարքեզ
Պաշտօնական տարագ.- Կանաչ

Մոնտիալներու մասնակցութեան Մեքսիքայի պատմութիւնը եթէ հարուստ չէ նուաճումներով, ապա անոր մասնակցութիւնը շատ հետեւողական է: Մեծ երկիրներու մասնակցութեան նման, ան գրեթէ միշտ ներկայ եղած է այս մրցաշարքերուն: Հակառակ անոր որ ան 14 անգամ մասնակցած է, սակայն Մեքսիքա նուաճումներ չունի: Միակ յաջողութիւնները 1979-ին եւ 1986-ին են, երբ մեքսիքացիք հասան քառորդ աւարտական, այդ ալ իրենց երկրին մէջ կազմակերպուած մոնտիալներուն: Այլապէս անոնք կարգ մը մոնտ-



Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Կիլերմօ Օչոա (28)	56 մասնակցութիւն (0 կոլ)	Աժաքսիօ
Խոսէ Քորոնա (33)	32 մասնակցութիւն (0 կոլ)	Քրուզ Ազուլ
Քարլոս Մալսիտօ (34)	119 մասնակցութիւն (10 կոլ)	Ի. Ա. Էն. Էլ. Լէոն
Ռաֆայել Մարքէզ (35)	118 մասնակցութիւն (15 կոլ)	Պ. Լեւերքուզըն
Անտրէս Կուարտատօ (27)	100 մասնակցութիւն (14 կոլ)	Ամերիքա
Յրանսիսքօ Ռոտրիկէզ (32)	91 մասնակցութիւն (1 կոլ)	Էսփանիոլ
Հեքթոր Մորենօ (26)	50 մասնակցութիւն (1 կոլ)	Ամերիքա
Փօլ Ակիլար (28)	27 մասնակցութիւն (3 կոլ)	Փորթօ
Տիէկօ Ռեյէս (21)	12 մասնակցութիւն (0 կոլ)	Ամերիքա
Միկէլ Լայոն (25)	11 մասնակցութիւն (0 կոլ)	Լէոն
Քարլոս Փենիա (24)	14 մասնակցութիւն (2 կոլ)	Քրուզ Ազուլ
Մարքօ Յապիան (24)	11 մասնակցութիւն (4 կոլ)	Լէոն
Լուիս Մոնթէս (27)	11 մասնակցութիւն (2 կոլ)	Փորթօ
Հեքթոր Հերերա (24)	10 մասնակցութիւն (0 կոլ)	Ամերիքա
Խուան Մետինա (30)	7 մասնակցութիւն (0 կոլ)	Թոլուքա
Իսաաք Պրիզուելա (23)	5 մասնակցութիւն (0 կոլ)	Լէոն
Խոսէ Վասքէզ (26)	2 մասնակցութիւն (0 կոլ)	Վիլառէալ
Ճիովանի Տոս Սանթոս (25)	73 մասնակցութիւն (14 կոլ)	Մ. Եունայթըտ
Խաւիէր Հերնանտէզ (25)	58 մասնակցութիւն (35 կոլ)	Սանթոս Լակոնա
Օրիպէ Փերելթա (30)	30 մասնակցութիւն (16 կոլ)	Ամերիքա
Ռաուլ Խիմենէզ (23)	22 մասնակցութիւն (4 կոլ)	Լէոն
Ճոնի Մակալոն (32)	54 մասնակցութիւն (3 կոլ)	Մոնթերի
Խեսիլս Զաւալա (26)	30 մասնակցութիւն (2 կոլ)	

խաչներու կրած են ծանր պարտութիւններ եւ գլխիկոր վերադարձած են հայրենիք:

Սակայն, վերջին քանի մը մոնտիալներուն մեքսիքացիներուն մակարդակը զգալիօրէն բարելաւուած է: Այլեւս անոնք չեն նկատուիր դիւրին մրցակիցներ: Ընդհակառակը, յաճախ նեղ կացութեան կը մատնեն եւրոպական թէ հարաւ ամերիկեան անուանի կազմերը:

Այս մոնտիալին ալ մեքսիքացիք կը մասնակցին նոր յոյ-

սերով եւ ակնկալութիւններով: Իբրեւ Կեդրոնական Ամերիկայի գլխաւոր ներկայացուցիչը, Մեքսիքա ունի բաւական լաւ կազմ: Ճիշդ է, որ անոր մարզիկներուն ջախջախիչ մեծամասնութիւնը կու գայ տեղական ակումբներէ, բայց եւ այնպէս մեքսիքացիք կը նկատուին յամառ մրցակից մը: Կազմին ամէնէն նշանաւոր օտարականը ի հարկէ Մ. Եունայթըտի իսպանացի Զերնանտէզն է: Երկար տարիներ Պարսայի մաս կազմած մար-

զիչ Մարքէզ մեծ պարտականութիւն վերապահած է Հերնանտէզի:

Մեքսիքա կը գտնուին Ա. խմբակին մէջ: Անոր մրցակիցներն են կազմակերպիչ Պրագիլը, անակնկալներ ըստեղծող եւրոպացին՝ Խրոնուաթիան եւ Ափրիկէի «Անպարտելի առիւծներ»ը՝ Քամբուլը: Այս խմբակին մէջ Պրագիլ գլխաւոր թեկնածուն է: Անոր ընկերակցելու պայքար պիտի մղեն մնացեալ երեք կազմերը: Հաւանական

է որ պայքարը բուռն ըլլայ խրոնուաթիաներուն եւ մեքսիքացիներուն միջեւ: Անոնց միջեւ տեղի ունենալիք մրցումը կրնայ ճշդել երկրորդ թեկնածուն Բ. հանգրուանի համար:

Վերջին երկու մոնտիալներուն երկրորդ հանգրուան հասած մեքսիքացիք պիտի փափաքին այս տարի քայլ մը եւս առաջ անցնիլ ու նոր նուաճում մը արձանագրել Ֆութպոլի պատմութեան իրենց էջերուն վրայ:

ՔԱՄԵՐՈՒՆ



Մոնտիալի մասնակցութիւն.- Վեց անգամ (1982, 1990, 1994, 1998, 2002, 2010)
Արդիւնքներ.- Քառորդ աւարտական (1990)
Մրցում.- 20 մրցում՝ 6 յաղթանակ, 7 հաւասարութիւն, 9 պարտութիւն
Կոլ.- Նշանակած 17 կոլ, ստացած 34 կոլ

Մարզիչ.- Վուլքեր Ֆինք
Խմբապետ.- Սամուէլ Էթու
Պաշտօնական տարագ.- Կանաչ

Քամբուլը Ափրիկէի ամէնէն ծանօթ եւ տպաւորիչ կազմն է, որ մասնակցած է մոնտիալներուն: Արդարօրէն, «Անպարտելի առիւծներ» տիտղոսին արժանացած է ափրիկեան այս կազմը: 1982-ին անոնք իրենց առաջին մասնակցութեան ստեղծեցին մեծագոյն անակնկալը, երբ առանց պարտութեան հրաժեշտ տուին մոնտիալի առաջին հանգրուանին: Իսկ 1990-ին, անոնք քառորդ աւարտականի մրցումին դժուարութեամբ պարտուեցան Անգլիայէն:

Բնականաբար, Քամբուլի այս իրազորութիւնները սերտօրէն առնչուած են անոր ամէնէն հռչակաւոր

Ֆութպոլիստ՝ Ռոժէ Միլայի հետ, որ մրցանիչ մը հաստատեց 1990-ի մոնտիալին, երբ 43 տարեկան հասակին, իբ-

րեւ պահեստի մարզիկ, դաշտ ներկայացաւ եւ կոլ նշանակեց:
Այդ տարիներէն ետք քա-

Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Կինտի Ասամպէ (28)	11 մասնակցութիւն (0 կոլ)	Կենկան
Չարլզ Լըթանտեէ (31)	7 մասնակցութիւն (0 կոլ)	Գոնիասփոր
Սէմի Նտիոք (24)	1 մասնակցութիւն (0 կոլ)	Տեթիէսփոր
Նիքոլաս Նքուլու (24)	44 մասնակցութիւն (0 կոլ)	Մարսէյ
Օրելիէն Չետիու (28)	30 մասնակցութիւն (1 կոլ)	Կալաթասարայ
Հէնրի Պետիմօ (29)	28 մասնակցութիւն (0 կոլ)	Լիոն
Պենուա Ասու Էքոթօ (30)	20 մասնակցութիւն (0 կոլ)	Ռէյնճըրզ
Տէնի Նունքէօ (27)	13 մասնակցութիւն (0 կոլ)	Պէշիկթաշ
Կաէթան Պոնկ (25)	11 մասնակցութիւն (0 կոլ)	Օլիմպիաքոս
Ալլան Նիոմ (25)	6 մասնակցութիւն (0 կոլ)	Կրան Ռատա
Ժան Արմէլ Քանա Պլիք (24)	5 մասնակցութիւն (0 կոլ)	Ռէն
Ֆրանք Պանիաք (18)	0 մասնակցութիւն (0 կոլ)	Պարսելոնա Բ.
Ժան Մաքուէ (30)	66 մասնակցութիւն (5 կոլ)	Ռէն
Ալբքս Սոնկ (26)	43 մասնակցութիւն (0 կոլ)	Պարսելոնա
Լենտրի Նկէմօ (28)	37 մասնակցութիւն (3 կոլ)	Պորտօ
Էյոնկ Էնօ (28)	34 մասնակցութիւն (2 կոլ)	Անթալիասփոր
Ժոէլ Մաթիպ (22)	19 մասնակցութիւն (0 կոլ)	Շալքէ
Սամուէլ Էթու (33)	115 մասնակցութիւն (55 կոլ)	Չելսի
Մոհամատու Իտրիսու (34)	37 մասնակցութիւն (6 կոլ)	Քայզըրսլաութըրն
Մաքսիմ Չուփօ Մոթինկ (25)	23 մասնակցութիւն (9 կոլ)	Մայնց
Վենսան Ապուպաքը (22)	22 մասնակցութիւն (2 կոլ)	Լորիան
Պենճամին Մուքանտիօ (25)	22 մասնակցութիւն (2 կոլ)	Նանսի
Իտրիս Քարլոս Քամենի (30)	70 մասնակցութիւն (0 կոլ)	ՄալաԿա
Սթեֆան Մպիա (27)	48 մասնակցութիւն (3 կոլ)	Սելիլլա
Փիէր Ուէպօ (32)	53 մասնակցութիւն (17 կոլ)	Տեներպահչէ



մերունցիք շարունակեցին ներկայութիւն ըլլալ մոնտիալներու, սակայն արդէն անոնք մեծ կարելիութիւններ չունէին եւ իրենց ճամբորդութիւնները երկար չտեւեցին:

Այս մոնտիալին անոնք պիտի փորձեն վերականգնել իրենց նախորդներուն իրագործումները: Մարգիչ Ֆինք իր տրամադրութեան տակ ունի բաւական ատակ մարզիկներ, որոնք ի վիճակի են լաւ արդիւնքներ արձանագրելու: Պարսայի նախկին եւ Չելսիի ներկայ յառաջապահ էթու, իր կողքին ունենալով Սոնկը, Մաթիպը, Մոթինկը եւ այլն, Միլայի յաջորդը կը նկատուի: Էթու եւ ընկերները արդէն ծանօթ անուններ են եւրոպական ֆութպոլի սիրահարներուն եւ անուանի ակումբներու մաս



կազմելով, անոնք կը նկատուին փնտռուած ֆութպոլիստներ:

Քամերունցիք խմբակից ունին կազմակերպիչ Պրազիլը, Խրուաթիան եւ Մեքսիքան: Նման դժուար մրցամրցումները աւարտեցին հաւասարութեամբ եւ հպարտօ-

փորձեն անկարելին: Նոյնիսկ առաջին հանգրուանէն դուրս մնալու պարագային, անոնք պիտի փորձեն իրագործել 1982-ի իրենց նուաճումը, երբ առաջին հանգրուանի երեք մրցումները աւարտեցին հաւասարութեամբ եւ հպարտօ-

րէն հրաժեշտ տուին մոնտիալին: Դժուար, բայց նախանձելի իրագործում է, որուն համար քամերունցիք պիտի պայքարին Պրազիլի մոնտիալին:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL




PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

PAVILLON MONCEAU



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

StudioVICKEN 2005 PARIS

ՄՊԱՆԻԱ



FIFA WORLD CUP
BRASIL

Մոնտիալի մասնակցություն.- 13 անգամ (1934, 1950, 1962, 1966, 1978, 1982, 1986, 1990, 1994, 1998, 2002, 2006, 2010)

Արդիւնքներ.- Ախոյեան (2010), 4-րդ (1950)

Մրցում.- 58 մրցում՝ 28 յաղթանակ, 12 հաւասարություն, 18 պարտություն

Կոլ.- Նշանակած 88 կոլ, ստացած 59

կոլ

Մարզիչ.- Վիչենթե Տել Պոսքե
Խմբապետ.- Իքեր Բագիաս
Պաշտօնական տարագ.- Կարմիր

2008-ի եւ 2012-ի Եւրոպայի ախոյեան, 2010-ին աշխարհի ախոյեան: Աննախընթաց իրագործում մը ո՛չ միայն Սպանիոյ, այլեւ ընդհանրապէս ազգային խումբի մը համար: Նման տիտղոսներով Սպանիա կը մեկնի Պրագիլ:

Նախքան այս տիտղոսները, Սպանիա մեծ յաջողութիւններ չէ արձանագրած մոնտիալներուն: Նոյնիսկ 1982-ին, երբ մոնտիալը տեղի ունեցաւ Սպանիոյ մէջ, սպանացիք դժուարութեամբ անցան Բ. հանգրուան: Այդ



թուականէն ետք կը սկսի սպանական ֆուտպոլին վերելքը: Յաջորդող քանի մը տարիներուն սպանական խումբերը հետզհետէ կը սկսին տիրական ներկայութիւն դառնալ եւրոպական մրցաշարքերուն եւ տիտղոսներ կը գրպանեն: ազգային խումբը իր կարգին կը սկսի գառնալ դժուար մրցակից եւ, վերջապէս, այս բոլորին գումարը 2010-ին կը յանգի աշխարհի ախոյեանու-

թեան տիտղոսին: Հակառակ տիտղոսակիր ըլլալու իր հանգամանքին, Սպանիա մասնակցեցաւ զրտումի մրցումներուն: Ան դիւրութեամբ յաղթեց մրցակիցներուն: Միայն ֆրանսացիներուն դէմ էր, որ սպանացիք քիչ մը կաղացին: Երթին, Սպանիոյ մէջ հաւասարելէ ետք, դարձին՝ Փարիզի մէջ անոնք յաղթեցին Մոլիէրի գաւակներուն:

Մարզիչ Տէլ Պոսքէ մեծ փոփոխութիւններ չէ կատարած աշխարհի ախոյեան հանդիսացած կազմին մէջ: Յետապահ Փուլոյ տարիքի բերմամբ հրաժեշտ տուած է: Կասկածելի է նաեւ վեթերան յառաջապահ եւ նախորդ մոնտիալին խումբին կոլսքորըր Վիլյալի ներկայութիւնը: Այս երկուքին դիմաց՝ Ա. Մատրիտի կոլսքորըր եւ վտանգաւոր յառաջապահ պրագիլցի Տիէկո Քոսթա սպանական հպատակութիւն ստանալով միացաւ Սպանիոյ՝ զօրացնելով անոր յառաջապահ գիծը: Նորեկ Քոսթա եթէ լաւապէս կարենայ հասկցուիլ Ինիեսթայի եւ մանաւանդ «մախսթրօ» Չաւրի հետ, ապա Սպանիան կասեցնելը դժուար պիտի ըլլայ: Սպանիա ունի աշխարհի լաւագոյն միջնապահ գիծը: Պարսայի եռեակը՝ Չաւրի,

Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Իքեր Բագիաս (32)	153 մասնակցութիւն (0 կոլ)	Ռ. Մատրիտ
Փեպէ Ռէյնա (31)	30 մասնակցութիւն (0 կոլ)	Նափոլի
Սերժիօ Ռամոս (28)	115 մասնակցութիւն (9 կոլ)	Ռ. Մատրիտ
Ռաուլ Ալպիոլ (28)	45 մասնակցութիւն (0 կոլ)	Նափոլի
Ճորտի Ալպա (25)	25 մասնակցութիւն (5 կոլ)	Պարսելոնա
Ժեռար Փիքէ (27)	59 մասնակցութիւն (4 կոլ)	Պարսելոնա
Խուան Յրան (29)	6 մասնակցութիւն (1 կոլ)	Ա. Մատրիտ
Չաւրի Հեռնանտէս (34)	130 մասնակցութիւն (13 կոլ)	Պարսելոնա
Չաւրի Ալոնսօ (32)	109 մասնակցութիւն (15 կոլ)	Ռ. Մատրիտ
Անտրէաս Ինիեսթա (29)	94 մասնակցութիւն (11 կոլ)	Պարսելոնա
Սեսք Ֆապրեքաս (26)	87 մասնակցութիւն (13 կոլ)	Պարսելոնա
Տաւրտ Սիլվա (28)	78 մասնակցութիւն (20 կոլ)	Մ. Սիթի
Խեսիլս Նաւաս (28)	34 մասնակցութիւն (3 կոլ)	Մ. Սիթի
Սերժիօ Պուսքէց (25)	61 մասնակցութիւն (0 կոլ)	Պ. Միլնիի
Քոքէ (22)	7 մասնակցութիւն (0 կոլ)	Ա. Մատրիտ
Փետրօ Ռոտարիկէզ (26)	37 մասնակցութիւն (14 կոլ)	Պարսելոնա
Ալվարօ Նեկրետօ (28)	20 մասնակցութիւն (10 կոլ)	Մ. Սիթի
Տիէկօ Քոսթա (25)	1 մասնակցութիւն (0 կոլ)	Ա. Մատրիտ
Ալվարօ Արպեոլա (31)	56 մասնակցութիւն (0 կոլ)	Ռէալ Մատրիտ
Յեռնանտէ Լորենթէ (29)	23 մասնակցութիւն (7 կոլ)	Եռվենթուս
Յեռնանտօ Թորէս (30)	106 մասնակցութիւն (36 կոլ)	Չելսի
Ռոպէրթօ Սոլտասօ (28)	12 մասնակցութիւն (7 կոլ)	Թրիենհամ
Խուան Մաթա (25)	31 մասնակցութիւն (9 կոլ)	Մ. Եռնայթըտ



Ինիեսթա եւ Ֆապրեբաս, «օտարական» Տաւիտ Սիլվա-յի հետ, վարժ են մրցակից կազմերը աքցանելու եւ իրենց խաղը պարտադրելու անոնց: Յետսապահներ Ռամոս, Փիքէ, Ալպա, իրենց ետին ունենալով փորձառու Քազիասը, պիտի փորձեն առաւելագոյն չափով անառիկ պահել իրենց բերդը:

Սպանացիք իրենց առաջին մրցումը պիտի կատարեն Հոլանտայի դէմ: Այս մրցումը կրկնութիւնը պիտի ըլլայ 2010-ի աւարտականին: Հոլանտացիք պիտի փորձեն վրէժ լուծել, իսկ սպանացիք պիտի փաստեն, որ տիտղոսը պատահականօրէն չչահեցան: Չիլիի եւ Աւստրալիոյ դէմ մրցումները աւելի հան-

դարտ մթնոլորտի մէջ պիտի կատարեն անոնք, անշուշտ միշտ ի մտի ունենալով որ մոնտիալը կը սկսի Ա. հանգրուանէն:

Վերջին քանի մը տարիներուն, Պարսայի, Ռէպլի եւ Ա. Մատրիտի յաջողութիւնները եւրոպական մրցաշարքերուն, ինչպէս նաեւ անոնց խաղամակարդակը եւ սպա-

նացի ֆուլթպոլիստներուն անհատական յաջողութիւնները պատճառ են, որ բոլորը կազմակերպիչ Պրագիլի կողքին Սպանիան մատնանշեն իբրեւ տիտղոսին գլխաւոր թեկնածու: Սպանացիք պիտի փորձեն յուսախաբութիւն չպատճառել եւ բաժակը կրկին ըբրել Մատրիտ:

ՀՈՒԱՆՏԱ



FIFA WORLD CUP
Brasil

Մոնտիալի մասնակցութիւն.- 9 անգամ (1934, 1938, 1974, 1978, 1990, 1994, 1998, 2006, 2010)

Արդիւնքներ.- Երկրորդ (1974, 1978, 2010), չորրորդ (1998)

Մրցում.- 43 մրցում՝ 22 յաղթանակ, 10 հաւասարութիւն, 11 պարտութիւն

Կոլ.- Նշանակած 71 կոլ, ստացած 44 կոլ

Մարզիչ.- Լուիս Կան Կաալ
Խմբապետ.- Ռոպին Կան Փըրսի
Պաշտօնական տարագ.- Նարնջագոյն

1974-ի, 1978-ի եւ 2010-ի մոնտիալներու աւարտականին հասած եւ պարտուած Հոլանտայի կազմը իր նարնջագոյն տարագով եւ ներկայացուցած ամբողջական ֆուլթպոլով սիրաշահած է միլիոնաւորներու համակրանքը:

Ամէնէն շատ խօսուած է 1974-ի կազմին մասին: Շատ շատերը այդ խումբը ֆուլթպոլի պատմութեան մէջ կը նկատեն ամէնէն կատարեալն ու անկրկնելին: 1970 թուականի Պրագիլի խմբապետ Քարլոս Ալպերթօ կ'ըսէ. «Միակ խումբը, որ դաշտին վրայ ամէն ինչ կ'ընէր, այդ ալ 1974-ի Հոլան-



Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Մ. Սքելեթենպոլըկ (31)	54 մասնակցութիւն (0 կոլ)	Ֆուլհամ
Թիմ Քրոլ (26)	5 մասնակցութիւն (0 կոլ)	Նիւքէսըլ
Կրէկորի Վան Տէր Վիէլ (26)	37 մասնակցութիւն (0 կոլ)	Փարիզ Ս. ժ.
Ռոն Վլաար (29)	22 մասնակցութիւն (1 կոլ)	Ասթոն Վիլլա
էրիք Փիթերս (25)	17 մասնակցութիւն (0 կոլ)	Սթոք Սիթի
Տարիլ Եանմաաթ (22)	9 մասնակցութիւն (0 կոլ)	Ֆէյլնոլըտ
Տէլի Պլինտ (24)	9 մասնակցութիւն (0 կոլ)	Այաքս
Ռաֆայէլ Վ. Տէր Վաարդ (31)	109 մասնակցութիւն (25 կոլ)	Համպուրկ
Ուէսլի Շնայտըր (29)	97 մասնակցութիւն (26 կոլ)	Կալաթասարայ
Արիէն Ռոպէն (30)	73 մասնակցութիւն (22 կոլ)	Պ. Միլնիթս
Նայճըլ Տը Եոնկ (29)	69 մասնակցութիւն (1 կոլ)	Ա. Սէ. Միլան
Պրոնս Մարթինզ Ինտի (22)	13 մասնակցութիւն (2 կոլ)	Ֆէյլնոլըտ
Ճոն Հէյթինկա (30)	87 մասնակցութիւն (7 կոլ)	Ֆուլհամ
Ճեթրօ Ուիլիըմզ (20)	11 մասնակցութիւն (0 կոլ)	Փ.Ս.Վ.
Քեւըն Սթրոկման (24)	25 մասնակցութիւն (3 կոլ)	Ա. էս. Ռոմա
Տըրք Քոլյթ (33)	98 մասնակցութիւն (24 կոլ)	Ֆեներպահչէ
Ռոպին Վան Փըրսի (30)	82 մասնակցութիւն (41 կոլ)	Մ. Եոնայթըտ
Ժերմէն Լենս (26)	20 մասնակցութիւն (7 կոլ)	Տինամօ Քիեւ
Քրասեան Հիւնթելաար (30)	60 մասնակցութիւն (34 կոլ)	Շալքէ
Մարքօ Վան Կինքըլ (21)	2 մասնակցութիւն (0 կոլ)	Չելսի
Ռիքարտօ Վան Ռիյն (22)	7 մասնակցութիւն (0 կոլ)	Այաքս
Ճեթրի Պրոնմա (22)	7 մասնակցութիւն (0 կոլ)	Փ.Ս.Վ.
Լուչիանօ Նարսինկ (23)	7 մասնակցութիւն (2 կոլ)	Փ.Ս.Վ.

տայի կազմն էր»: Այդ ան-
զուգական կազմին ալֆան
եւ օմեկան Եոհան Քրույֆն
էր, որ կը դասուի աշխարհի
լաւագոյն ֆուլթպոլիստնե-
րու շարքին:

1980-ականներու վերջե-
րուն հոլանտացիք նոր որա-
կով մը ներկայացան աշխար-
հին: Ճիշդ է, որ 1990-ի մոնտ-
իալին ոչինչ իրագործեցին,
սակայն յաջողեցան տիրանալ
«Եուրօ 1988»-ին:

Այդ թուականներէն ետք
հոլանտացիք գրեթէ միշտ
ներկայ են մեծ մրցաշարքե-
րուն: 1998-ի մոնտիալին մէկ
քայլ մնացած էր դէպի աւար-
տական, երբ կիսաւարտա-
կանին անոնք փենալթինե-
րով պարտուեցան Պրագիլէն:
2010-ի մոնտիալի նախօրեա-
կին անոնք թեկնածու չէին
նկատուեր, սակայն յաղթա-

նակներու շարքը զիրենք տա-
րաւ մինչեւ աւարտական,
ուր յետ երկարաձգման,
ստացան կոլ մը եւ 3-րդ ան-
գամ ըլլալով կորսնցուցին
տիտղոսը: Հոլանտայի հա-
մակիրները երկար ժամանակ
պիտի չներեն Ռոպէնի, որ
երկու անգամ առանձինն
մնալով Քազիասի դէմ չկա-
րողացաւ կոլ նշանակել:

«Եուրօ-2012»ը կատարեալ
ձախողութիւն մը եղաւ Հո-
լանտայի համար: Մարզիչ
Վան Մաւրիք փոխարինուե-
ցաւ հոլանտական ֆուլթպոլին
քաջածանօթ եւ փորձառու
մարզիչ Լուիս վան Կաալով:

Չտուժի մրցումներուն
հոլանտացիք դժուարութիւն
չունեցան: Անոնք շատ դիւ-
րութեամբ գերազանցեցին
իրենց խմբակիցները՝ Ռու-
մանիան, Հունգարիան, էս-

թոնիան եւ այլն: Աւելին,
անոնց մրցումները յատկանշ-
ւեցան կոլերու առատու-
թեամբ, ինչ որ յարձակողա-
կան ֆուլթպոլի ցուցանիչ է:

Վան Կաալ փոփոխու-
թիւններ կատարած է կազ-
մէն ներս: Յետսապահ գիծի
վեթերանները հեռացած եւ
անոնց տեղը գրաւած են երի-
տասարդ եւ խոստմնալից
մարզիկներ: Միակ «վերապ-
րող» վեթերանը Հէյթինկան
է: Վան Կաալ գրեթէ բոլոր
գիծերուն վրայ «ներարկած
է» նոր աւելն: Բայց խումբին
սիրտն ու սիւնը տակաւին կը
մնան Շնայտրըրը, Վան Փեր-
սին, Ռոպէնը, Տը Եոնկըր եւ
Վան Տէր Վաարդը: Շնայտրը
կը նկատուի նարնջագոյն մե-
քենային շարժակը: Եթէ ան
կարենայ 2010-ի իր խաղար-
կութիւնը ցուցադրել, ապա

«նարինջները» կրնան նոր
անակնկալներ ստեղծել: Յա-
ռաջապահ գիծին վրայ հո-
լանտացիք դժուարութիւն
չունին: Անոնք միշտ ալ ունե-
ցած են եւ ունին կոլ նշանա-
կող յառաջապահներ:

Հոլանտա իր առաջին մրր-
ցումը պիտի կատարէ ախոյ-
եան Սպանիոյ դէմ եւ պիտի
փորձէ 2010-ի վրէժը լուծել:
Յաջորդ երկու մրցումնե-
րուն, անոնք դարձեալ պիտի
ուզեն յաղթել, որպէսզի երկ-
րորդ հանգրուանին խուսա-
փին Պրագիլի հանդիպելէ:

Այսօր, 2010-ի նախօրեա-
կին նման, ոչ ոք կը խօսի Հո-
լանտայի թեկնածութեան
մասին: Վստահաբար, Հո-
լանտայի ֆուլթպոլիստները
տարբեր բան կը մտածեն:
Անոնք պիտի փորձեն կրկնել
2010-ի իրենց սխրանքը:

ՉԻԼԻ



Մոնտիալի մասնակցութիւն.- Ութ
անգամ (1930, 1950, 1962, 1966, 1974,
1982, 1998, 2010)

Արդիւնքներ.- Երրորդ դիրք (1962)

Մրցում.- 29 մրցում՝ 9 յաղթանակ, 6
հաւասարութիւն, 14 պարտութիւն

Կոլ.- Նշանակած 34 կոլ, ստացած 45
կոլ

Մարզիչ.- Խորխէ Սամփաուի
Խմբապետ.- Բլաուտիօ Պրաւօ
Պաշտօնական տարագ.- Կարմիր

Չիլիցիք յաջորդաբար երկ-
րորդ անգամ ըլլալով կը մաս-
նակցին մոնտիալի: Այս մէկը
Չիլիի պատմութեան մէջ
իրագործում մըն է, եթէ զանց
առնենք 1962-ը (նկատի ունե-
նալով որ 1962-ի մոնտիալը
տեղի ունեցաւ Չիլիի մէջ):

Չիլիցիք մեծ իրագոր-
ծումներ չունին մոնտիալնե-
րու ընթացքին: Անոնց ֆուլթ-
պոլը չէ յաջողած նուաճել
դրացիներուն՝ Արժանթինի
եւ Պրագիլի մակարդակը:
Ընդհակառակն, անոնք միշտ
ալ մնացած են անոնց շուքին



տակ: Կար ժամանակ, երբ չի-
լիցիք ճանչցուած էին իբրեւ
կոշտ խաղարկութեան խոր-
հրդանիչներ:

Այս մոնտիալն ալ կրնայ
նախորդներուն նման ոչ
փայլուն արդիւնքներու շա-
րունակութիւնը ըլլալ:
Անոնք ունին դժուար մրցա-
կիցներ: Ախոյեան Սպանիա
եւ փոխ ախոյեան Հոլանտա
Չիլիի խմբակիցներն են:
Անոնք իրենց առաջին մրցու-

մը պիտի կատարեն Աւստր-
րալիոյ դէմ: Այս մրցումին
նուագագոյն սայթաքում մը
եւ չիլիցիք արդէն կրնան
գտնուիլ տհաճ կացութեան
մէջ: Յաջորդ երկու մրցում-
ները, յաջորդաբար Սպանիոյ
եւ Հոլանտայի դէմ, բաւա-
կան յոգնեցուցիչ պիտի ըլլան
չիլիցիներուն համար: Չիլի-
ցիք եթէ նախատեսած են
անցնիլ Բ. հանգրուան, ապա
պէտք է համոզուած ըլլան որ



պարտութիւնը արգիլուած է:

Այս իրադրութեան համար Չիլի ունի լաւ յառաջապահներ: Սանչէզ եւ Վարկաս յուսալից կոլ նշանակողներ են: Մարգիչ Պրաւօ պիտի օգտուի անոնց կարեւորութիւններէն: Երկու երկու աստղերը՝ Վիտալ եւ Լսլա մեծ աշխատանք ունին կատարելիք, որպէսզի չիլիցի համակիրները տխուր չհեռանան կանաչ դաշտերէն:

Ճիշդ է, որ չիլիցի ֆուտպոլիստներէն մեծ թիւ մը մաս կը կազմէ օտար եւ մասնաւորաբար եւրոպական ակումբներու, սակայն անոնք ոչ այնքան փայլուն ֆուտպոլիստներ են եւ ազգային խումբին հետ դժուար խմբակի մը մէջ գտնուելով, հաւանական է որ անոնց ներկայութիւնը երկար չվայելենք մոնտիալին:

Անուն եւ Տարիք

- Քլաուտիօ Պրաւօ (30)
- Ճոնի Հերերա (32)
- Քրիսթոֆօր Թոսելլի (25)
- Կոնզալօ Եարա (28)
- Կէրի Մետէլ (26)
- Մաուրիցիօ Լսլա (25)
- Մարքոս Կոնզալէս (33)
- Էօթենիօ Մենա (25)
- Խոսէ Ռոխաս (30)
- Օսվալտօ Կոնզալէս (29)
- Մաթիաս Տեռնանտէս (27)
- Ժան Պոստոլ (29)
- Մարք Կոնզալէս (29)
- Խորխէ Վալտիվիա (30)
- Արթուրօ Վիտալ (26)
- Քարլոս Քամոնա (27)
- Ֆապիան Օրելանա (28)
- Խոսէ Տոլենզալիտա (29)
- Չարլզ Արանկիզ (24)
- Ֆելիպէ Կիլթիերէզ (23)
- Ֆրանչիսքօ Սիլվա (28)
- Ալեքսիս Սանչէզ (25)
- Էտուարտօ Վարկաս (24)
- Մաուրիցիօ Փինիլլա (30)
- Տաւիտ Փիցարօ (34)

Հաւաքական եւ Կոլ

- 45 մասնակցութիւն (0 կոլ)
- 7 մասնակցութիւն (0 կոլ)
- 4 մասնակցութիւն (0 կոլ)
- 64 մասնակցութիւն (3 կոլ)
- 59 մասնակցութիւն (5 կոլ)
- 45 մասնակցութիւն (2 կոլ)
- 28 մասնակցութիւն (2 կոլ)
- 23 մասնակցութիւն (3 կոլ)
- 18 մասնակցութիւն (1 կոլ)
- 13 մասնակցութիւն (0 կոլ)
- 60 մասնակցութիւն (14 կոլ)
- 58 մասնակցութիւն (5 կոլ)
- 48 մասնակցութիւն (4 կոլ)
- 56 մասնակցութիւն (4 կոլ)
- 53 մասնակցութիւն (8 կոլ)
- 42 մասնակցութիւն (1 կոլ)
- 24 մասնակցութիւն (2 կոլ)
- 22 մասնակցութիւն (1 կոլ)
- 19 մասնակցութիւն (2 կոլ)
- 16 մասնակցութիւն (1 կոլ)
- 11 մասնակցութիւն (0 կոլ)
- 66 մասնակցութիւն (22 կոլ)
- 28 մասնակցութիւն (11 կոլ)
- 25 մասնակցութիւն (5 կոլ)
- 40 մասնակցութիւն (3 կոլ)

Ակումբ

- Ռէալ Սոսիէտատ
- Իւ Տը Չիլի
- Իւ Քաթոլիքա
- Ն. Տորէսթ
- Քարտիֆ Սիթի
- Երկվենթոս
- Ֆլամենկօ
- Սանթոս
- Իւ Տը Չիլի
- Իւ Տը Չիլի
- Ֆիորենթինա
- Ուիլլան
- Իւ Տը Չիլի
- Փալմէյրաս
- Երկվենթոս
- Աթալանթա
- Սելթա Վիլի
- Քոլօ Քոլօ
- Ինթերնասիոնալ
- Թվենթէ
- Օսասունա
- Պարսելոնա
- Վալենսիա
- Քալիարի
- Ֆիորենթինա

ՄՄՏՐԱԿ



Մոնտիալի մասնակցութիւն.- Երեք անգամ (1974, 2006, 2010)

Արդիւնքներ.- Երկրորդ հանգրուան (2006)

Մրցում.- 10 մրցում՝ 2 յաղթանակ, 3 հաւասարութիւն, 5 պարտութիւն

Կոլ.- Նշանակած 8 կոլ, ստացած 17 կոլ

Մարզիչ.- Անժէ Փոսթեքօլլու

Խմբապետ.- Միլ ճետինաք

Պաշտօնական տարագ.- Գոց դեղին

Աւստրալիացիք այս մոնտիալին կը մասնակցին նախորդ երկու մոնտիալներու տրամադրութիւններով: Անոնց առաջին փորձառութիւնը բաւական տխուր էր, սակայն իրենց երկրորդ մասնակցութեան անոնք կարողացան ստեղծել լաւ անակրն-

կալ մը իրենց համակիրներուն եւ անցնիլ Բ. հանգրուան, ուր պարտուեցան հետագային ախոյեան դարձած Իտալիայէն:

Աւստրալիացիք սակայն կը գտնուին բաւական դժուար խմբակի մը մէջ: Նա-



խորդ մոնտիալի ախոյեանն ու փոխ ախոյեանը իրենց մրցակիցներն են, իսկ չիլիցիք ալ նոյնքան ախորժակներ ունին՝ որքան մնացեալ երեք կազմերը: Աւստրալիոյ կազմը իր առաջին մրցումը պիտի կատարէ Չիլիի դէմ: Այս մրցումին պարտուողը գրեթէ հրաժեշտ տուած պիտի ըլլայ մոնտիալին: Երկրորդ մրցումին աւստրալիացիք

մրցակից պիտի ունենան հոլանտացիները, որոնք նոյնքան հզօր են, որքան որ էին չորս տարի առաջ: Ապա պիտի պայքարին ախոյեան Սպանիոյ դէմ: Այս վերջինը, յաջորդաբար երկրորդ անգամ ըլլալով, պիտի փորձէ պահել տիտղոսը եւ, հետեւաբար, առաջին հանգրուանին սխալի առիթ պիտի չտայ: Ահա նման մրցակիցներ ունե-

նախով Աւստրալիա կը գլխաւորեն շատ դժուար առաքելութեան մը դիմաց:

Ճիշդ է, որ ազգային խումբին խաղացողներուն մեծամասնութիւնը մաս կը կազմէ օտար ակումբներու, սակայն աւստրալիացիք աստղեր չունին: Անոնց խաղացողները մաս կը կազմեն ո՛չ հռչակաւոր ակումբներու, որոնք կրնան լաւագոյն պարագային որոշ մակարդակի խաղ ցուցադրել: Սակայն ձեռնիտաք, Քահիլ, Քրուզ եւ ընկերները պիտի փորձեն աշխարհին ապացուցել, որ հեռուոր ափի մը վրայ գտնուելով, Աւստրալիա իր արժանի տեղը ունի Փութպոլի աշխարհին մէջ:

Անուն եւ Տարիք


- Մէթիու Պրայըն (21)
- Պրէտ Ճոնզ (32)
- Միշէլ Լանկերաք (25)
- Լիւք Ուիլքշայըր (32)
- Մէթիօ Սփիրանովիչ (25)
- Ռայըն Մըքկոուըն (24)
- Իվան Տրանյիչ (26)
- Ճէյսըն Տէյվիտսըն (22)
- Քըրթիս Կուտ (21)
- Ալեքս Ուիլքընսըն (29)
- Պրէթ Հոլմըն (30)
- Մէթ ՄըքՔէյ (31)
- Միլ Ճենիտաք (29)
- Մարք Միլիկըն (28)
- Տարիօ Վիտտուիչ (26)
- Թոմի Օար (22)
- Ճէյմս Հոլլանտ (24)
- Թոմ Ռոճիչ (21)
- էտըմ Սարոթա (25)
- Օլիվըր Պոզանիչ (25)
- Մասիմօ Լուոնկօ (21)
- Թիմ Քահիլ (34)
- Մէթիու Լէքի (23)
- Ռոպի Քրուզ (25)
- Ճոշուա Քենետի (31)

Յաւաքական եւ Կոլ

- 5 մասնակցութիւն (0 կոլ)
- 4 մասնակցութիւն (0 կոլ)
- 3 մասնակցութիւն (0 կոլ)
- 79 մասնակցութիւն (8 կոլ)
- 17 մասնակցութիւն (0 կոլ)
- 8 մասնակցութիւն (0 կոլ)
- 7 մասնակցութիւն (0 կոլ)
- 5 մասնակցութիւն (1 կոլ)
- 1 մասնակցութիւն (0 կոլ)
- 1 մասնակցութիւն (0 կոլ)
- 63 մասնակցութիւն (9 կոլ)
- 45 մասնակցութիւն (1 կոլ)
- 43 մասնակցութիւն (4 կոլ)
- 27 մասնակցութիւն (2 կոլ)
- 21 մասնակցութիւն (2 կոլ)
- 13 մասնակցութիւն (1 կոլ)
- 12 մասնակցութիւն (0 կոլ)
- 9 մասնակցութիւն (0 կոլ)
- 3 մասնակցութիւն (0 կոլ)
- 2 մասնակցութիւն (0 կոլ)
- 1 մասնակցութիւն (0 կոլ)
- 67 մասնակցութիւն (31 կոլ)
- 6 մասնակցութիւն (1 կոլ)
- 28 մասնակցութիւն (3 կոլ)
- 33 մասնակցութիւն (17 կոլ)

Ակումբ

- Քլայպ Պրիւթ
- Լիվըրփուլ
- Պ. Տորթմունտ
- Տինամօ Մոսկուա
- Ս. Ուոնտրըրզ
- Լիւնենկ Թայշան
- Պրիսպան Ռոար
- Հերակլէս Ալմելօ
- Մ. Եունայթըտ
- Հիւնտայ Մոթորզ
- Ալ Նասըր
- Պրիսպան Ռոար
- Քրիսթըլ Փելէյս
- Մելպուռն Վիթթորի Սիոն
- Իւթրէիթ
- Աւստրիա Վիեննա
- Մելպուռն Վիթթորի
- Իւթրէիթ
- Լիւզէմ
- Սուինտըն Թաուն
- Ռէտ Պուլզ
- Ֆ.Ս.Վ. Տրանքֆորթ
- Պ. Լեւերքուզըն
- Ն. Կրամփուս



Elegance Plus

Shoes, Bags,
Fashion Accessories
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.

ՔՈՒՈՄՊԻԱ



Մոնտիալի մասնակցություն.- 4 անգամ (1962, 1990, 1994, 1998)

Արդիւնքներ.- Երկրորդ հանգրուան (1990)

Մրցում.- 13 մրցում՝ 3 յաղթանակ, 2 հաւասարություն, 8 պարտություն

Կոլ.- Նշանակած 14 կոլ, ստացած 23 կոլ

Սարգիշ.- Խոստ Փեքրոմէն

Խմբապետ.- Մարիո Եփփէս

Պաշտօնական տարագ.- Դեղին

Քոլումպիոյ ազգային խումբին մասին խօսելու ժամանակ կարելի չէ չճիշել անոր 1990-ական թուականներու տարօրինակ բերդապահ Հիկուիթան եւ երկար ու գանգուր մազերով գեղեցիկ փոխանցումներու տէր միջնապահ Վալտերաման:

Այդ տարիներէն արդէն իսկ քսան տարիներ անցած են ու Քոլումպիոյ ֆուտպոլը նահանջի մէջ է: 16 տարուան բացակայութենէ ետք անոնք կը վերադառնան նոր տեսքով, նոր խաղացողներով ու նոր յոյսերով:

Մարգիշ Եփփէս յաջողած է կազմել երիտասարդ կազմ մը, որ գտումի մրցումներուն ինքզինք փաստեց եւ յաջողեցաւ մոնտիալի իր տոմսը ապահովել: Խաղացողներուն մեծ մասը կու գայ եւրոպական ակումբներէ, ինչ որ կրնայ իր դրական ազդեցութիւնը ձգել անոնց մակարդակին եւ արդիւնքներուն վրայ:

Բարեբախտութիւն է թերեւս, որ Քոլումպիա չի գտնուիր այնքան ալ դժուար խմբակի մը մէջ: Թէ՛ մարգիշը եւ թէ՛ խաղացողները գիտակից են այս իրականութեան եւ պիտի ուզեն առնը-

լազն կրկնել իրենց նախորդներուն՝ Վալտերամայի եւ Հիկուիթայի 1990-ի իրագործումը եւ անցնիլ Բ. հանգրուան:

Իրենց առաջին մրցումին քոլումպիացիք պիտի մրցին



Յոնաստանի դէմ, որ կը նըկատուի Գ. խմբակի գլխաւոր թեկնածուն: Այս մրցումին եթէ քոլումպիացիք յաջողին անառիկ պահել իրենց բերդը, ապա անոնք մեծ ուստում մը կատարած կ'ըլլան դէպի յաջորդ հանգրուան: Անոնց երկրորդ մրցումը պիտի ըլլայ վերջին տարիներու ափ-

րիկեան լաւագոյն կազմերէն ֆղոսկրեայ Ափունքի դէմ: Հոս քոլումպիացիք կրնան անակնկալներու առջեւ գտնուիլ, եթէ բաւարար չափով զգոյշ չգտնուին: Վերջին մրցումը Ասիոյ ներկայացուցիչ Ճափոնի դէմ է: Առաջին երկու մրցումներու արդիւնքներու լոյսին տակ այս

Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Ճրէտ Մոնտրակոն (42)	54 մասնակցութիւն (0 կոլ)	Տեփորթիլո Քալի Նիս
Տէյվիտ Օսփինա (25)	42 մասնակցութիւն (0 կոլ)	Սանթա Ֆէ.
Քամիլո Վարկաս (24)	0 մասնակցութիւն (0 կոլ)	Աթալանթա
Մարիո Եփփէս (38)	95 մասնակցութիւն (6 կոլ)	Քրուզ Ազուլ
Լուիս Փերէա (35)	75 մասնակցութիւն (0 կոլ)	Ուէսթ Համ
Փալլո Արմերո (27)	50 մասնակցութիւն (1 կոլ)	Ա. Սէ. Միլան
Քրիսթիան Զափաթա (27)	20 մասնակցութիւն (0 կոլ)	Փ.Ս.Վ
Սանթիակո Արիաս (22)	4 մասնակցութիւն (0 կոլ)	Ա. Նասիոնալ
Սթեֆան Մետինա (21)	2 մասնակցութիւն (0 կոլ)	Ռիվըր Փլէյթ
Էտեր Ա. Պալանթա (21)	1 մասնակցութիւն (0 կոլ)	Ինթեր Միլան
Ճրետի Կուարին (27)	48 մասնակցութիւն (3 կոլ)	Թուրուզ
Ապէլ Ակիլար (29)	47 մասնակցութիւն (6 կոլ)	Էլչէ
Քարլոս Սանչէզ (28)	43 մասնակցութիւն (0 կոլ)	Ալ Շապապ
Մաքսելի Թորէս (29)	39 մասնակցութիւն (3 կոլ)	Մորեյլա
Ալտո Ռամիրէզ (32)	29 մասնակցութիւն (1 կոլ)	Ճիրոենթինա
Խուան Քուատրասո (25)	26 մասնակցութիւն (3 կոլ)	Մոնաքո
Ճէյմս Ռոտրիկէզ (22)	21 մասնակցութիւն (4 կոլ)	Յիւմինենսէ
Էտուին Վալենսիա (29)	12 մասնակցութիւն (0 կոլ)	Ա. Նասիոնալ
Ալեքսանտր Մէա (25)	8 մասնակցութիւն (0 կոլ)	Քալիարի
Վիլթոր Լպարպո (23)	7 մասնակցութիւն (1 կոլ)	Փորթո
Խուան Քուինթերո (21)	3 մասնակցութիւն (0 կոլ)	Ռիվըր Փլէյթ
Թէոֆիլո Կիլթերէզ (28)	28 մասնակցութիւն (11 կոլ)	Փորթո
Ճէքսըն Մարթինէզ (27)	26 մասնակցութիւն (8 կոլ)	Հերթա Պերլին
Ատրիան Ռամոս (28)	23 մասնակցութիւն (2 կոլ)	Սելեյլա
Քարլոս Պաքա (27)	9 մասնակցութիւն (2 կոլ)	Իւտինիգէ
Լուիս Միլենէլ (24)	5 մասնակցութիւն (1 կոլ)	

մրցումը կրնայ վճռորոշ ըլլալ անոնց համար, որպեսզի անոնք կարենան գրաւել առաջին երկու դիրքերէն մէկը:

1994-ի մոնտիալի նախօրեակին Քոլումպիա կը նկատուէր մոնտիալի գլխաւոր թեկնածուներէն մէկը: Անոնք

ստեղծեցին մեծագոյն անակնկալը, երբ իրենց առաջին երեք մրցումները պարտուելով՝ Ա. հանգրուանէն վե-

րադարձան հայրենիք: Այս մոնտիալին անոնք պիտի կարենա՞ն նոր անակնկալ մը ստեղծել:

ՅՈՒՆԱՍՏԱՆ



Մոնտիալի մասնակցութիւն.- Երկու անգամ (1994, 2010)
 Մրցում.- 6 մրցում՝ 1 յաղթանակ, 5 պարտութիւն
 Կոլ.- Նշանակած 2 կոլ, ստացած 15 կոլ
 Մարզիչ.- Ֆեռնանտո Սանթոս
 Խմբապետ.- Ծիործիոս Քարակունիս
 Պաշտօնական տարագ.- Ծերմակ



Մոնտիալներու մասնակցութեան Յունաստանի պատմութիւնը աղքատիկ է: Ան եւրոպական այն քիչ երկիրներէն է, որոնք միայն երկու անգամ մասնակցած են

մոնտիալի եւ ոչինչ իրագործած են: Անոնց առաջին մասնակցութիւնը, 1994-ին, կատարեալ խայտառակութիւն մըն էր յունական ֆուտպոլին համար: Երեք մրցումներ

պարտուելով, ո՛չ մէկ կոլ նշանակելով եւ խղճալի ֆուտպոլ մը ներկայացնելով, անոնք ամօթահար վերադարձան Յունաստան:

Յոյները յաջողութեան հասան «Եուրօ 2004»-ին, երբ ստեղծեցին մեծագոյն անա-

կնկալը եւ դարձան տիտղոսակիր՝ աւարտականին պարտութեան մատնելով տանտէր Փորթուգալը: 2010-ի մոնտիալին եւս անոնք այնքան չտպաւորեցին եւ կանուխ հրաժեշտ տուին մոնտիալին:

Այս մոնտիալի զտումի մրցումներուն յոյները դժուարութեան չհանդիպեցան: Անոնք կէտերու լայն առաւելութիւն մը ունեցան իրենց խմբակիցներէն եւ Պոսնիոյ միանալով հասան մոնտիալի: Սակայն պէտք է նշել, որ զտումի մրցումներուն իրենց խմբակի երկիրները համեմատաբար համեստ կազմեր էին:

Այս մոնտիալին Յունաստան պիտի փորձէ նոր դիմագիծ տալ իր ֆուտպոլին: Անոնք պիտի ջանան մոռցնել տալ նախորդ մոնտիալներու իրենց ձախողութիւններու պատմութիւնը:

Մաս կազմելով Գ. խմբակին, յոյները մրցակից ունին Քոլումպիան, Ճափոնը եւ Փղոսկրեայ Ափունքը: Առաջին մրցումը Քոլումպիոյ դէմ պիտի ըլլայ առաջին փորձա-

Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Ալեքսանտր Յորվաս (31)	16 մասնակցութիւն (0 կոլ)	Ափոլոն
Փանակիոթիս Կլիքոս (27)	1 մասնակցութիւն (0 կոլ)	Փաոք
Ճիանիս Մանիաթիս (27)	28 մասնակցութիւն (0 կոլ)	Օլիմփիաքոս
Ճիործիոս Յաւելաս (26)	12 մասնակցութիւն (0 կոլ)	Փաոք
Քոսթաս Մանոլաս (22)	6 մասնակցութիւն (0 կոլ)	Օլիմփիաքոս
Ա. Փափատափոլոս (29)	36 մասնակցութիւն (0 կոլ)	Օլիմփիաքոս
Լուքաս Վինթրա (33)	47 մասնակցութիւն (0 կոլ)	Լեւանթէ
Վասիլիս Թորոսիտիս (28)	64 մասնակցութիւն (7 կոլ)	Ա. էս. Ռոմա
Խոսէ Հոլեպաս (29)	20 մասնակցութիւն (1 կոլ)	Օլիմփիաքոս
Ալեքսանտրոս Յիոլիս (29)	47 մասնակցութիւն (1 կոլ)	Գայսերիսփոր
Ճիործիոս Քարակունիս (37)	132 մասնակցութիւն (10 կոլ)	Ֆուլհամ
Լ. Քրիսթոտոլոփոլոս (27)	16 մասնակցութիւն (1 կոլ)	Պոլոնիա
Անտրէաս Սամարիս (24)	3 մասնակցութիւն (0 կոլ)	Օլիմփիաքոս
Քոսթաս Քացուրանիս (34)	109 մասնակցութիւն (9 կոլ)	Փաոք
Ճիանիս Ֆեթֆացիտիս (23)	16 մասնակցութիւն (3 կոլ)	Ճենոպա
Փանակիոթիս Քոնէ (26)	14 մասնակցութիւն (0 կոլ)	Պոլոնիա
Ճիործիոս Սամարաս (28)	71 մասնակցութիւն (8 կոլ)	Սելթիք
Քոսթաս Միթրոկլոս (26)	29 մասնակցութիւն (8 կոլ)	Ֆուլհամ
Տ. Սալփինկիտիս (32)	73 մասնակցութիւն (13 կոլ)	Փաոք
Տ. Փափատոփոլոս (32)	23 մասնակցութիւն (2 կոլ)	Աթրոմիթոս
Թէոֆանիս Ճէքաս (33)	69 մասնակցութիւն (24 կոլ)	Գոնիասփոր
Սոթիրիս Նինիս (24)	31 մասնակցութիւն (3 կոլ)	Փաոք
Ս. Փափասթաթոփոլոս (25)	46 մասնակցութիւն (0 կոլ)	Պ. Տորթմոնտ



քարը յոյներուն համար: Դրական արդիւնք մը եւ յոյները պիտի ակնկալեն որ կարելիութիւնը ունենան անց-

ներու Բ. հանգրուան: Յաջորդ մրցումը, Ճափոնի դէմ, յոյներուն համար առիթ մը պիտի ըլլայ որ յաղթանակ մը

արձանագրեն: Փղոսկրեայ Ափունքի դէմ մրցումին անոնք զգուշութեամբ պէտք է խաղան, որպէսզի կարե-

նան մոնտիալի իրենց ճամբորդութիւնը շարունակել:

ՓՂՈՍԿՐԵԱՅ ԱՓՈՒՆՔ



Մոնտիալի մասնակցութիւն.- Երկու անգամ (2006, 2010)

Մրցում.- 6 մրցում՝ 2 յաղթանակ, 1 հաւասարութիւն, 3 պարտութիւն

Կոլ.- Նշանակած 9 կոլ, ստացած 9 կոլ

Մարզիչ.- Սապրի Լամուշի Խմբապետ.- Տիտիէ Տրոկպա

Պաշտօնական տարագ.- Նարնջագոյն

Փղոսկրեայ Ափունքի մոնտիալներու մասնակցութեան պատմութիւնը սկիզբ կ'առնէ 2006-ին: Երկու մասնակցութիւն եւ ափրիկեցիք արդէն տպաւորած են ֆուտպոլասէրները: Ճիշդ է, որ չեն յաջողած անցնիլ Բ. հանգրուան, սակայն իրենց կատարած 6 մրցումէն երկուքը աւարտած են յաղթանակով, ինչ որ ափրիկեան կազմի մը համար աննախընթաց արդիւնք է:

Բնականաբար, այս յաջողութիւններուն գաղտնիքը փղոսկրեայ ափունքի մարզիկներուն ներկայութիւնն է եւրոպական հռչակաւոր ակումբներուն մէջ: Անոնք ո՛չ միայն ներկայ են, այլեւ՝ փնտռուած հիմնական մարզիկներ են ու դերակատար են իրենց ակումբներուն արձանագրած դրական արդիւնքներուն:

Մարզիչ Սապրի Լամուշի

իր տրամադրութեան տակ ունի բարձր մակարդակի ֆուտպոլիստներ, որոնք ի



վիճակի են յաղթելու որեւէ կազմի: Նախորդ մոնտիալներուն ակներեւ էր, որ ափրիկեցիք միջազգային մրցումներու անփորձութեան պակասէ կը տառապէին: Այլապէս, անոնք կրնային մեծ արդիւնքներու հասնիլ: Փղոսկրեայ Ափունքի կազմին

ամէնէն ամբողջական եւ ուժեղները բաժինը յառաջապահ գիծն է: Սալոմոն Քալու, Տիտիէ Տրոկպա, Ճերվինիօ վտանգաւոր յառաջապահներ են եւ իրենց ակումբներու յաղթանակներուն կերտիչներն են: Այս իրականութիւնը պիտի փորձէ օգ-

Անուն եւ Տարիք

- Պուպաբար Պարի (34)
- Սայուպա Մանտէ (20)
- Տիտիէ Չոքորա (33)
- Քոլո Թուրէ (33)
- Սիաքա Թիենէ (32)
- Արթըր Պոքա (31)
- Սերօ Օրիէ (21)
- Պրայս Ճաճեճէ (23)
- Քասթանթ Ճաքփա (27)
- Եայա Թուրէ (30)
- Ռոմարիք (30)
- Չէիք Թիոթէ (27)
- Մաքս Կրատէլ (26)
- Ժան Ժաք Կոսո (31)
- Սէրի Տայ (29)
- Տիտիէ Տրոկպա (36)
- Սալոմոն Քալու (28)
- Ճերվինիօ (26)
- Ուիլֆրէտ Պոնի (25)
- Սէյտու Տոմպիա (26)
- Ճիովանի Սիօ (25)
- Արունա Քոնէ (30)
- Տիտիէ Եա Քոնան (30)

Հաւաքական եւ Կոլ

- 79 մասնակցութիւն (0 կոլ)
- 1 մասնակցութիւն (0 կոլ)
- 139 մասնակցութիւն (1 կոլ)
- 106 մասնակցութիւն (6 կոլ)
- 87 մասնակցութիւն (2 կոլ)
- 78 մասնակցութիւն (1 կոլ)
- 8 մասնակցութիւն (0 կոլ)
- 3 մասնակցութիւն (0 կոլ)
- 3 մասնակցութիւն (0 կոլ)
- 83 մասնակցութիւն (16 կոլ)
- 47 մասնակցութիւն (5 կոլ)
- 43 մասնակցութիւն (1 կոլ)
- 24 մասնակցութիւն (3 կոլ)
- 23 մասնակցութիւն (0 կոլ)
- 5 մասնակցութիւն (0 կոլ)
- 99 մասնակցութիւն (63 կոլ)
- 64 մասնակցութիւն (23 կոլ)
- 53 մասնակցութիւն (13 կոլ)
- 24 մասնակցութիւն (8 կոլ)
- 20 մասնակցութիւն (2 կոլ)
- 6 մասնակցութիւն (0 կոլ)
- 39 մասնակցութիւն (9 կոլ)
- 25 մասնակցութիւն (8 կոլ)

Ակումբ

- Լոքերէն
- Սթապաէք
- Տրապիգոնսփոր
- Լիվրփուլ
- Մոնփրիէ
- Շթուկարթ
- Թուլուզ
- Մարսէյ
- Ա. Ֆրանքֆորթ
- Մ. Սիթի
- Պասթիա
- Նիւքէսըլ
- Սէնթ Էթիէն
- Կենչերպիրլիճի
- Պազէլ
- Կալաթասարայ
- Լիլ
- Ա. էս. Ռոմա
- Սուանսի Սիթի
- Սէ. էս. Քա. Մոսկուա
- Պազէլ
- Էվրթըն
- Հանովըր

տագործել Լամուշի, դրական արդիւնքներով վերադառնալու համար մոնտիալէն:

Փղոսկրեայ Ափոնք չունի հզօր խմբակիցներ: Մաս կազմելով Գ. խմբակին, ան իր առաջին մրցումը պիտի

կատարէ ճափոնի դէմ: Յաղթանակ մը եւ ափրիկեցիք թեւեր պիտի առնեն: Յաջորդ մրցումը Քոլումպիոյ դէմ է: Անոնք ի վիճակի են ստեղծելու անակնկալ, մանաւանդ որ քոլումպիացիք չունին հզօր կազմ մը: Յոյներուն դէմ

մրցումին անոնք պէտք է զգոյշ ըլլան: Յունական ֆուլթայլը ճիշդ է որ այնքան ալ տպաւորիչ չէ, սակայն յոյները ունին անակնկալներ ստեղծելու մեծ նախընթաց: Անոնք երբեմն իրենց անըստապասելի հակայարձակումներով կրնան կոլեր նշանակել:

Ափրիկեցիք պիտի փորձեն իրենց դրացիներուն՝ Քամբերունի եւ Նիճերիոյ նման դասուիլ այն երկիրներու շարքին, որոնք յաջողած են անցնիլ Բ. հանգրուան:



Մոնտիալի մասնակցութիւն.- 4 անգամ (1998, 2002, 2006, 2010)
Արդիւնքներ.- Երկրորդ Հանգրուան (2002, 2010)
Մրցում.- 14 մրցում՝ 4 յաղթանակ, 3 հաւասարութիւն, 7 պարտութիւն
Կոլ.- Նշանակած 12 կոլ, ստացած 16 կոլ
Մարզիչ.- Ալպերթօ Զաքերոնի
Խմբապետ.- Մաքոթօ Հասեպէ
Պաշտօնական տարագ.- Կապոյտ

Ճափոնն առաջին անգամ մոնտիալի կը մասնակցի 1998-ին եւ այդ թուականէն ի վեր ան միշտ ներկայ է մոնտիալներու:

Այս մէկը իրագործում մըն է, նկատի ունենալով որ նախորդ չորս մասնակցութիւններուն ընթացքին Ճափոն երկու անգամ յաջողած է անցնիլ Բ. հանգրուան, որ նոյնպէս ասիական երկրի մը համար գնահատելի արդիւնք է:



ՃԱՓՈՆ

Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Էյժի Բաւաշիմա (31)	54 մասնակցութիւն (0 կոլ)	Սթանտարտ Լիէժ
Շուսաքու Նիշիքաուա (27)	12 մասնակցութիւն (0 կոլ)	Ռէտ Տայմընտս
Եուիչի Քոմանո (32)	78 մասնակցութիւն (1 կոլ)	Ժիլպիլիօ Իռաթա
Եասուեուքի Քոննօ (31)	78 մասնակցութիւն (1 կոլ)	Կամպա Օզաքա
Եուիթօ Նակաթոմօ (27)	67 մասնակցութիւն (3 կոլ)	Ի. Միլան
Մայա Եոչիտա (25)	32 մասնակցութիւն (2 կոլ)	Սաութհէմթըն
Մասահիքօ Ինոհա (28)	20 մասնակցութիւն (1 կոլ)	Ժիլպիլիօ Իռաթա
Հիրոքի Մաքայ (24)	15 մասնակցութիւն (0 կոլ)	Հանովըր
Կոթոքու Սաքայ (23)	12 մասնակցութիւն (0 կոլ)	Շթուլթկարթ
Մասաթօ Մորիշիկէ (26)	7 մասնակցութիւն (1 կոլ)	Ն. Մ. Թոքիօ
Եասուհիթօ Էնտօ (34)	141 մասնակցութիւն (12 կոլ)	Կամպա Օզաքա
Շինթի Քակաուա (25)	54 մասնակցութիւն կոլ (17)	Մ. Եունայթըտ
Քէյսուքէ Հոնտա (27)	53 մասնակցութիւն կոլ (20)	Ա. Սէ. Միլան
Հաթիրնէ Հոսոկայ (27)	26 մասնակցութիւն (1 կոլ)	Հերթա Պերլին
Հիրոշի Քիթաքէ (24)	24 մասնակցութիւն (1 կոլ)	Նիւրնպրկ
Հոթարու Եամակուշի (23)	9 մասնակցութիւն (0 կոլ)	Սերեգօ Օզաքա
Մանայու Սայթօ (24)	4 մասնակցութիւն (1 կոլ)	Եոքոհամա Մարինոս
Թոչիհիրօ Աոյամա (23)	4 մասնակցութիւն (0 կոլ)	Հիրոշիմա
Շինթի Օքազաքի (28)	73 մասնակցութիւն (38 կոլ)	Մայնց
Եույա Օզաքօ (23)	7 մասնակցութիւն (3 կոլ)	Միլնիթ 1860
Մասաթօ Քուտօ (24)	4 մասնակցութիւն (2 կոլ)	Քաշիուա Ռէյսոլ
Ռիոչի Մայետա (32)	33 մասնակցութիւն (10 կոլ)	Ժիլպիլիօ Իռաթա
Քենկօ Նաքամուրա (33)	68 մասնակցութիւն (6 կոլ)	Քաւազաքի Ֆրոնթալ

Ճափոնը անցնիլ Բ. հանգրուան, որ նոյնպէս ասիական երկրի մը համար գնահատելի արդիւնք է:

Ճափոնցիք իրենց դրացի հարաւային քորէացիներուն հետ միասին գրեթէ ոչ մէկ դժուարութիւն ունեցան զրտումի մրցումներուն: Անոնց մակարդակը զգալիօրէն բարձր է Ասիոյ իրենց մրցակիցներու մակարդակէն: Այս իմաստով Պրագիլի մոնտիալի ճամբան դժուար չեղաւ ճափոնցիներուն համար:

Ճափոնն ունի քանի մը անլանի մարզիկներ, որոնք մաս կը կազմեն եւրոպական ակումբներու: Քակաուա (Մ. Եունայթըտ), Հոնտա (Ա. Սէ. Միլան) եւ Օքազաքի (Մայնց) կը հանդիսանան խումբին ողնայարը: Իտալացի փորձառու մարզիչ Զաքերոնի



գիտէ իր խումբին առաւելագոյն կարելիութիւնները ի գործ դնել:

Բարեբախտաբար, ճափոնցիք իրենց խմբակին մէջ չունին մեծ կազմեր: Անոնց խմբակը որոշ չափով հաւասարակշռուած է: Անոնք իրենց առաջին մրցումը պիտի կատարեն Փղոսկրեայ Ափունքի դէմ, որ ունի բաւական տոկոսն կազմ եւ կոլեր նշանակող յառաջապահներ: Ճափոնցիք պիտի փորձեն խաղին հաւասարակշռութիւնը պահել: Երկրորդ մրցումին, անոնք յոյներուն դէմ են եւ այս մրցումը նոյնքան դժուար պիտի ըլլայ՝ որքան առաջին մրցումը: Երրորդ մրցումին ճափոնցիք պիտի մրցին Քուրմպիոյ դէմ, որոնք նոյնպէս տրամադրուած են անցնելու Բ. հանգրուան:



Եթէ Բ. հանգրուան անցնելու մէջ արհեստագիտութիւնը իր դերը ունենար, ապա ճափոնցիք պիտի զերագանցէին ո՛չ միայն իրենց խմբակիցները, այլեւ մոնտ-իալի մասնակից շատ երկիրներ եւ հաւանաբար իլէին նաեւ բաժակը:

**«ՄԻՀՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆ
ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՖՈՒՏ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**

● Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մեկուսի վարչութիւն	500 \$
● Հ.Մ.Ը.Մ.-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւն	500 \$
● Տէր եւ տիկ. Տիգրան եւ Մակի Պապիկեան	500 \$
● Ալիս Ֆիլիանտեան	400 \$
● Անդրանիկ Տէր Օհանէտեան	200 \$
● Տէր եւ տիկ. Վիգէն եւ Լինա Դաւթեան	100 \$
● Տէր եւ տիկ. Եփրեմ եւ Վարսենիկ Պաղպուտարեան	100 \$
● Պետիկ Տէր Վարդանեան	100 \$
● Բաֆֆի Պ. Պողոսեան	50 \$

PINK
Kimberley[™]
AUSTRALIA

PinkKimberley.com.au



Diamonds beyond rare



Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.

ՈՒՐՈՒԿՈՒԷՅ



Մոնտիալի մասնակցություն.- 11 անգամ (1930, 1950, 1954, 1962, 1966, 1970, 1974, 1986, 1990, 2002, 2010)

Արդիւնքներ.- Ախոյեան (1930, 1950), չորրորդ դիրք (1954, 1970, 2010)

Մրցում.- 50 մրցում՝ 19 յաղթանակ, 12 հաւասարութիւն, 19 պարտութիւն

Կոլ.- Նշանակած 80 կոլ, ստացած 70 կոլ

Մարզիչ.- Օսքար Թապարեզ
Խմբապետ.- Տիէկո Լուկանո
Պաշտօնական տարագ.- Բաց կապոյտ

Մոնտիալներու պատմութիւնը կը սկսի Ուրուկուէյով: Ան աշխարհի ախոյեանութեան առաջին կազմակերպիչն ու տիտղոսակիրն է: 1950-ին վերսկսող մոնտիալի ախոյեանն է (1938-1950 մոնտիալը ընդհատուեցաւ համաշ-

խարհային Բ. պատերազմին պատճառով):

Այս երկրորդ տիտղոսը կրկնակի նշանակութիւն ունի Ուրուկուէյի համար: Ան Մարաքանայի դաշտին վրայ, շուրջ 200 հազար հանդիսականներու ներկայութեան,



պարտութեան մատնեց հիւրընկալ Պրագիլը, որ միայն հաւասարութեան մը պէտք ունէր, եւ շահեցաւ իր երկրորդ տիտղոսը: Ուրուկուէյնաեւ Հարաւային Ամերիկայի ախոյեանութեան առաջին տիտղոսակիրն է եւ զայն շահած է 15 անգամ (մրցանիշ): Իսկ 1980-ին ՖԻՖԱ-ն կազմակերպեց մրցաշարք մը՝ Մոնտիալիթօ, նուիրուած մոնտիալի ստեղծման 50-ամ-

եակին: Մրցաշարքը տեղի ունեցաւ Ուրուկուէյի մէջ, որուն մասնակցեցան աշխարհի ախոյեանութեան տիրացած երկիրները: Այս մրցաշարքին ալ ախոյեան հանդիսացաւ Ուրուկուէյ:

Այս յաջողութիւնները կը կազմեն Ուրուկուէյի Ֆուտպոլի պատմութեան փայլուն էջերը: Սակայն, 1950-էն ետք, Ուրուկուէյ սկսաւ շուրջ մէջ մնալ: Եթէ զանց առնենք 1970-ի արձանագրած յաջողութիւնը (4-րդ դիրք), ապա Ուրուկուէյ յաճախ բացակայեցաւ մոնտիալներէ, իսկ կարգ մը մոնտիալներու ալ անոր մասնակցութիւնը եղաւ անուանական: Ի վերջոյ, 2010-ին Ֆորլանի եւ Սուարէզի առաջնորդութեամբ, իր խմբակին մէջ ան դերազանցեց «կորսուած» Ֆրանսացիները եւ յաղթանակներ արձանագրելով, հասաւ կիսաւարտական, ուր դժուարութեամբ տեղի տրուաւ Հոլանտայի դիմաց: Երրորդ դիրքի համար ալ յամառ պայքարէ ետք ան զիջեցաւ Գերմանիոյ եւ գրաւեց 4-րդ դիրքը:

Զտումի մրցումներուն Ուրուկուէյ բաւական դժուարութիւններ ունեցաւ: Կարգ մը մրցումներու անիմաստ կէտեր կորսնցնելով

Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Ֆեռնանտո Միլսթերա (27)	60 մասնակցութիւն (0 կոլ)	Կալաթասարայ
Մարթին Սիլվա (31)	4 մասնակցութիւն (0 կոլ)	Վասքո Տը Կամա
Տիէկո Լուկանո (33)	92 մասնակցութիւն (9 կոլ)	Ուէսթ Պրոմուիշ
Մաքսի ֓երէյրա (29)	88 մասնակցութիւն (3 կոլ)	Պենֆիլթա
Տիէկո Կոտին (28)	76 մասնակցութիւն (3 կոլ)	Ա. Մատրիտ
Մարթին Քաջերէս (27)	55 մասնակցութիւն (1 կոլ)	Եռվենթուս
Խորխէ Ֆիլսիլ (29)	41 մասնակցութիւն (0 կոլ)	Փորթօ
Խոսէ Մարիա Կիմենէզ (19)	4 մասնակցութիւն (0 կոլ)	Ա. Մատրիտ
Տիէկո Փերէզ (33)	88 մասնակցութիւն (2 կոլ)	Պոլոնիա
Քրիսթիանօ Ռոտրիկէզ (28)	71 մասնակցութիւն (8 կոլ)	Ա. Մատրիտ
Ուոլթըր Կարկանօ (29)	61 մասնակցութիւն (1 կոլ)	Փարմա
Ալվարօ Փերէյրա (28)	55 մասնակցութիւն (6 կոլ)	Սան Փաոլօ
Էկիտիօ Ռիոս (32)	53 մասնակցութիւն (0 կոլ)	Մորելիա
Ալվարօ Կոնզալէս (29)	42 մասնակցութիւն (2 կոլ)	Լացիօ
Կասթոն Ռամիրէզ (23)	27 մասնակցութիւն (0 կոլ)	Սաութհէմթըն
Նիքոլաս Լոտէյրօ (25)	25 մասնակցութիւն (3 կոլ)	Պոթոֆակօ
Լուիզ Սուարէզ (27)	77 մասնակցութիւն (30 կոլ)	Լիվըրփուլ
Ապէլ Հեռնանտէզ (23)	11 մասնակցութիւն (3 կոլ)	Փալերմօ
Տիէկօ Ֆորլան (34)	108 մասնակցութիւն (36 կոլ)	Սերեզօ Օսաքա
Անտրէս Աքոթի (38)	40 մասնակցութիւն (1 կոլ)	Նասիօնալ
Սեպասթիան Էկիւրէն (33)	54 մասնակցութիւն (7 կոլ)	Փալմէյրաս
Էտիէնսըն Քալանի (27)	60 մասնակցութիւն (20 կոլ)	Փարիզ Ս. Ճ.
Սեպասթիան Քոաթէս (23)	13 մասնակցութիւն (1 կոլ)	Լիվըրփուլ



ան ստիպուած խաղաց փԼԵՅ-ՕՖ եւ ապահովեց մոնտիալի իր մասնակցութիւնը:

Մարզիչ Թապարէզ, որ կը նկատուի ներկայ խումբին «ճարտարապետը» եւ որուն աշխատանքը արդիւնաւորուեցաւ 2010-ին, պիտի փորձէ կրկնել նոյն յաջողութիւնը: Ուրուկուէյ, որ 1980-ական եւ 1990-ական թուականներուն կը նկատուէր կոշտ իա-

ղարկութեան խորհրդանիշներէն մէկը, կը ներկայացնէ պարզ ու գեղեցիկ ֆուտպոլ: Բնականաբար, յառաջապահ Մարիօ Սուարէզ իր վրայ պիտի կեդրոնացնէ լուսարձակները: Ան իր ակումբին՝ Լիվրփուլի եւ Անգլիոյ ախոյեանութեան կոլ-սքորըրն է եւ մեծ դեր ունի անոր յաղթանակներուն մէջ: Սուարէզի խմբակիցները ամէն ջանք

պիտի թափեն, որպէսզի ան ազատ շարժի դաշտին վրայ եւ դառնայ կոլերու հեղինակ:

Ուրուկուէյ կը գտնուի դժուար խմբակի մը մէջ: Ան իր առաջին մրցումին անպայման յաղթանակի մը պէտք ունի Քոսթա Ռիքայի դէմ: Ապա ան յաջորդաբար պիտի մրցի Անգլիոյ եւ Իտալիոյ դէմ, որոնք իրենց

աչքերը յառած են բաժակին: Անգլիոյ դէմ ճակատումը պիտի ըլլայ վճռորոշ, որովհետեւ ուրուկուէյցիք միշտ ալ դժուարութեան մատնուած են Իտալիոյ դէմ:

Յունիս 20-ի մրցումի իրաւարարին մրցումի աւարտը ազդարարող սուլիչը ուրուկուէյցիները պիտի ուզեն դիմաւորել հրճուանքով:

ՔՈՍՏԱ ՌԻՔԱ



FIFA WORLD CUP
Brasil

Մոնտիալի մասնակցութիւն.- Երեք անգամ (1990, 2002, 2006)

Արդիւնքներ.- Երկրորդ հանգրուան (1990)

Մրցում: 10 մրցում՝ 3 յաղթանակ, 1 հաւասարութիւն, 6 պարտութիւն
Կոլ.- Նշանակած 12 կոլ, ստացած 21 կոլ

Մ ա ր -
զիչ.- Խորխէ Լուիս Փինթօ
Խմբապետ.- Պրայըն
Ռուիզ
Պաշտօնակալ տա-
րագ.- Կարմիր

1990-ին, երբ Քոսթա Ռիքա առաջին անգամ ըլլալով կը մասնակցէր մոնտիալի, բոլորը կ'ակնկալէին որ կեդրոնական ամերիկացիք շատ կանուխ եւ ծանր պարտութիւններ կրելով պիտի վերադառնան իրենց երկիրը: Սակայն քոսթա ռիքացիք անակնկալ պատրաստած էին: Անոնք տապալեցին եւրոպական երկու կազմեր՝ Շուէտն ու Սկոտլանտն եւ դժուարութեամբ տեղի տալով Պրագիլի դիմաց՝ անցան Բ. հանգրուան: Հոս անոնք մրցելով չեխերուն դէմ, ցոյց տուին տկարութիւն եւ ծանր պարտութիւն մը կրելով վերա-



Անուն եւ Տարիք

- Քէյլըր Նաւաս (27)
- Փաթրիք Փամպերթըն (31)
- Մայքըր Ումանիա (31)
- Ժոնիոր Տիագ (30)
- Ռոյ Միլլըր (29)
- Ճիանքարլօ Կոնզալէզ (26)
- Խոսէ Սալվաթիէրա (24)
- Քրիսթիան Կամպոս (24)
- Օսքար Տուարթէ (24)
- Ուէյլըն Ֆրանսիս (23)
- Սելսօ Պորկէս (25)
- Քրիսթիան Պոլանիոս (29)
- Մայքըլ Պարանթէս (30)
- Խոսէ Միկէլ Բուպերօ (27)
- Ելցին Թէէէտա (22)
- Էսթեպան Կրանատոս (28)
- Տիէկօ Քալվօ (22)
- Ալվարօ Սապորիօ (32)
- Պրայըն Ռուիզ (28)
- Ժոէլ Բէմպլ (21)
- Մարքօ Ուրենիա (23)
- Ճոն Ճայրօ Ռուիզ (20)
- Քարլոս Հերնանտէզ (31)
- Ռանտալ Պրենէս (30)
- Պրայըն Օվիեոս (24)

Հաւաքական եւ Կոլ

- 51 մասնակցութիւն (0 կոլ)
- 20 մասնակցութիւն (0 կոլ)
- 81 մասնակցութիւն (1 կոլ)
- 60 մասնակցութիւն (1 կոլ)
- 47 մասնակցութիւն (1 կոլ)
- 33 մասնակցութիւն (2 կոլ)
- 26 մասնակցութիւն (1 կոլ)
- 24 մասնակցութիւն (1 կոլ)
- 10 մասնակցութիւն (0 կոլ)
- 1 մասնակցութիւն (0 կոլ)
- 61 մասնակցութիւն (14 կոլ)
- 53 մասնակցութիւն (2 կոլ)
- 42 մասնակցութիւն (4 կոլ)
- 33 մասնակցութիւն (2 կոլ)
- 21 մասնակցութիւն (0 կոլ)
- 11 մասնակցութիւն (0 կոլ)
- 9 մասնակցութիւն (1 կոլ)
- 93 մասնակցութիւն (32 կոլ)
- 61 մասնակցութիւն (12 կոլ)
- 31 մասնակցութիւն (9 կոլ)
- 22 մասնակցութիւն (7 կոլ)
- 1 մասնակցութիւն (0 կոլ)
- 39 մասնակցութիւն (6 կոլ)
- 37 մասնակցութիւն (8 կոլ)
- 26 մասնակցութիւն (1 կոլ)

Ակումբ

- Լեւանթէ
- Ալաթուելէնս
- Սափրիսա
- Մայնց
- Ռէտ Պոլլզ
- Քոլումպոլս Քրոլ
- Ալաթուելէնս
- Ռոզընպորկ
- Քլապ Պրիլժ
- Քոլումպոլս Քրոլ
- Ալբ
- Քոփենհագըն
- Աարեսանտ
- Հերետիանօ
- Սափրիսա
- Հերետիանօ
- Վալերենկա
- Ռիլ Սալթ Լէյք
- Փ.Ս.Վ.
- Օլիմպիաքոս
- Ք. Կրասնոտար
- Լիլ
- Ֆենիքս
- Քարթակինէս
- Էվըրթըն

դարձան իրենց երկիրը:

Բնականաբար, այս յաջողութիւնը լաւ յիշատակներ ձգեց անոնց մօտ, սակայն հետագային՝ 2002-ին եւ 2006-ին անոնք չկարողացան նոյն յաջողութիւնը կրկնել:

Այս մոնտիալին Քոսթա Ռիքա, Մեքսիքայի, Միացեալ Նահանգներու եւ Հոնտուրասի հետ կը ներկայացնէ

Կեդրոնական եւ Հիւսիսային Ամերիկան: Այս շրջանի բոլոր երկիրներուն նման անոնք միշտ ալ մնացած են հարաւ ամերիկեան խումբերու շուքին տակ:

Քոսթա Ռիքացիք կը գլուխուին դժուար խմբակի մէջ: Անոնց մրցակիցները աշխարհի նախկին երեք ախոյեաններ են՝ Ուրուկուէյ, Իտալիա

եւ Անգլիա: Չյուսահատող քոսթա Ռիքացիք ո՛չ միայն պիտի փորձեն տոկալ, այլեւ՝ ստեղծել իրենց համակիրներուն համար գեղեցիկ անակնկալ մը, ինչպէս 24 տարի առաջ:

Մարզիչ Պրայըն Ռուիզ իր տրամադրութեան տակ չունի անուանի ֆուլթպոլիստներ: Անոր մարզիկները պի-

տի վստահին իրենց կամքին ու եռանդին: Քանի մը ֆուլթպոլիստներ, որոնք մաս կը կազմեն եւրոպական ակումբներու, կրնան օգտակար ըլլալ իրենց կազմին եւ լաւագոյն պարագային կրնան ներկայացնել ներադաշնակ եւ տպաւորիչ ֆուլթպոլ:

ԱՆԳԼԻԱ



Մոնտիալի մասնակցութիւն.- 13 անգամ (1950, 1954, 1958, 1962, 1966, 1970, 1982, 1986, 1990, 1998, 2002, 2006, 2010)

Արդիւնքներ.- Ախոյեան (1966), չորրորդ (1990)

Մրցում.- 59 մրցում՝ 26 յաղթանակ, 19 հաւասարութիւն, 14 պարտութիւն

Կոլ.- Նշանակած 77 կոլ, ստացած 52 կոլ

Մարզիչ.- Ռոյ Հոճսըն
Խմբապետ.- Սթիւըն ժեռար
Պաշտօնական տարագ.- ճերմակ

1966-ի մոնտիալին ախոյեան հանդիսանալը ցարդ կը մնայ Անգլիոյ ազգային խումբին միակ իրագործումը: Այդ տիտղոսէն 24 տարի ետք անգլիացիք հասան կիսաւարտական եւ փենալթիներով պարտուեցան աւելի ուշ ախոյեան դարձած Գերմանիայէն: Այդ տարի, անոնք նոյնքան արժանի էին տիրանալու տիտղոսին՝ որքան տիտղոսակիները:

1990-էն ետք, անգլիացիք նշանակալից յաջողութիւններ չկարողացան արձանագրել: Այդ յաջողութենէն 24 տարի ետք անգլիացիք պիտի փորձեն առաւելագոյն յաջողութեան հասնիլ:



Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Ճօ Հարթ (26)	39 մասնակցութիւն (0 կոլ)	Մանչեսթըր Սիթի
Պէն Ֆոսթըր (31)	6 մասնակցութիւն (0 կոլ)	Ուէսթ Պրոմուիչ
Կլէն Ճոնսըն (29)	50 մասնակցութիւն (1 կոլ)	Լիվըրփուլ
Էլլի Բոլ (33)	107 մասնակցութիւն (0 կոլ)	Չելսի
Կէրի Քահիլ (28)	23 մասնակցութիւն (2 կոլ)	Չելսի
Քրիս Սմալինկ (24)	10 մասնակցութիւն (0 կոլ)	Մ. Եունայթըտ
Լուք Շօ (18)	1 մասնակցութիւն (0 կոլ)	Սաութհէմթըն
Լէյթըն Պէյնզ (29)	22 մասնակցութիւն (1 կոլ)	Էվըրթըն
Սթիւըն Քուլքըր (22)	1 մասնակցութիւն (1 կոլ)	Քարտիֆ Սիթի
Սթիւըն ժեռար (33)	109 մասնակցութիւն (21 կոլ)	Լիվըրփուլ
Ճէք Ուիլչըր (22)	15 մասնակցութիւն (0 կոլ)	Արսենալ
Ճորտըն Հէնտըրսըն (23)	8 մասնակցութիւն (0 կոլ)	Լիվըրփուլ
Ռահիմ Սթերլինկ (19)	2 մասնակցութիւն (0 կոլ)	Լիվըրփուլ
Մայքըլ Քարիք (32)	31 մասնակցութիւն (0 կոլ)	Մ. Եունայթըտ
Ճէյմս Միլնըր (28)	45 մասնակցութիւն (1 կոլ)	Մ. Սիթի
Ֆրէնք Լամփարտ (35)	103 մասնակցութիւն (29 կոլ)	Չելսի
Ռոս Պարքլի (20)	3 մասնակցութիւն (0 կոլ)	Էվըրթըն
Թոմ Բլեքբըրի (24)	13 մասնակցութիւն (0 կոլ)	Մ. Եունայթըտ
Ալեքս Չեմպըրլէյն (20)	14 մասնակցութիւն (3 կոլ)	Արսենալ
Ուէյն Ռուէնի (28)	89 մասնակցութիւն (38 կոլ)	Մ. Եունայթըտ
Տանիէլ Սթարրիճ (24)	10 մասնակցութիւն (3 կոլ)	Լիվըրփուլ
Ռիքի Լամպըրթ (32)	4 մասնակցութիւն (2 կոլ)	Սաութհէմթըն
Ճերմէն Տէֆօ (31)	55 մասնակցութիւն (19 կոլ)	Թորոնթօ
Թէօ Ուոլքոթ (25)	36 մասնակցութիւն (5 կոլ)	Արսենալ
Էլլի Եանկ (28)	30 մասնակցութիւն (7 կոլ)	Մ. Եունայթըտ



Հակառակ այն իրողութեան, որ անգլիական ակումբները յաջողութիւններ կ'ունենան եւրոպական մրցաշարքերուն եւ Անգլիոյ ախոյեանութիւնը կը նկատուի ամէնէն հետաքրքրական, տաք եւ մրցունակ ախոյեանութիւններէն մէկը, ազգային խումբը սակայն միշտ ալ «կը կաղայ» կամ այլ խօսքով չ'արտացոլացներ խումբերուն եւ «Փրեմիէր լիգ»ի իսկական պատկերը:

Չտուժի խաղերուն անգլիացիք յաջողեցան անարգել հասնիլ մոնտիալ, ուր սակայն ինկան «մահուան

խմբակ»ին մէջ, մրցակից ունենալով չորս անգամ աշխարհի ախոյեան իտալիան, երկու անգամ աշխարհի ախոյեան Ուրուկուէյը եւ տկար դասուած, բայց անակնկալներ ստեղծող Քոսթա Ռիքան:

Մարզիչ Ռոյ Հոնսըն գիտակից է իր վրայ դրուած ծանր պարտականութեան: Ան վեթերաններ Լամփարտի, Ժեռարի եւ Քոլի շուրջ համախմբած է երիտասարդ եւ բարձրորակ ֆուլթպոլիստներ, որոնք իրենց ակումբներուն՝ Չելսիի, Լիվըրփոլի, Մ. Սիթիի հետ փայլուն ար-

դիւները կ'արձանագրեն եւ իրենց արժանի տեղը գրաւած են այս կազմերուն մէջ:

Անգլիա իր առաջին մրցումը պիտի կատարէ Իտալիոյ դէմ: Այս մրցումին ելքը կրնայ ճակատագրական ըլլալ երկու կազմերուն համար ար: Անոնցմէ ոչ մէկը պիտի ուզէ պարտուիլ, յաջորդ երկու մրցումները աւելի հանդարտ ջիղերով կատարելու համար: Պատմութեան նժարը ի նպաստ իտալացիներուն է: Անգլիացիք գիտակից են այլ իրականութեան մը եւս: Անոնք մոնտիալներու ընթացքին միշտ ալ դժուարու-

թիւն ունեցած են հարաւամերիկեան կազմերու դէմ: Մինչ Քոսթա Ռիքա կրնայ լուրջ անակնկալներ ստեղծել:

Նմանօրինակ հաշիւներու գոհ չդառնալու համար, անգլիացիներուն կը մնայ կազմակերպուած ֆուլթպոլներ կայացնել, որպէսզի իրենց նախորդներուն՝ Պոպի Մուրի, Պոպի Չարլթընի, աւելի ուշ՝ Քրիս Ուատըլի եւ Փոլ Կէսփոյնի նման փայլուն արդիւնքներ արձանագրեն մոնտիալի պատմութեան մէջ:

ԻՏԱԼԻԱ



Մոնտիալի մասնակցութիւն.- 17 անգամ (1934, 1938, 1950, 1954, 1962, 1966, 1970, 1974, 1978, 1982, 1986, 1990, 1994, 1998, 2002, 2006, 2010)

Արդիւնքներ.- Ախոյեան (1934, 1938, 1982, 2006), երկրորդ (1970, 1994), չորրորդ (1990, 1978)

Մրցում.- 80 մրցում՝ 44 յաղթանակ, 21 հաւասարութիւն, 15 պարտութիւն

Կոլ.- Նշանակած 126 կոլ, ստացած 74 կոլ

Մարզիչ.- Չեզարէ Փրանտելլի
Խմբապետ.- Ճիանլուիճի Պիֆոն
Պաշտօնական տարագ.- Կապոյտ

Պրագիլէն ետք առաւելագոյն թիւով տիտղոսներ շահած կազմն է Իտալիան, որ կը նկատուի Եւրոպայի եւ աշխարհի ֆուլթպոլի տիտաններէն:

Չորս անգամ աշխարհի ախոյեան եւ տարբեր մոնտիալներու 2-րդ, 3-րդ կամ 4-րդ դիրքերը գրաւած երկնային կապոյտներուն յաջողութեան գաղտնիքը խմբային խաղարկութիւնն է՝ հիմնուած զօրաւոր պաշտպանողականի վրայ: Իտալացիք

աստղեր չեն ունեցած, եթէ զանց առնենք Ռոպերթո Պաճիոն, որ երեւոյթ է իտալական ֆուլթպոլի պատմութեան մէջ:

1934-ին եւ 1938-ին աշխարհի ախոյեան հանդիսանալէ ետք, իտալական ֆուլթպոլը զգալի նահանջ մը ապրեցաւ համաշխարհային Բ. պատերազմէն ետք: 1960-ական թուականներուն կը սկսի իտալական ֆուլթպոլին զարթօնքը: Ակումբները կը սկսին «հնձել» եւրոպական



րաժակներ, իսկ ազգային խումբը կը տիրանայ Եւրոպայի ախոյեանութեան: Բնականաբար, մեծագոյն անակնկալը 1982-ի իրազործումն էր: 1990-ին եւ 1994-ին ալ իտալացիք յաջողութիւններ ունեցան, սակայն չկարողացան տիրանալ բաժակին: 2006-ին իտալացիք ներկայացուցին տոկուն եւ կազմակերպուած ֆուլթպոլ, որուն շնորհիւ անոնք յաջողեցան պարտութեան մատնել «տանտէրները»՝ գերմանացիները, իսկ աւարտականին յամառ պայքարով անոնք կարողացան հաւասար-

րիլ եւ ապա՝ փենալթիներով պարտութեան մատնել Ֆրանսացիները, որոնք աւելի արժանի էին: Իտալացիք 4-րդ անգամ ըլլալով դարձան տիտղոսակիր:

Չտուժի խաղերուն իտալացիք դժուարութեան հանդիպեցան. Դանիա, Չեխիա, Մալթա, ինչպէս նաեւ հայրենի կազմը՝ Հայաստան, չխանդարեցին զիրենք: Պէտք է նշել, որ Հայաստան դարձի մրցումին իտալիոյ մէջ հաւասարութիւն մը արձանագրեց՝ 2-2 արդիւնքով, ինչ որ դրական արդիւնք է:

Իտալիա խմբակից ունի

ԱՆՈՒՆ ԵՒ Տարիք	Հաւարական ԵՒ ԿՈՂ	ԱԿՈՒՄԲ
Ճիւղապետի Պիւճոն (36)	139 մասնակցութիւն (0 կող)	Երկրորդութիւն
Սարգսյանի Սիրիկո (27)	7 մասնակցութիւն (0 կող)	Փարիզ Ս. Ժ.
Ճիւղապետի Չեչինի (29)	67 մասնակցութիւն (4 կող)	Երկրորդութիւն
Անտրէօ Պարզակլի (32)	47 մասնակցութիւն (0 կող)	Երկրորդութիւն
Լէոնարտո Պոնուչի (26)	35 մասնակցութիւն (2 կող)	Երկրորդութիւն
Քրիսթիան Մակի (32)	34 մասնակցութիւն (0 կող)	Նախօր
Իկնասի Ապաթէ (27)	18 մասնակցութիւն (1 կող)	Ա. Սէ. Միլան
Անտրէա Փիրլօ (34)	108 մասնակցութիւն (13 կող)	Երկրորդութիւն
Ռիքարտո Մոնթոլիփօ (29)	57 մասնակցութիւն (2 կող)	Ա. Սէ. Միլան
Քրիստիան Մարքիզի (28)	42 մասնակցութիւն (2 կող)	Երկրորդութիւն
Թիակօ Մոթա (31)	19 մասնակցութիւն (1 կող)	Փարիզ Ս. Ժ.
Անթոնիօ Քանտրելա (27)	19 մասնակցութիւն (0 կող)	Լացիօ
Ալպերթօ Ճիլարտինօ (31)	57 մասնակցութիւն (19 կող)	Ճենովա
Փապլօ Օսվալտօ (28)	14 մասնակցութիւն (4 կող)	Երկրորդութիւն
Անտրէա Ռանքիա (26)	12 մասնակցութիւն (0 կող)	Ինթէր Միլան
Ֆետերիքօ Պալզարեթի (32)	16 մասնակցութիւն (0 կող)	Ա. Էս. Ռոմա
Տանիէլէ Ռոսսի (30)	93 մասնակցութիւն (15 կող)	Ա. Էս. Ռոմա
Ալպերթօ Աքուիլանի (29)	33 մասնակցութիւն (5 կող)	Ֆիորենթինա
Մարիօ Պարոթելլի (23)	29 մասնակցութիւն (12 կող)	Ա. Սէ. Միլան
Ճիւղապետի Ռոսսի (27)	29 մասնակցութիւն (7 կող)	Ֆիորենթինա
Սեպասթիան Ճիոլինքօ (27)	17 մասնակցութիւն (1 կող)	Երկրորդութիւն
Անտրէա Փոլի (24)	4 մասնակցութիւն (1 կող)	Ա. Սէ. Միլան
Լուքա Անթոնելլի (27)	6 մասնակցութիւն (0 կող)	Ճենովա

հանգիստ պիտի ըլլան: Վիճակագրութիւնները ի նըպաստ Իտալիոյ կը խօսին եւ ուրուկուէյցիք դժուար թէ կարենան ճեղքել Իտալիոյ ամուր պաշտպանողականը: Մինչ Քոսթա Ռիքա պիտի փորձէ առնուազն փոքր հաշիւով պարտուիլ:

Ընդհանրապէս իտալացիք պիտի չուզեն բաւարարուիլ միմիայն առաջին հանգրուանով: Անոնք մեծ «ախորժակներ» ունին հաւասարելու Պրագիլի մրցանիշին հետ: Այս առաքելութեան համար մարզիչ Փրանտելլի իր տրամադրութեան տակ ունի խոստմնալից կազմ մը, որ վեթերան Փիրլոյի ղեկավարութեամբ ի վիճակի է հասնելու տիտղոսին:

Մոնտիալներու վերջին 30 տարիներու պատմութիւնը ցոյց կու տայ, որ եթէ իտալացիք ձախողին մոնտիալի մը, յաջորդին կը հասին նուազագոյնը մինչեւ կիսաւարտական: 2010-ի մոնտիալին իտալացիք ձախողեցան եւ առաջին հանգրուանի աւարտին վերադարձան Հռոմ...

նախկին ախոյեաններ Անգլիան եւ Ուրուկուէյը, ինչպէս նաեւ քիչ մը անձանօթ Քոսթա Ռիքան: Բնականաբար, նախկին երեք ախոյեանները բուռն պայքար պի-

տի մղեն առաջին երկու դիրքերուն համար, մինչ Քոսթա Ռիքա կրնայ իրաւարարի դեր կատարել: Իտալիա-Անգլիա մրցումը պիտի ըլլայ եւրոպական դասական մր-

ցում մը, ուր վեթերաններ իտալացի Փիրլօ եւ անգլիացի ժիրար պիտի փորձեն դաշտին կեդրոնը առնել իրենց հսկողութեան տակ: Ուրուկուէյի դէմ, իտալացիք աւելի

with the complements of

Restaurant Al-Mayass

ԶՈՒՑԵՐԻԱ



Մոնտիալի Մասնակցություն.- 9 անգամ (1934, 1938, 1950, 1954, 1962, 1966, 1994, 2006, 2010)

Արդիւնքներ.- Քառորդ աւարտական (1934, 1938, 1954)

Մրցում.- 29 մրցում՝ 9 յաղթանակ, 6 հաւասարութիւն, 14 պարտութիւն

Կոլ.- Նշանակած 38 կոլ, ստացած 52 կոլ

Մարզիչ.- Օթմար Հիցֆիլտ
Խմբապետ.- Կոխան Ինլըր
Պաշտօնական Տարագ.- Կարմիր

Չուիցերիացիք մոնտիալի կը մասնակցին 9-րդ անգամ ըլլալով: Հակառակ այս իրողութեան, զուիցերիացիք նըշանակալից որեւէ յաջողութեան չեն հասած: Նոյնիսկ 1954-ին, երբ մոնտիալը տեղի ունեցաւ իրենց երկրին մէջ, զուիցերիացիք յաջողեցան հասնիլ միայն Բ. հանգրուան: Լաւագոյն արդիւնքը անոնք արձանագրած են 1950-ին (Պրագիլի մէջ), հանդիսանալով 6-րդ:

Գտնուելով Եւրոպայի սրտին եւ դրացի ըլլալով Գերմանիոյ եւ Ֆրանսայի նման ֆուտպոլի տիտաններու, զուիցերիական ֆուտպոլը չէ վարգացած: Սակայն, վերջին տարիներուն դրական զարգացում մը կայ այս երկրի ֆուտպոլի ընթացքին մէջ: Չուիցերիական Պագէլ խումբը կ'ունենայ տպաւորիչ մրցումներ եւ կ'արձանագրէ դրական արդիւնքներ «Չեմփիլընզ Լիկ»ի մրցումներուն: Բնականաբար, այս մէկը իր անդրադարձը պիտի ունենայ ազգային խումբին ելոյթներուն մակարդակին եւ արդիւնքներուն վրայ: Մանաւանդ փորձառու մարզիչ Օթ-

մար Հիցֆիլտ գիտէ օգտուիլ բոլոր հնարաւորութիւններէն: Յիշենք նաեւ, որ նախորդ մոնտիալին միակ կազմը, որ յաջողեցաւ Սպանիան պարտութեան մատնել, Չուիցերիան էր:

Չուիցերիա կը գտնուի Եւրոպայի մէջ: Ան իր առաջին



մրցումը պիտի կատարէ Յունիս 15-ին, էքուատորի դէմ: Հաւասարակշռուած մրցում մը, որուն յաղթականը մեծ քայլեր պիտի առնէ Բ. հանգրուան անցնելու: Երկրորդ մրցումը Մոլիէրի երկրին դէմ, զուիցերիացիներուն համար պիտի ըլլայ կարեւոր: Անոնք առնուազն պիտի փորձեն հաւասարութիւն մը արձանագրել, որպէսզի իրենց յոյսերը վառ պահեն մրցաշարքը շարունակելու: Երրորդ մրցումը Հոնտուրասի դէմ՝ նժարը ի նպաստ ժա-

մացոյցի երկրին է: Թէեւ Հոնտուրաս տոկոն կազմ է, սակայն զուիցերիացիք կրնան յաղթել անոնց եւ անցնիլ Բ. հանգրուան:

Մարզիչ Հիցֆիլտ շատ բան վստահած է մասնաւորաբար օտարական մարզիկներուն, որոնք անուանի ակումբներու մաս կազմելով ձեռք բերած են մեծ փորձառութիւն: Այս բոլոր տուեալները կը յուշեն, որ զուիցերիացիներուն ճամբորդութիւնը կրնայ երկար տեւել Պրագիլի մէջ:

Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Տիէկօ Պենալիօ (30)	50 մասնակցութիւն (0 կոլ)	Վոլպուրկ
Եան Սոմբր (25)	5 մասնակցութիւն (0 կոլ)	Պագէլ
Սթեֆան Լիշսթէյնրր (30)	61 մասնակցութիւն (4 կոլ)	Եոկվենթուս
Ֆիլիպ Սանտերոս (29)	52 մասնակցութիւն (5 կոլ)	Վալեսիա
Եոհան ճուրու (27)	43 մասնակցութիւն (1 կոլ)	Համպուրկ
Սթիւ Վոն Պերկըն (30)	40 մասնակցութիւն (0 կոլ)	Եանկ Պոյզ
Ռիքարտօ Ռոտտիկէզ (21)	19 մասնակցութիւն (0 կոլ)	Վոլպուրկ
Միքայէլ Լանկ (23)	5 մասնակցութիւն (1 կոլ)	Կրասնոփըրզ
Թրանքիօ Պարնեթթա (28)	73 մասնակցութիւն (10 կոլ)	Ա. Ֆրանքֆորթ
Կոխան Ինլըր (29)	71 մասնակցութիւն (6 կոլ)	Նափոլի
Կելսըն Ֆեռնանտէզ (27)	46 մասնակցութիւն (2 կոլ)	Ֆրայպուրկ
Վալոն Պեհրամի (29)	46 մասնակցութիւն (4 կոլ)	Նափոլի
Պլերիմ Ծեմայլի (28)	32 մասնակցութիւն (1 կոլ)	Նափոլի
Խերտան Շաքիրի (22)	31 մասնակցութիւն (8 կոլ)	Պայէրն Միւնիխ
Կրանիթ Խաքա (21)	24 մասնակցութիւն (4 կոլ)	Մուլլենկլատպախ
Վալենթին Սթոքըր (25)	22 մասնակցութիւն (3 կոլ)	Պագէլ
Փիրմին Շվեկլըր (27)	14 մասնակցութիւն (3 կոլ)	Ֆրանքֆորթ
Ատմիր Մեհմետի (23)	19 մասնակցութիւն (1 կոլ)	Ֆրայպուրկ
Մարիօ Կավրանովիչ (24)	10 մասնակցութիւն (4 կոլ)	Յիւրիխ
Հարիս Սեֆերովիչ (22)	9 մասնակցութիւն (1 կոլ)	Ռ. Սոսիէտատ
Ժոզիպի Տրմիչ (21)	5 մասնակցութիւն (2 կոլ)	Նիւրնբերկ
Ռեթօ Յիկլըր (28)	34 մասնակցութիւն (1 կոլ)	Սասուլօ
էրէն Տերտիօք (25)	46 մասնակցութիւն (8 կոլ)	Պ. Լեւերքուզըն

ԷՔՈՒԱՏՈՐ



Մոնտիալի մասնակցություն.- 2 անգամ (2002, 2006)

Արդիւնքներ.- Երկրորդ հանգրուան (2006)

Մրցում.- 7 մրցում՝ 3 յաղթանակ, 4 պարտություն

Կոլ.- նշանակած 7 կոլ, ստացած 8 կոլ

Մարզիչ.- Ռեյնալտո Ռուեյտա
Խմբապետ.- Անթոնիո Վալենսիա
Պաշտոնական տարագ.- Դեդիո

Նախապէս երկու անգամ մոնտիալներու մասնակցած էքուատոր այնքան ալ ճանչցուած չէ իր ֆուտպոլով: Անոնք աւելի ծանօթ են իրենց նշանաւոր էսքոպարով: Իսկ էք-

ուատորցիներուն ներկայացուցած ֆուտպոլը նման չէ Արժանի կամ Պրագիլի ֆուտպոլին, այլ՝ մօտ է Ուրուկուէյի, Չիլիի եւ Քոլումպիոյ ֆուտպոլին:



Հակառակ այս բոլորին, էքուատորցիք յաջողեցան ապահովել մոնտիալի իրենց տոմսը եւ կազմակերպիչ Պրագիլի, Արժանիի, Ուրուկուէյի եւ Քոլումպիոյ հետ պիտի ներկայացնեն Հարաւային Ամերիկան:

Բարեբախտաբար, էքուատոր կը գտնուի համեմատա-

բար դիւրին խմբակի մը մէջ եւ հնարաւորութիւնը ունի անգամ մը եւս ապահովելու երկրորդ հանգրուանի իր մասնակցութիւնը: Առաջին հերթին ան պիտի մրցի Զուլցերիոյ դէմ, որ նոյնպէս պիտի ուզէ գրաւել խմբակի առաջին երկու դիրքերէն մէկը: Հաւանաբար այս մրցումը ճշդէ թէ անոնցմէ ո՞վ պիտի անցնի Բ. հանգրուան: Յաջորդ մրցումը Հոնտուրասի դէմ է: Այս վերջինները կը ներկայացնեն տոկուն եւ քիչ մըն ալ կոշտ ֆուտպոլ: Անոնք կրնան յոգնեցնել էքուատորցիները եւ նոյնիսկ անակնկալ մը հրամցնել անոնց: Վերջին մրցումը ամէնէն դժուարն է: էքուատոր պիտի մրցի խմբակին գլխաւոր թեկնածու Յրանսայի դէմ, որ նախատեսած է բաւական հեռուները երթալ:

Ահա այս դժուար առաքելութեան դիմաց մարզիչ Ռուէյտա մեծ հնարաւորութիւններ չունի: Ան պիտի վստահի Եուենայթրտի մարզիկներէն Անթոնիո Վալենսիայի: Մնացեալ մարզիկները միջազգային գետնի վրայ անծանօթ մարզիկներ են:

Անթոնիո Վալենսիա պիտի յաջողի՞ մէկ ծաղիկով գարուն բերել:

Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Ալեքսանտր Տոմինկէզ (26)	18 մասնակցութիւն (0 կոլ)	Էլ. Տի. Եու. Քիթո
Ատրիան Պոնէ (25)	3 մասնակցութիւն (0 կոլ)	Էլ Նասիոնալ
Ուոլթըր Այովի (34)	88 մասնակցութիւն (8 կոլ)	Փաչուքա
Խորիէ Կուակուա (26)	56 մասնակցութիւն (2 կոլ)	Էմելէք
Խուան Փարետէզ (25)	35 մասնակցութիւն (0 կոլ)	Պարսելոնա (էք)
Յրիքսըն Էրազօ (25)	34 մասնակցութիւն (1 կոլ)	Յլամենկօ
Կապրիէլ Աշիլիէ (29)	20 մասնակցութիւն (0 կոլ)	Էմելէք
Օսքար Պակի (31)	20 մասնակցութիւն (0 կոլ)	Էմելէք
Քրիսթիան Ռամիրէզ (19)	2 մասնակցութիւն (0 կոլ)	Ֆ. Տիւսըլտորֆ
Էտիսըն Մենտէզ (35)	108 մասնակցութիւն (18 կոլ)	Սանթա Ֆէ.
Սեկունտօ Քասթիօ (31)	79 մասնակցութիւն (9 կոլ)	Ալ Հիլալ
Անթոնիօ Վալենսիա (28)	68 մասնակցութիւն (8 կոլ)	Մ. Եունայթըտ
Լուիզ Սարիթամա (30)	48 մասնակցութիւն (0 կոլ)	Պարսեզոնա (էք)
Քրիսթիան Նոպոա (28)	40 մասնակցութիւն (2 կոլ)	Տ. Մոսկուա
Ճեֆերսըն Մոնթերօ (24)	37 մասնակցութիւն (7 կոլ)	Մորեյլիա
Էններ Վալենսիա (24)	8 մասնակցութիւն (2 կոլ)	Փաչուքա
Յիտէլ Մարթինէզ (24)	6 մասնակցութիւն (2 կոլ)	Թիխուանա
Յերնանտօ Կայպոր (22)	2 մասնակցութիւն (0 կոլ)	Էմելէք
Մաքսիմօ Պանկերա (28)	22 մասնակցութիւն (0 կոլ)	Պարսելոնա (էք)
Ռենաթօ Իպարա (23)	17 մասնակցութիւն (0 կոլ)	Վիթէս
Ժոաօ Ռոխաս (24)	27 մասնակցութիւն (2 կոլ)	Քրուզ Ազուլ
Միքայէլ Արոյօ (26)	22 մասնակցութիւն (2 կոլ)	Աթլանթէ
Ճէյմ Այովի (26)	28 մասնակցութիւն (9 կոլ)	Թիխուանա
Նարքիզօ Մինա (31)	12 մասնակցութիւն (1 կոլ)	Աթլանթէ
Ճոֆրէ Կերոն (28)	18 մասնակցութիւն (0 կոլ)	Պէյճհինկ Կուաոն



ՖՐԱՆՍԱ



Մոնտիալի մասնակցություն.- 13 անգամ (1930, 1934, 1938, 1954, 1958, 1966, 1978, 1982, 1986, 1998, 2002, 2006, 2010)

Արդիւնքներ.- Ախոյեան (1998), երրորդ (1986, 2006), երրորդ (1982)

Մրցում.- 70 մրցում՝ 37 յաղթանակ, 13 հաւասարություն, 20 պարտություն

Կոլ.- Նշանակած 123 կոլ, ստացած

80 կոլ

Մարգիչ.- Տիտիե Տեշան
Խմբապետ.- Զիկո Լորիս
Պաշտօնական տարագ.- Կապոյտ

Ֆրանսական ֆուտբոլը իր զարթոնքը սկսաւ ապրիլ 1980-ական թուականներուն: Այդ տարիներու (1982-ի եւ 1986-ի մոնտիալներու) խումբը աստղերու հոյլ մըն էր: Փլաթինի, Թիկանա, Ռոշըթօ, Ժիրէս, Ֆեռնանտէզ եւ ընկերներ զրեցին մոնտիալներու պատմութեան գեղեցկագոյն էջերը: Դժբախտաբար անոնք չկրցան հասնիլ տիտղոսին:

Տասնամեակ մը ետք, Զիտանի, Փլեթի, Տեշանի, Տեսայիի սերունդը աւելի բախտաւոր եղաւ: 1998-ին, իրենց երկրին մէջ տեղի ունեցող մոնտիալին, անոնք արժանաբար եւ առաջին անգամ ըլլալով տիրացան տիտղոսին: Աւելի ուշ, ութը տարի ետք, Ֆրանսացիք հասան աւարտականին: Զիտան, Հանրի եւ ընկերները փենալթիներով տեղի տուին իրենց դրացիին՝ Իտալիոյ դիմաց:

2010-ին, Ֆրանսիացիք բաւական լաւ կազմով մը մեկնեցան Հարաւային Աֆրիկէ: Դժբախտաբար, անոնց ներքին «խոհանոցը» հարցեր ու-

նէր եւ խումբը առաջին հանգրուանին իսկ դուրս մնաց եւ գլխիկոր վերադարձաւ Փարիզ:

Այս մոնտիալին Ֆրանսա կը մասնակցի բաւական լաւ



պատրաստուած կազմով մը: 2012-ի Եւրոպայի ախոյեանութեան Ֆրանսացիք նախաճաշակ մը տուին այս մոնտիալին իրենց ներկայացնելիք ֆուտբոլին մասին:

Զտումի մրցումներուն Ֆրանսացիք անցան փլէյ-օֆով: Ախոյեան Սպանիոյ հետ միեւնոյն խմբակին մէջ գտնուելով, անոնք չկարողացան գերազանցել ախոյեան-

ները, բայց մնացեալ մրցակիցներուն դէմ անոնք դըժլարութիւն չունեցան:

Մոնտիալի առաջին հանգրուանին Ֆրանսա խմբակից ունի ժամացոյցի երկիր Զուիցերիան, Կեդրոնական Ամերիկայի տոկուն կազմերէն Հոնտուրասը եւ Հարաւային Ամերիկայի էքուատորը: Անոնց ֆուտբոլի պատմութեան նայելով, Ֆրանսա-

Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Հիկո Լորիս (27)	55 մասնակցութիւն (0 կոլ)	Թոթենհամ
Սթիւ Մանտանտա (29)	16 մասնակցութիւն (0 կոլ)	Մարսէյ
Մաթիու Տեպուշի (28)	19 մասնակցութիւն (2 կոլ)	Նիւքէսըլ
Փաթրիս Էլրա (32)	55 մասնակցութիւն (0 կոլ)	Մ. Եոնայթըտ
Ռաֆայէլ Վարան (20)	5 մասնակցութիւն (0 կոլ)	Ռ. Մատրիտ
Մամատու Սախօ (24)	16 մասնակցութիւն (2 կոլ)	Լիվըրփուլ
Պաքարի Սանիա (31)	39 մասնակցութիւն (0 կոլ)	Արսենալ
Լորան Գոսիէլնի (28)	15 մասնակցութիւն (0 կոլ)	Արսենալ
Եոհան Գապայէ (28)	27 մասնակցութիւն (2 կոլ)	Փարիզ Մ. ժ.
Ֆրանք Ռիպէրի (31)	81 մասնակցութիւն (16 կոլ)	Պ. Միլնիի
Մաթիու Վալպիւէնա (28)	31 մասնակցութիւն (5 կոլ)	Մարսէյ
Անթուան Կրիզման (23)	1 մասնակցութիւն (0 կոլ)	Ռ. Սոսիէտատ
Ճոշուա Կիլավոկի (23)	5 մասնակցութիւն (0 կոլ)	Սէնթ Էթիէն
Պլէյզ Մաթիտի (27)	29 մասնակցութիւն (1 կոլ)	Փարիզ Մ. ժ.
Տիմիթրի Փայէ (27)	7 մասնակցութիւն (0 կոլ)	Մարսէյ
Մուսա Սիսոքօ (24)	14 մասնակցութիւն (0 կոլ)	Նիւքէսըլ
Փօլ Փոկպա (21)	8 մասնակցութիւն (1 կոլ)	Եոկենթուս
Օլիվըր Ժիրու (27)	27 մասնակցութիւն (5 կոլ)	Արսենալ
Քարիմ Պենզիմա (26)	65 մասնակցութիւն (19 կոլ)	Ռ. Մատրիտ
Լոիք Ռէմի (27)	22 մասնակցութիւն (4 կոլ)	Նիւքէսըլ
Էրիք Ապիտալ (34)	67 մասնակցութիւն (0 կոլ)	Մոնաքօ
Ատիլ Ռամի (28)	26 մասնակցութիւն (1 կոլ)	Միլան
Եոան Ճորքուֆ (27)	31 մասնակցութիւն (4 կոլ)	Լիոն
Սամիր Նասրի (26)	41 մասնակցութիւն (5 կոլ)	Մ. Սիթի

ցիք պէտք է յաջողին անցնիլ Բ. Հանգրուան: Սակայն ֆուլթայոլը անակնկալներ է: 2010-ի մոնտիալին գուլիցերիացիք առաջին մրցումին յաղթեցին սպանացիներուն: Նման տհաճ անակնկալ մը,

փոքր սայթաքում մը եւ ֆրանսացիք կանուխ կը վերադառնան տուն:

Ֆրանսա չի նկատուիր բաժակի գլխաւոր թեկնածուներէն: Բայց ան մեծ աուսայտըր մըն է: Մար-

զիչ Տիտիէ Տեշան (1998-ի ախոյեան կազմի աստղերէն եւ խմբապետը) կազմած է երիտասարդ եւ ներդաշնակ կազմ մը: Աշխարհի լաւագոյն յառաջապահներէն ֆրանք Ռիպերի ընկերները

պիտի առաջնորդէ դէպի նոր յաղթանակներ՝ մոնտիալի պատմութեան էջերուն վրայ հպարտալի տողեր գրելով իրենց մասին:

ՀՈՆՏՈՒՐԱՍ



Մոնտիալի մասնակցութիւն.- 2 անգամ (1982, 2010)

Մրցում.- 6 մրցում՝ 0 յաղթանակ, 3 հաւասարութիւն, 3 պարտութիւն

Կոլ.- Նշանակած 2 կոլ, ստացած 6 կոլ

Մարզիչ.- Լուիս Ֆերնանտէ Սուարեզ
Խմբապետ.- Նոէլ Վալատարես
Պաշտօնական տարագ.- Գերմակ



Հոնտուրասի առաջին եղաւ: Մինչ իր դրացի Սալ-մասնակցութիւնը 1982-ի վատորը ծանր պարտութիւն-մոնտիալին նշանակալից ներ կ'արձանագրէր, հոն-

տուրասցիք կը ներկայացնէին դժուար տեղի տուող ֆուլթայոլ մը: Այլ խօսքով,

դրական տպաւորութիւն ձգելով հոնտուրասցիք հեռացան մոնտիալէն:

Անցեալ մոնտիալին եւս հոնտուրասցիք ներկայացին յամառ ֆուլթայոլ: Ճիշդ է, որ անոնք իրենց երկու մասնակցութիւններուն առաջին հանգրուանէն դուրս մնացած են, սակայն յաջողած են արձանագրել երեք հաւասարութիւն, ինչ որ բարձր ցուցանիչ է Կեդրոնական Ամերիկայէն մասնակցող նորեկ կազմի մը համար:

Հաւանաբար այս մոնտիա-

Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Նոէլ Վալատարէս (36)	120 մասնակցութիւն (0 կոլ)	Օլիմպիա
Տենիս Էսքոպէր (34)	25 մասնակցութիւն (0 կոլ)	Օլիմպիա
Մայնոր Ֆիկուերոա (31)	102 մասնակցութիւն (3 կոլ)	Հալ Սիթի
Վիլթոր Պերնարտէզ (31)	75 մասնակցութիւն (4 կոլ)	Սան Խոսէ
Խուան Կարսիա (26)	31 մասնակցութիւն (1 կոլ)	Ուիլլըն
Առնոլտ Փերայթա (25)	20 մասնակցութիւն (0 կոլ)	Ռէյնալդո
Էմիլիո Իզակիրէ (27)	66 մասնակցութիւն (1 կոլ)	Սելթիք
Էրիք Նորալէս (29)	28 մասնակցութիւն (2 կոլ)	Ինտի Իլեւըն
Օսքար Կարսիա (29)	92 մասնակցութիւն (2 կոլ)	Հիւսթըն Տինամօ
Խորխէ Բլարոս (28)	46 մասնակցութիւն (3 կոլ)	Մոթակոա
Մարվին Զաւէզ (30)	39 մասնակցութիւն (4 կոլ)	Քոլորատօ
Մարիօ Մարթինէզ (24)	34 մասնակցութիւն (3 կոլ)	Ռէալ Էսփանիա
Էտտէր Տելկատօ (27)	25 մասնակցութիւն (0 կոլ)	Ռէալ Էսփանիա
Լուիս Կարիտօ (23)	18 մասնակցութիւն (0 կոլ)	Օլիմպիա
Էնտի Նաժար (21)	15 մասնակցութիւն (1 կոլ)	Անտըրլէյթ
Պրայըն Աքոսթա (20)	1 մասնակցութիւն (0 կոլ)	Ռէալ Էսփանիա
Ճերի Պենկըսթըն (27)	41 մասնակցութիւն (19 կոլ)	Նիւ Ինկլըիտ
Ճերի Փալասիոս (32)	21 մասնակցութիւն (5 կոլ)	Ալաթիլյէլէնս
Ռոնի Մարթինէզ (25)	10 մասնակցութիւն (1 կոլ)	Սոսիէտատ (Հոն)
Ռոմէլ Բիթթօ (22)	2 մասնակցութիւն (0 կոլ)	Օլիմպիա
Տիեկօ Ռեյէս (21)	2 մասնակցութիւն (0 կոլ)	Սոսիէտատ (Հոն)
Քարլօ Քոսթի (31)	68 մասնակցութիւն (30 կոլ)	Ռէալ Էսփանիա
Ուիլսըն Փալարիոս (29)	92 մասնակցութիւն (6 կոլ)	Սթոք Սիթի
Ռոժէր Էսփինոզա (27)	39 մասնակցութիւն (4 կոլ)	Ուիլլըն






լին ալ հոնտուրասցիք մեծ յաջողութիւններ չունենան, բայց եւ այնպէս անոնց մրցակիցները միշտ ալ զգոյշ են եւ շատ կը դժուարանան կող նշանակել այս կազմին բերդէն ներս:

Հոնտուրաս իր կազմին մէջ աստղեր չունի: Կան կարգ մը խաղացողներ, որոնք մաս կը կազմեն եւրոպական ոչ շատ անուանի ակումբներու: Այս ֆուլթայլիստները եւրոպական փորձառութիւն ունենալով կըրնան մեծ օգտակարութիւն ունենալ ազգային խումբին:

Հոնտուրասի առաջին հանգրուանի մրցակիցներն են Ֆրանսան, Զուլիցերիան եւ Էքուատորը: Բնականաբար, հոնտուրասցիներուն ամէնէն դժուար մրցումը պիտի ըլլայ առաջին մրցու-

մը՝ Ֆրանսայի դէմ: Անոնք պիտի փորձեն նախ պարտութիւն չկրել, որպէսզի յաջորդ հանգրուան անցնելու իրենց յոյսերը վառ պահեն: Յաջորդ մրցումը Էքուատորի դէմ է: Հոս հաւանական է, որ հոնտուրասցիք փորձեն մոնտիալի իրենց առաջին յաղթանակը արձանագրել: Զուլիցերիոյ դէմ մրցումը կընայ ճակատադրական ըլլայ երկու կազմերուն համար: Այս մրցումը հաւանաբար ճշդէ խմբակին երկրորդ կազմը, որ կընայ անցնիլ Բ. հանգրուան:

Հոնտուրաս այս մոնտիալին ունի երկու թիրախ. նախ՝ արձանագրել յաղթանակ եւ ապա անցնիլ Բ. հանգրուան: Յունիս 25-ին, խաղի աւարտին, անոնք պիտի պատրաստուին յաջորդ հանգրուանին:



with the complements of

ABRIMIAN BROTHERS, NEW YORK

ԱՐԺԱՆԹԻՆ



Մոնտիալի մասնակցություն.- 15 անգամ (1930, 1934, 1958, 1962, 1966, 1974, 1978, 1982, 1986, 1990, 1994, 1998, 2002, 2006, 2010)

Արդիւնքներ.- Ախոյեան՝ (1978, 1986) երկրորդ՝ (1930, 1990)

Մրցում.- 70 մրցում՝ 37 յաղթանակ, 13 հաւասարութիւն, 20 պարտութիւն

Կոլ.- Նշանակած 123 կոլ, ստացած

80 կոլ

Մարզիչ.- Ալեխանտրո Սապելլա

Խմբապետ.- Լիոնել Մեսսի

Պաշտօնական տարագ.- Բաց կապոյտ եւ ձերմակ

Արժանթինցիք այս տարի մոնտիալին կը մասնակցի իրենց դրացի «թշնամի»ին դաշտին վրայ ախոյեան հանդիսանալու յոյսերով: Անոնք

վերջին մոնտիալներուն չյաջողեցան, այնպէս ինչպէս իրենց եւ աշխարհի լաւագոյն ֆուտպոլիստ Մարատոնայի օրերուն, հակառակ այն իրո-



ղութեան, որ կարգ մը մոնտիալներու ունէին բաւական լաւ կազմեր եւ ի վիճակի էին մրցելու՝ բաժակին տիրանալու համար:

Արժանթինի մոնտիալներու մասնակցութեան պատմութիւնը բաւական ճոխ է: Սակայն անկրկնելին պիտի մնայ անոնց առաջնորդին՝

Մարատոնայի տարին (1990), երբ երկրորդ անգամ ըլլալով տիրացան բաժակին: Ճիշդ է, որ անոնց կազմը բացառիկ չէր, սակայն Մարատոնայ ջողեցաւ իրագործել այն ինչ որ ամբողջ կազմ մը յաճախ կը ձախողի:

Այս մոնտիալի նախօրեակին ալ արժանթինի կազմը այնքան հզօր չի թուիր ըլլալ: Մարզիչ Սապելլա գիտակից է այս իրականութեան, բայց եւ այնպէս ան իր տրամադրութեան տակ ունի վերջին տարիներու աշխարհի լաւագոյն ֆուտպոլիստը՝ Լիոնել Մեսսին: Մեսսի վերջին շրջանին վերագտած է իր փայլուն խաղարկութիւնը եւ իր ակումբին՝ Պարսայի հետ յաղթանակէ յաղթանակ կը սուրայ: Մարզիչին կը մնայ լաւագոյնս օգտուիլ Մեսսիի նման ֆուտպոլիստի մը ներկայութենէն ունեցած բոլոր հնարաւորութիւններէն: Բնականաբար, Մեսսի առանձին չէ. յառաջապահներ Ակուերօ եւ Հիկուէն լաւագոյնս կրնան օգնել Մեսսիի: Սակայն, յետսպահ եւ մանաւանդ միջնապահ գիծերը յուսատու չեն:

Առաջին հանգրուանին արժանթինցիք կրնան դժուարութիւններ չունենալ: Առաջին մրցումին անոնք

Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Սերժիօ Ռոմերօ (27)	45 մասնակցութիւն (0 կոլ)	Մոնաքօ
Մանտարօ Անտուեար (30)	10 մասնակցութիւն (0 կոլ)	Քաթանիա
Ակոսթին Օրիօն (32)	3 մասնակցութիւն (0 կոլ)	Պոքա Ճիւնիօրդ
Փապլօ Զապալեթա (29)	36 մասնակցութիւն (0 կոլ)	Մանչեսթըր Սիթի
Ճետերիքօ Ճերնանտէզ (25)	24 մասնակցութիւն (2 կոլ)	Նափոլի
Մարքոս Ռոխօ (24)	20 մասնակցութիւն (0 կոլ)	Ս. Լիգայօն
Էգեկիէլ Կարէյ (27)	18 մասնակցութիւն (0 կոլ)	Պենֆիլթա
Նիքոլաս Օթամենտի (26)	16 մասնակցութիւն (1 կոլ)	Աթլետիքօ Միներօ
Հիլկօ Քամփանիարօ (33)	13 մասնակցութիւն (0 կոլ)	Ի. Միլան
Խոսէ Մարի Պասանթա (29)	8 մասնակցութիւն (0 կոլ)	Մոնթերէյ
Լիսանտրօ Լոփէզ (24)	4 մասնակցութիւն (0 կոլ)	Կեթաֆէ
Ճինօ Փերուցի (22)	4 մասնակցութիւն (0 կոլ)	Քաթանիա
Խալիէր Մասքերանօ (29)	96 մասնակցութիւն (2 կոլ)	Պարսելոնա
Մաքսի Ռոտրիկէզ (33)	53 մասնակցութիւն (15 կոլ)	Օլտ Պոյզ
Ճեռնանտօ Կակօ (27)	47 մասնակցութիւն (0 կոլ)	Պոքա Ճիւնիօրդ
Անիէլ Տի Մարիա (26)	45 մասնակցութիւն (9 կոլ)	Բէլալ Մատրիտ
Էվեր Պանեկա (25)	24 մասնակցութիւն (2 կոլ)	Օլտ Պոյզ
Խոսէ Օռնեսթօ Սոզա (28)	19 մասնակցութիւն (1 կոլ)	Ա. Մատրիտ
Լուքաս Պիլիա (28)	16 մասնակցութիւն (0 կոլ)	Լացիօ
Օկուսթօ Ճեռնատէզ (27)	7 մասնակցութիւն (1 կոլ)	Սելթա Վիկօ
Ռիքարտօ Ալվարէզ (25)	5 մասնակցութիւն (0 կոլ)	Ի. Միլան
Լիոնել Մեսսի (26)	84 մասնակցութիւն (37 կոլ)	Պարսելոնա
Սերժիօ Ակերօ (25)	50 մասնակցութիւն (21 կոլ)	Մ. Սիթի
Կոնգալօ Հիկուէն (26)	36 մասնակցութիւն (21 կոլ)	Նափոլի
Էգիեկէլ Լաւեցի (28)	29 մասնակցութիւն (6 կոլ)	Փարիզ Ս. ժ.



պիտի մրցին անծանօթ եւ անփորձ Պոսնիոյ դէմ, ապա անոնց մրցակիցները պիտի ըլլան համեմատաբար տկար նկատուող Իրանը եւ ափրիկեան հզօրագոյն կազմերէն Նիճերիան: Արժանթինցիք գէշ յիշատակներ ունին Նիճերիոյ հետ, երբ քսան տարի առաջ, 1994-ի մոնտիալին, Ա-

հանգրուանի մրցումներուն պարտուեցան ափրիկեան այս կազմէն: Ճիշդ է, որ Նիճերիա այնքան հզօր չէ, ինչպէս որ էր քսան տարի առաջ,

սակայն պատմութիւնը ցոյց կու տայ, որ արժանթինցիք միշտ ալ կը դժուարանան ափրիկեան կազմերու դէմ:

սակայն պատմութիւնը ցոյց կու տայ, որ արժանթինցիք միշտ ալ կը դժուարանան ափրիկեան կազմերու դէմ:

ՊՈՍՆԻԱ



FIFA WORLD CUP
Brasil

Մոնտիալի մասնակցութիւն.- Առաջին անգամ
Մարզիչ.- Սաֆէք Սիւսիչ
Խմբապետ.- Էմիր Սփահիչ
Պաշտօնական տարագ.- Գերմակ



Պոսնիոյ ազգային խումբը առաջին անգամ ըլլալով պիտի մասնակցի մոնտիալի եւ, հետեւաբար, մոնտիալի պատմութեան անոր էջերը տակաւին սպիտակ են: Ո՛չ միայն մոնտիալի, այլեւ անոր առաջին մասնակցութիւնն է միջազգային մրցաշարքի մը եւ այս պատճառով ալ Պոսնիոյ ֆուտպոլի ազգային խումբը գրեթէ անծանօթ է շատերուն:

լայ Արժանթինը: Անոնք իրենց առաջին մրցումին պիտի մրցին Մեսսիի եւ ընկերներուն դէմ, որոնք մեծ ակընկալութիւններ ունին այս

մոնտիալին: Եթէ միջազգային գետնի վրայ կարելի չէ այս երկու հաւաքականները համեմատել իրարու հետ, ապա պէտք է ընդգծել, որ

պոսնիացի ֆուտպոլիստներուն մեծամասնութիւնը մաս կազմելով ոչ տեղական կազմերու՝ ունի մեծ փորձառութիւն եւ ի վիճակի է կազ-

Տասնամեակներ շարունակ մաս կազմած ըլլալով նախկին Եուկոսլաւիոյ, պոսնիացի ֆուտպոլիստները հանդէս եկած են որպէս եուկոսլաւներ:

Անուն եւ Տարիք

- Ասմիր Պեկովիչ (26)
- Ասմիր Աւտուքիչ (32)
- ժասմին Ֆայզիչ (27)
- Էմիր Սփահիչ (33)
- Մանսուր Մուլժա (30)
- Աւտիա Վըրսաբեիչ (28)
- Օնէէն Վրանյես (24)
- Էրմին Պիչաքիչ (24)
- Էրվին Զուքանովիչ (27)
- Թոնի Սիւնյիչ (25)
- Սէատ Քուլասինաչ (20)
- Միրաչեմ Փեանիչ (24)
- Սէյատ Սալիհովիչ (29)
- Հարիս Մետունժանին (29)
- Սենատ Լուլիչ (26)
- Էտին Վիսքա (24)
- Իզէթ Հայրովիչ (22)
- Թինո Սվէն Սիւսիչ (22)
- Անէլ Հաժիչ (24)
- Էտին Մեքօ (28)
- Վետատ Իպիսելիչ (29)
- Զվէէզտան Միսիմովիչ (31)
- Սենիատ Իպրիչիչ (28)
- Էլվիր Ռահիմիչ (37)
- Ատնան Զահիրովիչ (24)

Հաւաքական եւ Կոլ

- 28 մասնակցութիւն (0 կոլ)
- 3 մասնակցութիւն (0 կոլ)
- 0 մասնակցութիւն (0 կոլ)
- 72 մասնակցութիւն (3 կոլ)
- 22 մասնակցութիւն (0 կոլ)
- 12 մասնակցութիւն (0 կոլ)
- 11 մասնակցութիւն (0 կոլ)
- 7 մասնակցութիւն (1 կոլ)
- 6 մասնակցութիւն (0 կոլ)
- 5 մասնակցութիւն (0 կոլ)
- 2 մասնակցութիւն (0 կոլ)
- 46 մասնակցութիւն (8 կոլ)
- 40 մասնակցութիւն (4 կոլ)
- 34 մասնակցութիւն (5 կոլ)
- 33 մասնակցութիւն (1 կոլ)
- 8 մասնակցութիւն (0 կոլ)
- 5 մասնակցութիւն (1 կոլ)
- 1 մասնակցութիւն (0 կոլ)
- 1 մասնակցութիւն (0 կոլ)
- 60 մասնակցութիւն (33 կոլ)
- 53 մասնակցութիւն (20 կոլ)
- 80 մասնակցութիւն (25 կոլ)
- 41 մասնակցութիւն (4 կոլ)
- 40 մասնակցութիւն (0 կոլ)
- 20 մասնակցութիւն (0 կոլ)

Ակումբ

- Սթոք Սիթի
- Պանիա Լուքա
- Աալէն
- Պ. Լեւերքուզըն
- Ֆրայպուրկ
- Հայդուկ Սփլիթ
- Էլազիկսփոր
- Ա. Պրանչվայկ
- Ճէնթ
- Զորիա Լուհանսք
- Շալքէ
- Ռոմա
- Հոֆընհայմ
- Կազիանթեփսփոր
- Լացիօ
- Սթանպուլ
- Կալաթասարայ
- Հայդուկ Սփլիթ
- Շթուրմ Կրազ
- Մ. Սիթի
- Շթուլթկարթ
- Կուիզու Ռենհէ
- Էրսիեսփոր
- Սէ. Էս. Քա. Մոսկուա
- Պոխում

մակերպուած գեղեցիկ ֆուտբոլ ներկայացնելու եւ, ինչու է, նաեւ անակնկալներ ստեղծելու: Նիճերիոյ դէմ մրցումը կրնայ ճակատագրական ըլլալ Պոսնիոյ համար: Ճիշդ է, որ ափրիկեցիք չունին իրենց նախկին փայլքը, սակայն անոնք կը մնան տոկուն կազմ մը: Պոսնիացի-

ներուն համար հաւանաբար ամէնէն դիւրին մրցումը ըլլայ Իրանի դէմ կատարուելիքը: Ասիացիք այնքան ալ չեն մտահոգեր պոսնիացիները, որքան միւս երկու մրցակիցները:

Մարզիչ Սիւսիչ, որ նախկին Եուկոսլաւիոյ մաս կազմած է 1980-ական թուական-

ներուն, իր տրամադրութեան տակ ունի ատակ մարզիկներ, որոնցմէ ամէնէն հուշակաւորն ու վտանգաւորը Մանչեսթրը Սիթիի յառաջապահ Ծեքոն է, որ միաժամանակ ազգային խումբին կող-սքորըն է:

Թէ՛ Պոսնիոյ համակիրները եւ թէ՛ ֆուտբոլիստները

մեծ սպասումներ ունին այս մոնտիալէն: Բնականաբար, անոնք պիտի չուզեն որ առաջին հանգրուանի աւարտին վերադառնան իրենց հայրենիքը: Այս անակնկալը չպատահելու համար պոսնիացի ֆուտբոլիստներուն կը մնայ զտումի մրցումներու իրենց յաղթարշաւը շարունակել:

ԻՐԱՆ



Մոնտիալի մասնակցութիւն.- 3 անգամ (1978, 1998, 2006)

Մրցում.- 9 մրցում՝ 1 յաղթանակ, 2 հաւասարութիւն, 6 պարտութիւն
Կոլ.- Նշանակած 6 կոլ, ստացած 18 կոլ

Մարզիչ.- Քարլոս Քուէյրոզ
Խմբապետ.- Ճաւատ Ներունամ
Պաշտօնական տարագ.- Ճերմակ



Իրանի մասնակցութիւնը մոնտիալներուն բաւական հետաքրքրական կը թուի ըլլալ: Առաջին հայ մարզիկը, որ մոնտիալի մասնակցած է, Անդրանիկ Իսկէնտէրեանն է, Իրանի 1978-ի կազմին հետ: Այս մոնտիալին ալ Իրանի կազմին մէջ կայ հայ մարզիկ մը՝ Անդրանիկ Թէյմուրեան:

Անկասկած, իրանցիներուն համար ամէնէն նշանակալիցը կը մնայ 1998-ի մոնտիալը: Այդ մոնտիալին, անոնք իրենց քաղաքական թշնամիին՝ Միացեալ Նահանգներու հետ կը գտնուէին միեւնոյն խմբակին մէջ: Այդ մրցումը եղաւ լարուած ջիղերով, եւ իրանցիք արժանաբար տարին յաղթանակը եւ այս մէկը պիտի մնայ իրենց համար ամէնէն կարեւոր նուաճումը մոնտիալի պատմութեան մէջ:

Անուն եւ Տարիք

- Ռահման Ահմատի (33)
- Սոշա Մաքանի (27)
- ժալալ Հոսէյնի (32)
- Էհսան Հաժսաֆի (24)
- Խոսրո Հէյտարի (30)
- Փեթման Մոնթազերի (30)
- Հոսէյն Մահինի (27)
- Մեհրդատ Փուլատի (27)
- Հաշէմ Պէյքզատէ (30)
- Էմիր Սատեղի (32)
- Ահմատ Ալեւեմէ (31)
- Շոթա Խալիզատէ (24)
- Մոհամատ Խանզատէ (22)
- Ճաւատ Ներունամ (33)
- Անդրանիկ Թէյմուրեան (31)
- Մոհամատ Խալաթպարի (30)
- Ղասէմ Հատատիֆար (30)
- Եադուպ Քարիմի (22)
- Օմիտ Էպրահիմի (26)
- Ռեզա Հադիդի (25)
- Փայեամ Սատեղեան (22)
- Քարիմ Անսարիֆարտ (24)
- Ռեզա Նորուզի (31)

Հաւաքական եւ Կոլ

- 9 մասնակցութիւն (0 կոլ)
- 2 մասնակցութիւն (0 կոլ)
- 85 մասնակցութիւն (6 կոլ)
- 58 մասնակցութիւն (2 կոլ)
- 46 մասնակցութիւն (0 կոլ)
- 20 մասնակցութիւն (1 կոլ)
- 19 մասնակցութիւն (0 կոլ)
- 17 մասնակցութիւն (0 կոլ)
- 16 մասնակցութիւն (1 կոլ)
- 14 մասնակցութիւն (1 կոլ)
- 7 մասնակցութիւն (1 կոլ)
- 6 մասնակցութիւն (0 կոլ)
- 5 մասնակցութիւն (0 կոլ)
- 136 մասնակցութիւն (37 կոլ)
- 76 մասնակցութիւն (8 կոլ)
- 58 մասնակցութիւն (5 կոլ)
- 14 մասնակցութիւն (0 կոլ)
- 6 մասնակցութիւն (4 կոլ)
- 5 մասնակցութիւն (0 կոլ)
- 5 մասնակցութիւն (0 կոլ)
- 5 մասնակցութիւն (0 կոլ)
- 39 մասնակցութիւն (8 կոլ)
- 6 մասնակցութիւն (0 կոլ)

Ակումբ

- Սեփահան
- Ֆուլատ
- Փերսեփոլիս
- Սեփահան
- Էսթեքլալ
- Ում Սալալ
- Փերսեփոլիս
- Փերսեփոլիս
- Էսթեքլալ
- Էսթեքլալ
- Նաֆթ Թեհրան
- Սեփահան
- Փերսեփոլիս
- Ալ Բուէյթ
- Էսթեքլալ
- Փերսեփոլիս
- Ջոպ Ահան
- Սեփահան
- Սեփահան
- Փերսեփոլիս
- Փերսեփոլիս
- Փերսեփոլիս
- Նաֆթ Թեհրան



Իրանցիք Հարաւային Քորէայի, Մէուտական Արաբիոյ եւ Ճափոնի հետ կը նկատուին Ասիոյ Փուլի հակառակորդները: Այս երկիրները գրեթէ ներկայ են մոնտիալին:

Այս մոնտիալին իրանցիք կը գտնուին Զ. խմբակին մէջ, մրցակից ունենալով Արժանթինը, Պոսնիան եւ Նիճերիան:

Իրան իր առաջին մրցումը պիտի կատարէ Նիճերիոյ դէմ: Նիճերիացիք կորսնցուցած կը թուին ըլլալ 1990-ական թուականներու իրենց ուժականութիւնը: Իրանցիք պէտք է օգտուին Նիճերիոյ որոշ թուլութենէն, որպէսզի կարենան յաղթել եւ իրենց յոյսերը վառ պահել Բ-

հանգրուան անցնելու: Երկրորդ մրցումը Իրանի համար պիտի ըլլայ դժուար: Իրանցիք պիտի դիմագրաւեն Մեսսին եւ ընկերները, որոնք անխնայ են: Երրորդ մրցումը Պոսնիոյ դէմ վճռորոշ է: Իրանցիք դիտակից են այս իրականութեան եւ ըստ այնմ պիտի կատարեն իրենց հաշիւները:

Մարզիչ Քուէյրոզի կազմը կը բաղկանայ իրանեան ակումբներու մաս կազմող մարզիկներէ: Անոնք վստահելով իրենց խաղաոճին, մակարդակին եւ մարզիչի ցուցմունքներուն, պիտի փորձեն իրենց երկրին դրօշը երկար պահել Պրագիլի մէջ:

ՆԻՃԵՐԻԱ



Մոնտիալի մասնակցութիւն.- 4 անգամ (1994, 1998, 2002, 2010)

Արդիւնքներ.- երկրորդ հանգրուան (1994-, 1998)

Մրցում.- 14 մրցում՝ 4 յաղթանակ, 2 հաւասարութիւն, 8 պարտութիւն

Կոլ.- Նշանակած 17 կոլ, ստացած 21 կոլ

Մարզիչ.- Սթեֆըն Բէշի

Խմբապետ.- Վենսան Էնեւամա

Պաշտօնական տարագ.- Կանաչ

Իրենց առաջին երկու մասնակցութիւններուն՝ 1994-ին եւ 1998-ին, երբ Նիճերիա կը հասնէր երկրորդ հանգրուան, Փուլի ստեղծներ եւ մասնագէտներ կը կարծէին թէ մօտիկ ապագային Նիճերիա կրնայ լուրջ մրցակից ըլլալ եւ մոնտիալներուն նկատուիլ թեկնածու կամ զօրաւոր աուսայտըր:

Սակայն յաջորդ մոնտիալներուն Նիճերիա ինքզինք չարդարացուց: Ճինիտի Ճորճ, Ամոնիքա, Ամոքաչի, Քանու հեռացան ազգային խումբէն եւ նորեկները չյաջողեցան անոնց արժանի յաջորդները ըլլալ: Այսօրուան կազմին մէջ ալ հռչակաւոր Փուլի ստեղծները կը բացակային: Ճիշդ է, որ ազգային



Անուն եւ Տարիք	Հաւարական եւ Կոլ	Ակումբ
Վենսանթ Էնեւամա (31)	89 մասնակցութիւն (0 կոլ)	Լիլ
Օսթին Էյիտէ (30)	31 մասնակցութիւն (0 կոլ)	Հափոէլ
Ժոզէֆ Եոպօ (33)	94 մասնակցութիւն (7 կոլ)	Նորուիչ
Էլտըրսըն (26)	40 մասնակցութիւն (2 կոլ)	Մոնաքօ
Էֆէ Ամպրոզէ (25)	34 մասնակցութիւն (1 կոլ)	Սելթիք
Կատֆրի Օպոպոնա (23)	34 մասնակցութիւն (1 կոլ)	Ռիզեսփոր
Ազուպուիքէ Էկուէքուէ (24)	31 մասնակցութիւն (0 կոլ)	Ուորն Վուլվզ
Քենէթ Օմերուօ (20)	16 մասնակցութիւն (0 կոլ)	Միտլըզարօ
Ճոսօն Օչանիուա (23)	10 մասնակցութիւն (0 կոլ)	Աշտոտ
Քուելէ Օտուելամի (24)	8 մասնակցութիւն (0 կոլ)	Սանչայն Սթար
Ճոն Օպի Միքէլ (27)	57 մասնակցութիւն (4 կոլ)	Չելսի
Ահմէտ Մուսա (21)	34 մասնակցութիւն (5 կոլ)	Սէ-Էս-Քա-Մոսկուա
Էյիքէ Ուզոնի (26)	20 մասնակցութիւն (3 կոլ)	Էնուկօ Ռէյնճըրզ
Օկենյի Օնազի (21)	19 մասնակցութիւն (1 կոլ)	Լացիօ
Վիքթոր Մոզէս (23)	18 մասնակցութիւն (6 կոլ)	Լիվըրփուլ
Սանտէյ Մպա (25)	21 մասնակցութիւն (5 կոլ)	Աթլետիք Պասթիէ
Ննամտի Օտուամատի (23)	12 մասնակցութիւն (4 կոլ)	Պրեշիա
Նոքա Լկիեպոր (23)	11 մասնակցութիւն (3 կոլ)	Ռէյալ Պետիա
Ռուպէն Կապրիէլ (23)	10 մասնակցութիւն (1 կոլ)	Պեքերէն
Ժոէլ Օպի (22)	12 մասնակցութիւն (0 կոլ)	Փարմա
Ռեմոն Ազիզ (21)	1 մասնակցութիւն (0 կոլ)	Ալմէյրա
Փիթըր Օտեմուիկի (32)	58 մասնակցութիւն (10 կոլ)	Սթոք
Վիքթոր Օպիննա (27)	48 մասնակցութիւն (13 կոլ)	Քիեւօ



խուժքի մարզիկներուն մեծ մասը եւրոպական ակումբներու հետ հանդէս կու գայ, սակայն անոնք այնքան ալ անուանի ֆուլթպոլիստներ չեն: Ազգային խուժքին ամէնէն ծանօթ տարրերը Չելսիի Միքէլն ու Լիվըրփուլի Մոզէսն են: Անոնք չունին նախկինին նման վտանգաւոր ու կոլեր նշանակող յառաջապահներ:

Հակառակ այս իրողութեան, նիճերիացիք դժուարութիւն չունեցան մոնտիալի իրենց տոմսը ապահովելու:

Առաջին հանգրուանին նիճերիա կը գտնուի Զ. Խմբակին մէջ, Խմբակիցներ ունենալով Արժանթինը, Պոսնիան եւ Իրանը: Արժանթինի հետ անոր պատմութիւնը կը սկսի 1994-էն: Ճակատագրականօրէն այս երկու կազմերը վերջին քսան տարիներուն երրորդ անգամ

ըլլալով կը գտնուին միեւնոյն Խմբակին մէջ: Նիճերիացիք պիտի յաջողին կասեցնել Մեսսին, Ակերոն եւ ընկերները: Անոնք իրենց ամէնէն հանգիստ մրցումը պիտի կատարեն Իրանի դէմ: Հոս ուժերու հաւասարակշռութիւն կայ եւ նիճերիացիք ֆիզիքապէս կրնան գերազանցել իրանցիները: Պոսնիոյ դէմ մրցումը անկանխատեսելի է: Պոսնիացիներու առաջին մասնակցութիւնն է եւ անոնք զգոյշ պիտի ըլլան անակնկալներու զոհ չերթալու համար:

Վստահաբար, նիճերիացիք պիտի չուզեն իրենց վերջին մրցումը կատարել Պոսնիոյ դէմ: Նմանօրինակ անհամ կացութեան մը դիմաց չգտնուելու համար նիճերիոյ կը մնայ յաղթել իր բոլոր մրցակիցներուն:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home,
away from home...*

Yerevan
32-38, Hanrabadoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

Reservations

www.europehotel.am

ԳԵՐՄԱՆԻԱ



Մոնտիալի մասնակցություն.- 17 անգամ (1934, 1938, 1954, 1958, 1962, 1966, 1970, 1974, 1978, 1982, 1986, 1990, 1994, 1998, 2002, 2006, 2010)

Արդիւնքներ.- 3 անգամ ախոյեան (1954, 1974, 1990), 4 անգամ երկրորդ (1966, 1982, 1986, 2002), 4 անգամ երրորդ (1938, 1970, 2006, 2010), 1 անգամ չորրորդ (1958)

Մրցում.- 99 մրցում՝ 60 յաղթանակ, 19 հաւասարություն, 20 պարտություն

Կոլ.- Նշանակած 206 կոլ, ստացած 117 կոլ

Մարզիչ.- Եռաբիմ Լով

Խմբապետ.- Ֆիլիփ Լահմ

Պաշտօնական տարագ.- Գերմակ

Եթէ Պրագիլ կը մնայ մրցանիշակիր թէ՛ իբրեւ տիտղոսակիր եւ թէ՛ իբրեւ մոնտիալներու մասնակցութեան թիւ, ապա Գերմանիա առաւելագոյն մրցումներ

կատարած կազմն է: Ան նաեւ առաւելագոյն աւարտականներու եւ կիսաւարտականներու հասած խումբն է: Երեք անգամ դարձած է տիտղոսակիր: Այս բոլորը ցուցանիշ



են Գերմանիոյ հարուստ պատմութեան:

Գերմանական Ֆուտպոլի իսկական զարթոնքը կը սկսի 1960-ական թուականներուն: Փաստօրէն, վերջին 12 մոնտիալներուն գերմանացիք ինը անգամ հասած են կիսաւարտական: Եւրոպայի մէջ, գերմանական ակումբները տիրապետող ներկայութիւն եղան 1970-ական եւ 1980-ականներուն: Այդ տարիներու

Ֆուտպոլիստներու փառանգներ եւրոպական առումով նուաճումներ արձանագրեցին: Պեքընպաուլըր, Կերտ Միւլլըր, Պրայթներ, Մատթէոս եւ ուրիշներ անմոռանալի անուններ են գերմանական Ֆուտպոլի սիրահարներուն համար:

Գերմանացիք ո՛չ մէկ դըժլարութիւն ունեցան գտումի մրցումներուն: Անոնք իրենց բոլոր մրցումները աւարտեցին յաղթանակով եւ հանգիստ ձեւով իրենց խմբակին առաջին դիրքը զբաղեցնելով ապահովեցին մոնտիալի տոմար:

Գերմանացիներու վերջին տարիներու յաջողութեան մէջ, անկասկած, մեծ դեր ունին գերմանական ակումբներու յաջողութիւններն ու մակարդակը: Մասնաւորաբար Պայէրն Միւնխի եւ Պորտսիա Տորթմունտ հզօր կազմեր են եւրոպական մակարդակի վրայ: Չմոռնանք, որ 2013-ի «Չիմփիլընզ լիկ»-ի աւարտականը նշեալ երկու կազմերուն միջեւ էր:

Գերմանացիք իրենց առաջին մրցումը պիտի կատարեն վերջին տասնամեակին ինքզինք վերագտած Փորթուգալի դէմ: Վերջին մրցաշարքերուն փորթուգալցիք յաճախ հանդիպած են գերմանացի-

Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Մանուէլ Նոէր (28)	45 մասնակցութիւն (0 կոլ)	Պ. Միւնխի
Ռոման Ուէյտընֆելլըր (33)	1 մասնակցութիւն (0 կոլ)	Պ. Տորթմունտ
Ֆիլիփ Լահմ (30)	105 մասնակցութիւն (5 կոլ)	Պ. Միւնխի
Փըր Մերթեսաքըր (29)	96 մասնակցութիւն (4 կոլ)	Արսենալ
Մարսէլ Եանսըն (28)	45 մասնակցութիւն (3 կոլ)	Համպուրկ
Ժերոմ Պոթանկ (25)	37 մասնակցութիւն (0 կոլ)	Պ. Միւնխի
Մարսէլ Շմեցըր (26)	16 մասնակցութիւն (0 կոլ)	Պ. Տորթմունտ
Լուքաս Փոտոլսքի (28)	112 մասնակցութիւն (46 կոլ)	Արսենալ
Պասթիան Շվանշթայկըր (29)	101 մասնակցութիւն (23 կոլ)	Պ. Միւնխի
Մեսութ Օզիլ (25)	53 մասնակցութիւն (17 կոլ)	Արսենալ
Թոնի Բրոուս (24)	42 մասնակցութիւն (5 կոլ)	Պ. Միւնխի
Անտրէ Շուրլ (23)	31 մասնակցութիւն (11 կոլ)	Չելսի
Մարիո Կոցէ (21)	27 մասնակցութիւն (7 կոլ)	Պ. Միւնխի
Մաթիաս Համըլզ (25)	28 մասնակցութիւն (2 կոլ)	Պ. Տորթմունտ
Հէյքո Ուէսթֆալման (30)	27 մասնակցութիւն (4 կոլ)	Համպուրկ
Պենետիքթ Հոուետս (26)	18 մասնակցութիւն (1 կոլ)	Շալքէ
Տենիս Աոկո (27)	12 մասնակցութիւն (0 կոլ)	Շալքէ
Թոմաս Միւլլըր (24)	47 մասնակցութիւն (16 կոլ)	Պ. Միւնխի
Սէմի Խտէյրա (27)	44 մասնակցութիւն (4 կոլ)	Ռ. Մատրիտ
Մարքո Ռէոս (24)	19 մասնակցութիւն (7 կոլ)	Պ. Տորթմունտ
Մարիո Կոմէզ (28)	59 մասնակցութիւն (25 կոլ)	Ֆիորենթինա
Լարս Պենտըր (24)	17 մասնակցութիւն (4 կոլ)	Պ. Լեւերքուզըն

ներուն եւ միշտ տեղի տուած են անոնց դիմաց: Միացեալ Նահանգներու դէմ մրցումը հաւանաբար կրկնութիւնը ըլլայ 1998-ի առաջին հանգրուանի մրցումին, երբ Գերմանիա 3-0 արդիւնքով հանգիստ յաղթանակ մը տարաւ: Խմբակին 4-րդ անդամը Ղանան է: Գերմանացիք միշտ ալ

զգոյշ են փրփրեան կազմերու դէմ: Անոնք տակաւին չեն մոռցած 1982-ին Ալճերիայէն կրած իրենց պարտութիւնը առաջին հանգրուանին:

Մարզիչ Լով, որ պաշտօնի վրայ է 2004-էն ի վեր, յաջողած է ստեղծել ներդաշնակ կազմ մը, որուն մարզիկներուն մեծամասնութիւնը կու

գայ Պայէրն Միւնիխէն եւ Պորուսիա Տորթմունտէն: Ինչպէս միշտ, այս կազմին ալ յատկութիւններէն է գերմանական պայքարի ոգին: Գերմանիոյ կազմը, Սպանիոյ կազմէն ետք, կը նկատուի ամէնէն ամբողջականը եւ այդ պատճառով ալ անոնք արժանի յաւակնորդներ են

տիրանալու աշխարհի բաժակին: Գերմանիոյ ֆուտպոլասէրները 24 տարիէ կը սպասեն նոր տիտղոսի: Շվանշթայկըր, Օզիլ, Միւլլըր, Լահմ եւ ընկերները համոզուած են որ արդէն իսկ ժամանակն է նոր տիտղոս մը աւելցնելու իրենց հարուստ գանձարանին մէջ:

ՓՈՐԹՈՒԳԱԼ



Սոնտիալի մասնակցութիւն.- 5 անգամ (1966, 1986, 2002, 2006, 2010)

Արդիւնքներ.- Երրորդ (1966) եւ չորրորդ (2006)

Մրցում.- 23 մրցում՝ 12 յաղթանակ, 3 հաւասարութիւն, 8 պարտութիւն

Կոլ.- նշանակած 39 կոլ, ստացած 22 կոլ

Մարզիչ.- Փաուլօ Պենթօ

Խմբապետ.- Զրիսթիանօ Ռոնալտօ

Պաշտօնական տարագ.- Կարմիր

Փորթուգալի ֆուտպոլի պատմութիւնը թէեւ հարուստ չէ, բայց յատկանշական է: Փորթուգալցիք իրենց առաջին իսկ մասնակցութեան՝ 1966-ին յաջողեցան գրաւել երրորդ դիրքը: Այդ սերունդին խորհրդանիշն էր աշխարհի լաւագոյն ֆուտպոլիստներէն Էօզեպիոն: Շուրջ տասնամեակ մը առաջ փորթուգալեան ֆուտպոլի զարթօնքին շնորհիւ Ֆիկօ եւ ընկերները Փորթուգալի ֆուտպոլի ազգային խումբին տուին նոր որակ ու դիմագիծ: Անոնք արդէն ներկայ են մոնտիալներուն եւ Եւրոպայի ախոյեանութիւններուն: 2006-ի մոնտիալին հասան մինչեւ կիսաւարտական եւ գրաւեցին չորրորդ դիրքը: Այս մոնտիալի զտումի



ԱՆՈՒՆ ԵՒ ՏԱՐԻՔ

- Էտուարտօ (31)
- Ռուի Փաթրիսիօ (26)
- Ռոլանտօ (28)
- Փեփէ (31)
- Ֆապիօ Քոէնթրաօ (26)
- Ռիքարտօ Քոսթա (32)
- Լուիս Նեթօ (25)
- Վիթորինօ Անթունէս (27)
- Ժոաօ Փերէյրա (30)
- Միկէլ Լոփէս (27)
- Միկէլ Վելոսօ (28)
- Ուիլիէմ Քարվալիօ (22)
- Ժոաօ Մուլթինի (27)
- Ժոզուէ (23)
- Ռաֆա Սիլվա (20)
- Ռաուլ Մէյրելէս (31)
- Սիլվեսթրը Վարելա (29)
- Ռուպէն Ամորիմ (29)
- Քրիսթիանօ Ռոնալտօ (29)
- Հիւկօ Ալմէյտա (29)
- Պրոննօ Ալվէս (32)
- Նանի (27)
- Հելտըր Փոսթիկա (31)

Չաւաքական Եւ Կոլ

- 32 մասնակցութիւն (0 կոլ)
- 29 մասնակցութիւն (0 կոլ)
- 19 մասնակցութիւն (0 կոլ)
- 57 մասնակցութիւն (3 կոլ)
- 43 մասնակցութիւն (3 կոլ)
- 16 մասնակցութիւն (1 կոլ)
- 6 մասնակցութիւն (0 կոլ)
- 8 մասնակցութիւն (0 կոլ)
- 34 մասնակցութիւն (0 կոլ)
- 4 մասնակցութիւն (0 կոլ)
- 46 մասնակցութիւն (2 կոլ)
- 2 մասնակցութիւն (0 կոլ)
- 66 մասնակցութիւն (2 կոլ)
- 4 մասնակցութիւն (0 կոլ)
- 1 մասնակցութիւն (0 կոլ)
- 73 մասնակցութիւն (10 կոլ)
- 21 մասնակցութիւն (4 կոլ)
- 10 մասնակցութիւն (0 կոլ)
- 110 մասնակցութիւն (49 կոլ)
- 53 մասնակցութիւն (17 կոլ)
- 70 մասնակցութիւն (10 կոլ)
- 72 մասնակցութիւն (14 կոլ)
- 66 մասնակցութիւն (27 կոլ)

Ակումբ

- Փրակա
- Սփորթինկ
- Ի. Միլան
- Լ. Մատրիտ
- Ռ. Մատրիտ
- Վալենսիա
- Չէնիթ
- Մալակա
- Վալենսիա
- Լիոն
- Տինամօ Քիել
- Սփորթինկ
- Մոնաքօ
- Փորթօ
- Փրակա
- Ֆեներպահչէ
- Փորթօ
- Պենֆիլքա
- Ռ. Մատրիտ
- Պէշիկթաշ
- Ֆեներպահչէ
- Մ. Եոննայթրտ
- Լացիօ



մրցումներուն փորձուգալ-ցիք քիչ մը դժուարութիւններու հանդիպեցան եւ միայն փլէյ-օֆի մրցումներուն շուէտացիներուն գերազանցելով, ապահովեցին իրենց մասնակցութիւնը: Բայց Փորթուգալ ունի լաւ կազմ մը եւ կը մնայ մոնտիալի թիւ մէկ աութ-սայտըրը:

Բնականաբար, կազմին ամէնէն նշանաւոր մարզիկը աշխարհի լաւագոյն ֆուլթպոլիստի տիտղոսին արժանացած Ռոնալտոն է: Հակառակ

անոր որ խումբին մաս կը կազմեն նաեւ անուանի այլ մարզիկներ, սակայն ամբողջ Փորթուգալը կը նայի Ռոնալտոյին: Ան խումբին ալֆան ու օմեկան է: 29 տարեկան Ռոնալտո կը գիտակցի, որ այս մոնտիալը կրնայ վերջինը ըլլալ իրեն համար եւ ան ամէն ինչ պիտի ընէ փառաւոր կերպով հեռանալու համար մոնտիալի դռնէն:

Փորթուգալցիք իրենց առաջին մրցումը պիտի կատարեն հօր Գերմանիոյ դէմ:

Վերջին տասնամեակին անոնք քանի մը անգամ հանդիպեցան իրարու եւ նժարը եղաւ ի նպաստ Գերմանիոյ: Առաջին մրցումին պարտութիւն մը եւ Փորթուգալ կրնայ նեղ կացութեան մատնուիլ: Խմբակին միւս անդամը՝ Ղանա կրնայ Ռոնալտոյի եւ ընկերներուն հաշիւները խանգարել, անակնկալներ ստեղծելով: Միակ կազմը, որ կրնայ փորթուգալցիներուն այնքան ալ չմտահոգել, այդ ալ Միացեալ Նահանգներն է:

Բայց եւ այնպէս, փորթուգալցիք բաւական լաւ եւ կազմակերպուած խումբ մըն են: Յատկանշական է անոնց յետսապահ գիծը, որ կը նրկատուի բաւական զօրաւոր եւ տոկուն: Իսկ խումբը իր ամբողջութեան մէջ պայքարող եւ չյուսահատող է:

Մարզիչ Պենթոյի ծրագիրները չեն սահմանափակած երեք մրցումով միայն: Ան կը նախատեսէ, որ նուագագոյնը 2006-ի յաջողութեան պէտք է հասնիլ:

ՂԱՆԱ



FIFA WORLD CUP
Brasil

Մոտիալի մասնակցութիւն.- Երկու անգամ (2006, 2010)

Արդիւնք.- Քառորդ աւարտական (2010)

Մրցում.- 9 մրցում՝ 4 յաղթանակ, 2 հաւասարութիւն, 3 պարտութիւն

Կոլ.- Նշանակած 9 կոլ, ստացած 10 կոլ

Մարզիչ.- Աքուազի Ափիահ

Խմբապետ.- Ասամոահ Կիան

Պաշտօնական տարագ.- Երմակ

Մոնտիալին մասնակից ամերիկեան երկիրներէն հաւանաբար ամէնէն կայուն եւ ինքզինք թէ՛ ամերիկեան ցամաքամասին եւ թէ՛ միջազգային գետնի վրայ պարտադրող կազմերէն է Ղանան: Անոնք երրորդ անգամ ըլլալով կը մասնակցին մոնտիալի եւ իրենց նախորդ երկու մասնակցութիւններուն յաջողած են անցնիլ առաջին հանգրուանի արգել-



Անուն եւ Տարիք	Հաւաքական եւ Կոլ	Ակումբ
Ատամ Քվարազի (26)	20 մասնակցութիւն (0 կոլ)	Սթրոմսկոտսէթ
Ռիչրտ Քինկսըն (35)	90 մասնակցութիւն (1 կոլ)	Պէշիկթաշ
Սամուէլ Ինքում (20)	45 մասնակցութիւն (1 կոլ)	Փլաթանիաս
Հերիսըն Աֆուլ (27)	39 մասնակցութիւն (0 կոլ)	Էսփերանս
Ճոն Պոյէ (27)	29 մասնակցութիւն (1 կոլ)	Ռէն
Ճոնաթան Մանսահ (23)	25 մասնակցութիւն (1 կոլ)	Էվիան
Տանիէլ Օփարէ (23)	16 մասնակցութիւն (0 կոլ)	Ս-Լիէժ
Ճերի Աքամինքո (25)	8 մասնակցութիւն (1 կոլ)	Էսկիշեհիսփոր
Տէյվիտ Ատի (24)	8 մասնակցութիւն (0 կոլ)	Կիմարաէշ
Սուլի Մունթարի (29)	81 մասնակցութիւն (20 կոլ)	Միլան
Քվատփո Ասամոահ (25)	60 մասնակցութիւն (4 կոլ)	Եուվենթուս
Միքայէլ Էսիէն (31)	56 մասնակցութիւն (9 կոլ)	Միլան
Էմանուէլ Պատու (23)	48 մասնակցութիւն (7 կոլ)	Իւտինիզէ
Անտրէ Այու (24)	47 մասնակցութիւն (4 կոլ)	Մարսէյ
Քրիսթիան Այու (22)	21 մասնակցութիւն (4 կոլ)	Վիթէս
Ուաքազո Մուկարաք (23)	16 մասնակցութիւն (7 կոլ)	Ռուպին Քազան
Ալպէր Ատոմահ (26)	13 մասնակցութիւն (1 կոլ)	Միտլըզպըրօ
Քելըն Պոթանկ (27)	11 մասնակցութիւն (2 կոլ)	Շալքէ
Ասամոահ Կիան (28)	78 մասնակցութիւն (39 կոլ)	Ալ Այն
Մաթէտ Ուարիս (22)	11 մասնակցութիւն (3 կոլ)	Վալենսիէն
Ճորտըն Այու (22)	11 մասնակցութիւն (2 կոլ)	Սոչո
Ֆրանք Աչիմփոնկ (20)	2 մասնակցութիւն (1 կոլ)	Անտրլէիթ
Իսաաք Քոֆլէ (23)	1 մասնակցութիւն (0 կոլ)	Ճենովա

քը, ինչ որ ավերիկեան կազմի մը համար կը նկատուի յաջողութիւն կամ յաջողութեան սկիզբ:

Այս մոնտիալին ալ զանազիք կը մասնակցին նոյն ակնկալութիւններով՝ առնուազն անցնել Բ. հանգրուան: Մարզիչ Ափիաճ գիտէ իր վրայ դրուած ծանր պարտականութիւնը եւ գայն իրագործելու համար ունի որակաւոր մարզիկներ: Մասնաւորաբար զօրաւոր կը նկատուի

Ղանայի միջնապահ գիծը, որ որեւէ մրցակիցի դէմ կրնայ դաշտին կեդրոնին վրայ ազատ շարժելու առիթ չտալ մրցակից կազմի մարզիկներուն: Անոնց միջնապահ գիծի մարզիկները եւրոպական հռչակաւոր ակումբներու մաս կազմելով ունին փորձառութիւն եւ բարձր մակարդակի խաղաոճ: Էսիէն, Ասամոհ, Մունթարի եւ Պատուծանօթ անուններ են եւրոպական Ֆութպոլի սիրահարներ

րուն: Անոնք ի վիճակի են Ղանայի դրօշը բարձր պահելու:

Ղանացիք մոնտիալի առաջին հանգրուանին ունին ղփուար մրցակիցներ: Անոնք իրենց առաջին մրցումը պիտի կատարեն Միացեալ Նահանգներու դէմ, որ վերջին քսան տարիներուն միշտ ալ ներկայ է մոնտիալներուն եւ հետզհետէ ինքզինք կը փաստէ: Յաջորդ երկու մրցումները աւելի ղփուար պիտի ըլլան ավերիկեցիներուն համար:

մար: Երկրորդ մրցումը մոնտիալի հսկաներէն Գերմանիոյ դէմ է: Գերմանացիք մրցակիցներու հանդէպ միշտ ալ անխնայ են, բայց եւ այնպէս զգոյշ են ավերիկեցիներէն: Իրենց երրորդ մրցումը, Փորթուգալի դէմ, ամէնէն տաքն ու հետաքրքրականը կը թուի ըլլալ: Հաւանաբար այս մրցումին յաղթականը յաջողի ընկերակցիլ Գերմանիոյ Բ. հանգրուան անցնելու համար:

ՄԻԱՑԵԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐ



Մոնտիալի մասնակցութիւն.- 9 անգամ (1930, 1934, 1950, 1990, 1994, 1998, 2002, 2006, 2010)

Արդիւնքներ.- Երրորդ (1930)

Մրցում.-

29 մրցում՝ 7 յաղթանակ, 5 հաւասարութիւն, 17 պարտութիւն

Կոլ.- Նշանակած 32 կոլ, ստացած 56 կոլ

Մարզիչ.- Եուրկըն Բլինսմըն

Խմբապետ.- Բլինթ Տեմփսի

Պաշտօնական տարագ.- Գերմակ

Միացեալ Նահանգներու Ֆութպոլի պատմութիւնը կը սկսի առաջին մոնտիալով եւ անոր մեծագոյն իրագործումը կը մնայ այդ մոնտիալին երրորդ դիրքը զրաւելը: Սակայն, 1950-ի մոնտիալէն ետք, ամերիկեան Ֆութպոլը մտաւ մահաքունի մէջ եւ հեռացաւ միջազգային բեմերէ: 1970-ական թուականներուն

Անուն եւ Տարիք

- Նիք Ռիմանսօ (34)
- Սին Ճոնսըն (24)
- Տէանտրէ Ետլին (20)
- Օմար Կոնգալէս (25)
- Մաթ Պեսլըր (27)
- Թոնի Պելթրան (26)
- Միքայէլ Փարիսուրսթ (30)
- Քլարէնս Կոլտսըն (31)
- Միքայէլ Պրէտլի (26)
- Մորիս Էտու (28)
- Լանտրն Տոնաւան (32)
- Պրէտ Տէյվիս (32)
- Քիլ Պեքըրմէն (32)
- Լուիզ Ճիլ (20)
- Կրահամ Ջոուսի (27)
- Քլինթ Տեմփսի (31)
- Ճուլիան Կրին (18)
- Քրիս Ուոնտոյրովսքի (31)
- Էտի Ճոնսըն (30)
- Թիմ Հաուըրտ (35)
- Տամարքոս Պրզլի (31)
- Օկուշի Օնյէու (31)
- Սաշա Քիէսթան (28)

Հաւաքական եւ Կոլ

- 14 մասնակցութիւն (0 կոլ)
- 4 մասնակցութիւն (0 կոլ)
- 2 մասնակցութիւն (0 կոլ)
- 18 մասնակցութիւն (0 կոլ)
- 14 մասնակցութիւն (0 կոլ)
- 3 մասնակցութիւն (0 կոլ)
- 25 մասնակցութիւն (0 կոլ)
- 46 մասնակցութիւն (5 կոլ)
- 83 մասնակցութիւն (12 կոլ)
- 46 մասնակցութիւն (1 կոլ)
- 156 մասնակցութիւն (57 կոլ)
- 14 մասնակցութիւն (0 կոլ)
- 35 մասնակցութիւն (1 կոլ)
- 1 մասնակցութիւն (0 կոլ)
- 20 մասնակցութիւն (3 կոլ)
- 103 մասնակցութիւն (36 կոլ)
- 1 մասնակցութիւն (0 կոլ)
- 19 մասնակցութիւն (9 կոլ)
- 63 մասնակցութիւն (19 կոլ)
- 97 մասնակցութիւն (0 կոլ)
- 114 մասնակցութիւն (17 կոլ)
- 69 մասնակցութիւն (6 կոլ)
- 46 մասնակցութիւն (4 կոլ)

Ակումբ

- Սոլթ Լէյք
- Շիքաօ
- Սիէթլ
- Կալաքսի
- Ս. Քանսաս
- Սոլթ Լէյք
- Քոլորադոս
- Սան Խոսէ
- Ֆ.Ք. Թորոնթօ
- Ֆիլատելֆիա
- Կալաքսի
- Հիւսթըն
- Սոլթ Լէյք
- Սոլթ Լէյք
- Ս. Քանսաս
- Սիէթլ
- Պ. Միլնիիլ
- Սան Խոսէ
- Տի. Սի. Եոլնայթըլ
- Էվըրթըն
- Փէօպլա
- Շ. Ուէնտգոտէյ
- Անտըրլէխթ



Միացեալ Նահանգներու ակումբները սկսան իրենց կազմերուն միացնել եւրոպացի եւ հարաւ-ամերիկացի վեթերան անուանի ֆուլթպոլիստներ՝ Փելէ, Քրուլֆ, Նիսքընզ, Պեքընպաուլըր էօզեպիօ եւ այլն: Այս մէկը արդիւնաւորուեցաւ եւ ամերիկեան ֆուլթպոլը ապրեցաւ իր զարթօնքը: 1990-էն ետք ան մնայուն կերպով ներկայ է մոնտիալներուն: Ճիշդ է, որ մեծ նուաճումներ չէ արձանագրած, սակայն ունի կայուն մակարդակ: Այս պատճառով ալ Միացեալ Նահանգներու կազմը վերջին քանի մը մոնտիալներու զտումի մրցումներուն դրժարութիւններու չհանդիպեցաւ: Անոնք Մեքսիքայի կազմին հետ կը գերազանցեն իրենց մրցակիցները:



Միացեալ Նահանգներու կազմը Գերմանիոյ, Փորթուգալի եւ Ղանայի հետ կը կազմէ Զ. խմբակը: Ան խմբակին ամէնէն տկար նկատուած կազմն է: Վստահաբար, եւրոպացիները առիթ պիտի չտան միւս երկու կազմերուն: Ամերիկացիք իրենց առաջին մրցումը պիտի կատարեն Ղանայի դէմ: Ղանա ունի բաւական լաւ կազմ եւ

կրնայ տհաճ անակնկալ մը մատուցել Մ. Նահանգներուն: Երկրորդ մրցումին անոնք դէմ յանդիման պիտի դան մոնտիալի գլխաւոր թեկնածուներէն՝ Գերմանիոյ: Մարզիչ Քլինսմըն պիտի փորձէ իր հայրենակիցներուն ճնշումին դիմադրել եւ նուազագոյն յաջողութիւնը արձանագրել: Փորթուգալի դէմ եւս ամերիկացիք բաւա-

կան պիտի յոգնին: Ռոնալտօ եւ ընկերները առիթ պիտի չտան, որ Մ. Նահանգներու կազմը խանգարէ իրենց հաշիւները:

Մարզիչ Եուրկըն Քլինսմըն, որ 2006-ին Գերմանիոյ կազմը կը մարզէր, իր տրամադրութեան տակ չունի անուանի խաղացողներ: Անոր մարզիկներուն մեծամասնութիւնը կու գայ ամերիկեան կազմերէ: Ազգային խումբը նոյնիսկ բարեկամական մրցումներու ընթացքին չի տպաւորեր, երբ ան կը մրցի եւրոպական կազմերու դէմ:

Արդեօք Միացեալ Նահանգներու այս մոնտիալին մասնակցութիւնը, վերջին մոնտիալին նման, սոսկակա՞ն մասնակցութիւն մը պիտի ըլլայ:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select your Journey

Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Armavia Արմավիա

Photos: © Yann-Arthus-Bertrand, Terre vue du ciel. Licence 075 960031 Studio VICKEN 2005 FARS

11, rue des Pyramides 75001 Paris tel 331 42 96 10 10 fax 331 42 96 18 77 saberatours@selectour.com	48, cours de la Liberté 69003 Lyon tel 334 78 60 13 66 fax 334 78 60 92 26 sevan@selectour.com	67, La Canebière 13001 Marseille tel 334 95 09 30 60 fax 334 95 09 30 61 marseille@wasteels.fr	32-38, rue Hanrabedoutian Yerevan tel 374 10 52 55 55 fax 374 10 56 40 30 sabera@arminco.com
---	--	--	--

ՊԵԼՃԻՔԱ



Մոնտիալի մասնակցություն.- 11 անգամ (1930, 1934, 1938, 1954, 1970, 1982, 1986, 1990, 1994, 1998, 2002)

Արդիւնքներ.- Չորրորդ (1986)

Մրցում.- 36 մրցում՝ 10 յաղթանակ, 9 հաւասարություն, 17 պարտություն

Կոլ.- Նշանակած 46 կոլ, ստացած 63 կոլ

Մարզիչ.- Մարք Վիլմոց

Խմբապետ.- Վենսան Բոմփանի

Պաշտօնական տարագ.- Կարմիր



Շուրջ 12 տարուան բացակայութենէ ետք պելճիքացիք կը վերադառնան: 1980-ական թուականներուն իրենց դրացի հոլանտացիները փոխարինած եւ իրենց

շուրջ մեծ աղմուկ ստեղծած պելճիքական ֆուտպոլը 1990-ականներու աւարտին սկսաւ հետզհետէ մարիլ: ՓՓաՓ, Կերէց, Վանտեր էյքըն, Քէօլմանս, Շիֆօ, Վիլմոց եւ ըն-

կերները արդէն հրաժեշտ տուած էին կանաչ դաշտերուն եւ զանոնք փոխարինողները չէին արդարացներ իրենց վրայ դրուած յոյսերը:

Սակայն, վերջին քանի մը տարիներուն, պելճիքական ֆուտպոլը զգալի զարթոնք

մը կ'ապրի: Ծիշդ է, որ ազգային խումբը միջազգային գետնի վրայ տակաւին նուաճում չէ արձանագրած, սակայն անոր մաս կազմող կարգ մը բանալի մարզիկները արդէն բաւական մեջան կը հոսեցնեն իրենց մասին:

Մոնտիալի գտումի մրցումներուն պելճիքացիք ոչ մէկ դժուարութիւն ունեցան: Անոնք ո'չ մէկ պարտութիւն կրեցին եւ դիւրութեամբ հասան մոնտիալ: Մարզիչ Վիլմոց յաջողած է կազմել ներդաշնակ խումբ մը, որուն սիւները պիտի ըլլան Վան Պոյթըն, Հագար եւ Մորթընզ: Պելճիքացիներուն տկար կէտը անոնց յառաջապահ գիծն է: Անոնք չունին խումբին մակարդակին համապատասխան յառաջապահներ:

Խմբակի մրցումներու ծիրէն ներս անոնք հաւանական է որ դժուարութիւններ չունենան: Զիրենք մտահոգող միակ խումբը Ռուսիան է: Անոնց միջեւ պայքարը բուն պիտի ըլլայ գրաւելու Ա. դիրքը, որպէսզի Բ. հանգրրուանին չհանդիպին Գերմանիոյ: Խմբակին միւս երկու կազմերը՝ Ալճերիա եւ Հարաւային Քորէա դժուար

Անուն եւ Տարիք	Հաւարական եւ Կոլ	Ակումբ
Թիպօ Քուրթուա (21)	16 մասնակցութիւն (0 կոլ)	Ա. Մատրիտ
Սիմոն Մինիոլէ (25)	14 մասնակցութիւն (0 կոլ)	Լիվըրփուլ
Ժան Ֆրանսուա Ժիլէ (21)	0 մասնակցութիւն (0 կոլ)	Թորինօ
Թոպի Ալտորուէյրլա (25)	32 մասնակցութիւն (1 կոլ)	Ա. Մատրիտ
Տանիէլ Վան Պոյթըն (36)	77 մասնակցութիւն (10 կոլ)	Պ. Միլնիի
Վենսան Քոմփանի (27)	57 մասնակցութիւն (4 կոլ)	Մ. Սիթի
Եան Վերթոկըն (26)	55 մասնակցութիւն (4 կոլ)	Թոթենհամ
Սեպասթիան Փոքոնիոլլի (26)	12 մասնակցութիւն (0 կոլ)	Հանովըր
Անթոնի Վանտէն Պոր (26)	24 մասնակցութիւն (1 կոլ)	Անտըրլէխթ
Նիքոլաս Լոմպաէրթս (29)	25 մասնակցութիւն (2 կոլ)	Չենիթ
Լորան Սիման (28)	8 մասնակցութիւն (0 կոլ)	Ս. Լիէժ
Աքսէլ Ռիթսէլ (25)	46 մասնակցութիւն (5 կոլ)	Չենիթ
Քեւըն Տը Պրուլըն (22)	20 մասնակցութիւն (4 կոլ)	Վոլսպուրկ
Մարուան Ֆելլաինի (26)	48 մասնակցութիւն (8 կոլ)	Մ. Եունայթըտ
Էտըն Հագար (23)	43 մասնակցութիւն (5 կոլ)	Չելսի
Քեւըն Միրալաս (26)	43 մասնակցութիւն (9 կոլ)	Էվըրթըն
Ռատիա Նաինկոլան (25)	5 մասնակցութիւն (1 կոլ)	Ա. Էս. Ռոմա
Տրիէս Մորթընզ (26)	23 մասնակցութիւն (2 կոլ)	Նափոլի
Թիմի Սիմընզ (37)	93 մասնակցութիւն (6 կոլ)	Քլայ Պրիւժ
Մուսա Տեմպելէ (26)	55 մասնակցութիւն (5 կոլ)	Թոթենհամ
Նասէր Շէտլի (24)	18 մասնակցութիւն (2 կոլ)	Թոթենհամ
Քրիսթիան Պենթեքէ (23)	18 մասնակցութիւն (6 կոլ)	Ասթոն Վիլլա
Ռոմելու Լուքաքու (20)	27 մասնակցութիւն (5 կոլ)	Էվըրթըն
Սթիւըն Տեֆուր (25)	42 մասնակցութիւն (2 կոլ)	Փորթօ
Թոմաս Վերմաէլէն (28)	46 մասնակցութիւն (1 կոլ)	Արսենալ



Թէ կարենան անախորժ անակնկալներ ստեղծել Պելճիքայի համար: Պելճիքացիք Հարաւային Քորէայի դէմ ունին նախկին փորձառութիւններ եւ կրնան դիւրութեամբ յաղթահարել ասիացիները: Իսկ Ալճերիոյ դէմ անոնք առաջին անգամ ըլլալով պիտի մրցին մոնտիալի ընթացքին: Ալճերիացիք այնքան ալ լաւ կազմ մը չունին,

որպէսզի կարենան խանգարել պելճիքացիներուն ընթացքը: Պելճիքա մեծ յոյսեր ունի, որ կրնայ առնուազն իրագործել այն ինչ որ կարողացաւ իրագործել շուրջ 30 տարի առաջ: Այդ տարին ան ստեղծեց մոնտիալի ամէնէն մեծ անակնկալներէն մէկը: Անոնք նոյն յոյսերով կը մեկնին Պրագիլ:

Մոնտիալի մասնակցութիւն.- Երեք անգամ (1982, 1986, 2010)
Մրցում.- 9 մրցում՝ 2 յաղթանակ, 2 հաւասարութիւն, 2 պարտութիւն
Կոլ.- Նշանակած 6 կոլ, ստացած 12 կոլ

Սարգիս.- Վահիտ Յալիհոժիչ
Խմբապետ.- Մաժետ Պուղէրա
Պաշտօնական տարագ.- Գերմակ

ԱԼՃԵՐԻԱ



Ալճերիացիք չորրորդ անգամ ըլլալով կը մասնակցին աշխարհի ախոյեանութեան: Անոնց անցեալը թէեւ այնքան ալ փայլուն չէ, բայց եւ այնպէս, անոնք ստեղծած են մոնտիալի պատմութեան ամէնէն մեծ անակնկալներէն մէկը, երբ տարիներ առաջ, 1982-ին, իրենց առաջին մասնակցութեան եւ առաջին մրցումին յաղթած են Եւրոպայի ախոյեան եւ մրցաշարքի գլխաւոր թեկնածուներէն՝ Գերմանիոյ: Այդ օրէն ետք Ալճերիոյ ֆուտպոլի երկնամարը կրկին մթազնած է: Ծիշդ է, որ չորս տարի ետք անոնք դարձեալ ներկայ էին մոնտիալին, սակայն անոնք ունեցան լուսանցքային դեր:

Ղողած: Աւելին, ան մնացած է անոնց շուքին տակ, մանաւանդ աշխարհի ախոյեանութեան մրցաշարքերուն: Թէեւ



պէտք է արձանագրել, որ Ափրիկէի ազգային խումբերու ախոյեանութեան ալճերիացիք արձանագրած են գոհացուցիչ արդիւնքներ:

Այս բոլորին լոյսին տակ, անոնք մեծ յոյսերով չէ որ պիտի մեկնին Պրագիլ: Փորիզ Սէն ժերմէնի եւ նախկին Եուկոսլաւիոյ աստղերէն

ԱՆՈՒՆ ԵՒ ՏԱՐԻՔ

- Մուհամմէտ Զէմամուշ (29)
- Ազզէտտին Զուխա (27)
- Մաժետ Պուղէրա (31)
- Ռաֆիք Հալիլ (27)
- Էսէյա Պելքալէմ (25)
- Ժամալ Մըսպահ (29)
- Լիասին Պընթալա (26)
- Ֆուադի Ղուլամ (23)
- Այսա Մանտի (22)
- Ալի Ռիալ (34)
- Մետհի Լասէն (29)
- Ատլէն Կուէտուրա (28)
- Հասան Եպտա (29)
- Ֆուատ Քատիր (30)
- Մեհրի Մուսթաֆա (30)
- Սաֆիր Թայտէր (22)
- Ապտըլմուհէն Ճապու (27)
- Եասին Պրահիմի (24)
- Նապիլ Պընթալէպ (19)
- Զիննէտտին Ֆարհաթ (21)
- Ռաֆիք Ժապուր (30)
- Էլ Արպի Հիլալ Սուտանի (26)
- Իսլամ Սլիմանի (25)
- Քարլ Մեճանի (28)
- Սոֆիան Ֆեղուլի (24)

ՀԱՒԱՔԱԿԱՆ ԵՒ ԿՈՂ

- 6 մասնակցութիւն (0 կոլ)
- 5 մասնակցութիւն (0 կոլ)
- 61 մասնակցութիւն (4 կոլ)
- 27 մասնակցութիւն (1 կոլ)
- 12 մասնակցութիւն (0 կոլ)
- 25 մասնակցութիւն (0 կոլ)
- 6 մասնակցութիւն (0 կոլ)
- 5 մասնակցութիւն (0 կոլ)
- 1 մասնակցութիւն (0 կոլ)
- 0 մասնակցութիւն (0 կոլ)
- 28 մասնակցութիւն (0 կոլ)
- 27 մասնակցութիւն (2 կոլ)
- 24 մասնակցութիւն (2 կոլ)
- 23 մասնակցութիւն (2 կոլ)
- 22 մասնակցութիւն (0 կոլ)
- 9 մասնակցութիւն (3 կոլ)
- 6 մասնակցութիւն (1 կոլ)
- 4 մասնակցութիւն (0 կոլ)
- 1 մասնակցութիւն (0 կոլ)
- 1 մասնակցութիւն (0 կոլ)
- 33 մասնակցութիւն (5 կոլ)
- 20 մասնակցութիւն (10 կոլ)
- 18 մասնակցութիւն (9 կոլ)
- 24 մասնակցութիւն (1 կոլ)
- 17 մասնակցութիւն (5 կոլ)

ԱԿՈՒՄՔ

- Ալթեր
- Էլ Հարրաշ
- Լեխիա
- Աբատեմիքա
- Ուաթֆորտ
- Լիվորնո
- Մայորքա
- Նափոլի
- Ռէյմս
- Քապիլիէ
- Կեթաֆէ
- Քրիսթըլ Փելէյա
- Ուտինիզէ
- Ռէն
- Աթաքսիօ
- Ի. Միլան
- Քլապ Աֆրիքէն
- Կրանատա
- Թոթենհամ
- Ալճեր
- Նոթինկհամ
- Տինամօ Զադրէպ
- Ս. Լիզպոն
- Վալենսիա
- Վալենսիա

մարզիչ Վահիտ Հալիհոժիչ կը գիտակցի իր վրայ դրուած ծանր պարտականութեան նուազագոյն ուժերով արձանագրել լաւագոյն արդիւնքներ եւ գէթ անցնիլ Բ. հանգրուան:

Հալիհոժիչի տրամադրութեան տակ եղող խաղացողներուն մեծամասնութիւնը մաս կը կազմէ օտար ակումբներու, ինչ որ կը յուսադրէ մարզիչը: Բայց

անոնք երիտասարդ են ու միջազգային գետնի վրայ՝ անփորձ: Հալիհոժիչ պիտի կեդրոնանայ անգլիական եւ իտալական ակումբներու մաս կազմող մարզիկներու վրայ: Դժբախտաբար, ութսունականներու նման, աստղեր չկան Ալճերիոյ կազմին մէջ: Ռապահ Մաթէտներու յետնորդները հետու են իրենց նախորդներու մակարդակէն:

Ալճերիացիք կը գտնուին ո՛չ այնքան դիւրին խմբակի մը մէջ: Անոնց մրցակիցներն են՝ Պելճիքան, որ 1990-էն ետք ունի իր լաւագոյն կազմը եւ պատրաստ է նոր նուաճումներ կատարելու: Ռուսերը, որոնք մարզիչ Քափելըյի առաջնորդութեամբ պիտի փորձեն առնուազն անցնիլ Բ. հանգրուան, եւ Հարաւային Քորէան, որ վերջին մոնտիալներուն միշտ ալ

պատրաստ է անակնկալներ ստեղծելու:

Ալճերիացիք եթէ ուզեն յաջորդ հանգրուան անցնիլ, ապա պէտք յաջողին պարտութեան մատնել եւրոպական կազմերէն մէկը, այլապէս անոնք ստիպուած պիտի ըլլան կանուխ հրաժեշտ տալ Պրազիլի մոնտիալին:

ՌՌԻՍԻԱ



FIFA WORLD CUP
BRASIL

Մոնտիալի մասնակցութիւն.- 2 անգամ (1994, 2002)

Մրցում.- 6 մրցում՝ 2 յաղթանակ, 0 հաւասարութիւն, 4 պարտութիւն

Կոլ.- Նշանակած 11 կոլ, ստացած 10 կոլ

Մարզիչ.- Ֆապիո Բափելլօ Խմբապետ.- Սերկէյ Իկնաշչիչ

Պաշտօնական տարագ.- Կարմիր

Ռուսիոյ ազգային խումբին մոնտիալներու մասնակցութեան պատմութիւնը կը սկսի 1990-ին, երբ փուլ կու գայ խորհրդային կայսրութիւնը: Ճիշդ է, որ քաղաքականապէս Ռուսիա նկատուեցաւ Խորհրդային Միութեան յաջորդը, սակայն ֆուտպոլի ՃԻՖԱ-ն Խորհրդային Միութեան ֆուտպոլը աւարտած նկատեց այդ երկրին փլուզումով: Հետեւաբար, ռուսերը համեստ անցելով մը կը ներկայանան 2014-ի մոնտիալին:

Ռուսերը այս մոնտիալին հասան առանց դժուարութեան: Անոնք դիւրութեամբ գերազանցեցին իրենց խմբակիցները:

Վերջին տարիներուն նկատելի է ռուսական ֆուտպոլին ապրած վերելքը: Ազգային



Անուն եւ Տարիք

- Իկոր Աքինֆէեւ (28)
- Վլատիմիր Կապուլով (30)
- Սերկէյ Իկնաշչիչ (34)
- Վասիլի Պերեզոլցքի (31)
- Տմիթրի Քոմպարով (27)
- Անտրէյ Եշչենքօ (30)
- Ալեքսէյ Քոզլով (27)
- Վլատիմիր Կրանաթ (26)
- Ճէորճի Չենիքով (23)
- Եւկենի Մաքէեւ (24)
- Եուրի ժիրքով (30)
- Ռոման Շիրոքով (32)
- Իկոր Տենիզով (29)
- Ալան Ծակոյեւ (23)
- Տենիս Կլուչաքով (27)
- Վիքթոր Ֆայզուլին (28)
- Ալեքսանտր Սամետով (29)
- Ալեքսէյ Պերեզոլցքի (31)
- Ալեքսանտր Անեուքով (31)
- Վլատիմիր Պիսթրով (30)
- Ալեքսանտր Քերժաքով (31)
- Ալեքսանտր Քոքորին (23)
- Մաքսիմ Կրիկորեւ (23)

Հաւաքական եւ Կոլ

- 66 մասնակցութիւն (0 կոլ)
- 10 մասնակցութիւն (0 կոլ)
- 94 մասնակցութիւն (5 կոլ)
- 75 մասնակցութիւն (3 կոլ)
- 20 մասնակցութիւն (1 կոլ)
- 9 մասնակցութիւն (0 կոլ)
- 8 մասնակցութիւն (0 կոլ)
- 4 մասնակցութիւն (0 կոլ)
- 3 մասնակցութիւն (0 կոլ)
- 1 մասնակցութիւն (0 կոլ)
- 60 մասնակցութիւն (0 կոլ)
- 41 մասնակցութիւն (12 կոլ)
- 41 մասնակցութիւն (0 կոլ)
- 30 մասնակցութիւն (8 կոլ)
- 25 մասնակցութիւն (3 կոլ)
- 16 մասնակցութիւն (4 կոլ)
- 14 մասնակցութիւն (3 կոլ)
- 51 մասնակցութիւն (0 կոլ)
- 77 մասնակցութիւն (1 կոլ)
- 47 մասնակցութիւն (4 կոլ)
- 78 մասնակցութիւն (24 կոլ)
- 19 մասնակցութիւն (5 կոլ)
- 3 մասնակցութիւն (0 կոլ)

Ակումբ

- Սէ. էս. Քա. Մոսկուա
- Տինամօ Մոսկուա
- Սէ. էս. Քա. Մոսկուա
- Սէ. էս. Քա. Մոսկուա
- Ս. Մոսկուա
- Անժի
- Տինամօ Մոսկուա
- Տինամօ Մոսկուա
- Սէ. էս. Քա. Մոսկուա
- Ս. Մոսկուա
- Տինամօ Մոսկուա
- Կրասնոտար
- Տինամօ Մոսկուա
- Սէ. էս. Քա. Մոսկուա
- Ս. Մոսկուա
- Չենիթ
- Լոքոմոթիւ
- Սէ. էս. Քա. Մոսկուա
- Չենիթ
- Անժի
- Չենիթ
- Տինամօ Մոսկուա
- Լոքոմոթիւ



խումբի մարզիչի պաշտօնին կը հրաւիրուին անուանի մարզիչներ: Ռուսական խումբերը եւրոպական մրցաշարքերուն սկսած են դառնալ դժուար մրցակիցներ, իսկ ազգային խումբը օր ըստ օր է կը բարելաւէ թէ՛ իր մակարդակը եւ թէ՛ իր արդիւնքները: Բնականաբար մեծ է մարզիչ Քափելլոյի ներդրումը ազգային խումբին յաջողութեան մէջ: Քափելլո փորձառու մարզիչ է եւ գիտէ ռազմավարութիւն մշակել ըստ

մրցակից կազմի: Պէտք է նշել նաեւ, որ ռուսերը աստղեր չունին իրենց կազմին մէջ: Մարզիկներուն ջախջախիչ մեծամասնութիւնը կու գայ ռուսական խումբերէ:

Ռուսիա իր առաջին մրցումը պիտի կատարէ Ասիոյ ներկայացուցիչ Հարաւային Քորէայի դէմ: Քափելլոյի տղաքը պէտք է գգոյշ ըլլան, որպէսզի անախորժ անակընկալի առջեւ չգտնուին: Երկրորդ մրցումը խմբակին ամէնէն կատարեալ ու զօրաւոր

կազմին՝ Պելճիքայի դէմ է: Այս մրցումին յաղթողը անպայմանօրէն կրնայ ապահովել Բ. հանգրուանի իր տոմարը: Այս պատճառով երկու կազմերն ալ պիտի ըլլան վճռական՝ յաղթանակ ապահովելու: Վերջին մրցումին ռուսերը իրենց ուժերը պիտի չափեն այճերիացիներուն հետ: Արաբները մոնտիալի ամէնէն անծանօթ եւ տկար կազմերէն են եւ դժուար թէ դիմանան ռուսական մեքենային դիմաց:

Ռուսերը իրենց նախորդ երկու մասնակցութիւններուն կանուխ հրաժեշտ տուած են մոնտիալներուն: Անոնք Քափելլոյի առաջնորդութեամբ մեծ յոյսեր ունին, որ պիտի կարենան առնուազն Բ. հանգրուանը անցնիլ: Յունիս 26-ի մրցումի աւարտին ռուսերը պիտի ուզեն իրենց դրօշը բարձր պահել, որպէսզի չորս տարի ետք անոնք բարձր ոգիով կազմակերպեն ու հիւրընկալեն մոնտիալը:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՔՈՐԷԱ



Մոնտիալի մասնակցութիւն.- 8 անգամ (1954, 1986, 1990, 1994, 1998, 2002, 2006, 2010)

Արդիւնքներ.- Չորրորդ դիրք (2002)

Մրցում: 28 մրցում՝ 5 յաղթանակ, 8 հաւասարութիւն, 15 պարտութիւն

Կուլ.- նշանակած 28 կուլ, ստացած 61 կուլ

Մարզիչ.- Յոնկ Միուկ Պօ

Խմբապետ.- Լի Չունկ Եոնկ

Պաշտօնական տարագ.- Կարմիր

Հարաւային Քորէա Ասիոյ ամէնէն յաջողած կազմն է: 1986-էն ի վեր ան իր մնայուն տեղը ապահոված է մոնտիալներուն, ինչ որ լաւագոյն ապացոյցն է իր մրցակիցները գերազանցող մակարդակին: 2002-ին, քորէացիք Ճափոնի հետ կազմակերպեցին մոնտիալը եւ նոյն մոնտիալին արձանագրեցին իրենց մեծագոյն յաջողութիւնը, երբ գրաւեցին պատուաբեր չորրորդ դիրքը: Քորէացիք այս մոնտիա-

լին հասան առանց դժուարութիւններու: Անոնք ճափոնցիներուն հետ միասին պիտի փորձեն բարձր պահել Ասիոյ դրօշը: Այս առաքելութեան համար մարզիչ Եոնկ իր տրամադրութեան տակ ունի բաւական փորձառու կազմ մը, որուն կարգ մը մարզիկները մաս կը կազմեն անգլիական եւ գերմանական ակումբներու: Քորէացիներուն աստղը՝ Արսենալի Փարք Չու Եոնկն է: Անոր գլխաւոր օգնականը պիտի ըլլայ



երիտասարդ եւ խոստմնալից Սոն Հէոնկ Մինը: Քորէացիք պիտի փորձեն օգտուիլ իրենց պանդուխտ ֆուլթայլիստներու փորձառութենէն եւ առնուազն ապահովել Բ. հանգրուանի իրենց տոմարը:

Քորէացիք կը գտնուին Լ. խմբակին մէջ, որ կը նկատուի ամէնէն հաւասարակշռուածը: Անոնք իրենց առաջին մրցումը պիտի կատարեն ռուսերուն դէմ, որոնք ցարդ անյաջող են մոնտիալներու ընթացքին: Բայց քորէացիք պէտք է նկատի ունենան նաեւ, որ ռուսական ֆուլթայլը կ'ապրի վերելք մը: Յաջորդ մրցումը արաբներուն դէմ է: Այս մրցումը հաւասարակշռուած մրցում է: Քորէացիք հարուստ փորձառութիւն ունին արաբական երկիրներու դէմ մրցելու, հետեւա-

բար անոնք կրնան նեղ կացութեան մատնել այճերիացիները: Պելճիքայի դէմ մրցումը պիտի ըլլայ ամէնէն դժուարը: Պելճիքացիք մոնտիալ վերադարձած են մեծ դոնէն եւ ունին մեծ ակնկալութիւններ: Նախապէս, երկու կազմերը իրարու հանդիպած են մոնտիալի ընթացքին եւ քորէացիք տեղի տուած են:

Ինչ ալ ըլլան Քորէայի արձանագրելիք արդիւնքները, փաստը այն է, որ քորէական ֆուլթայլը այսօր նուաճած է մակարդակ մը: Քորէացիներուն կը մնայ յաւելեալ թափ տալ այս մարզախաղին, որպէսզի յաջողին դառնալ ասիական առաջին երկիրը, որ կը խլէ տիտղոսը:



ORDEM E PROGRESSO